# Հայրենիք

1976

Ա

АЖ 140



ԼԳ
ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1976



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1976 թ. հունվարի 6)

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրելի հավատացյալներ,

Նոր տարվա այս լույս առավոտյան, Մենք՝ Հայրապետը ձեր, անհուն բերկրանքով բերում ենք ձեզ բոլորիդ մեծ ավետիսը աշխարհի Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հրաշալի Ծննդյան:

Իբրև լրումն օրինաց և մարգարեից, Որդին Աստուծո բարձունքներից իջավ երկիր և ծնավ որպես մարդ սուրբ Կույս Մարիամից՝ բոլոր մարդկանց, բոլոր ազգերի համար բաց անելու ճանապարհը ճշմարիտ կյանքի, ճանապարհը հոգիների փրկության, ճանապարհը սիրո և խաղաղության:

Ի՜նչ անիմանալի ու սքանչելի խորհուրդ: Ի՜նչ վեհ ու լուսապայծառ տեսիլք: Թեև ահա երկու հազար տարիներ եկել ու անցել են այդ անկրկնելի օրերից, սակայն մեծ հույսը հոգիների փրկության և հոյակապ տեսիլքը մի խաղաղ ու երջանիկ աշխարհի, այսօր էլ բոլոր մարդկային սրտերին խոսում են այնպես քաղցր, այնպես թարմ ու այնպես այժմեական, որ կարծեք նոր, մեր օրերին է բացվել երկինքը, հենց մեզ համար, մեր հոգնած ու ծարավի հոգիներին բերելու պատգամներն այդ փրկարար, տեսիլքներն այդ երազ: Ահա թե ինչու հույժ երջանիկ ենք ձեզ տալու ավետիսը ավետիսների, բարի լուրը Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության:

Եվ ինչքան խորհրդանշական է և իմաստալից, որ Քրիստոսի Ծնունդն ու Աստվածահայտնությունը ավետվում է աշխարհին համայն, նոր տարվա սեմին, ժամանակի մի նոր լուսաբացին, երբ իրար են հանդիպում անցյալն ու գալիքը: Անցյալն իր հետ բերած բոլոր իրագործումներով, նվաճումներով ու զարգացումներով, բայց ավաղ նաև՝ իր դառնություններով, հուսախաբություններով ու մեղանչումներով:

Կանգնած այսօր, նոր տարվա սեմին, Մենք ողջունում ենք և օրհնում անցյալի լավն ու բարին, բայց և տխրում ու ցավում նույն անցյալի՝ աշխարհին բերած չարիքների և ողբերգությունների համար:

Կանգնած այսօր, նոր տարվա սեմին, մեր բոլորի տկար, բայց հուսացյալ հոգիները, վերստին զորացած ու ներշնչված սուրբ Ծննդյան շնորհներով ու երկնառաք պատգամներով, վերանորոգում են իրենց ուխտը երկնքի հետ, այն պայծառ հավատքով, թե ճշմարիտ աղբյուրը բարյաց, ճշմարիտ ճանապարհը սիրո և խաղաղության, ճշմարիտ գրավականը մարդկանց ու ազգությունների երջանիկ համակեցության, սկիզբ է առնում այն գերագույն գիտակցությունից, թե բոլոր մարդիկ անիստիր եղբայրներ են հարազատ, իբրև զավակները միևնույն Արարիչ Հոր Աստուծո:

Կանգնած այսօր, նոր տարվա սեմին, աղոթենք և ամեն մեկս մեր միջոցներով, մեր դիրքերից գործենք անհոգնաբեկ վճռական եռանդով, որ գալիքը չպետք է վարակվի անցյալի մեղքերով, անցյալի խարխափումներով, որ արմատախիլ պետք է արվեն բոլոր տեսակի արմատները չարիքին, որոնք թունավորում են հոգիները մարդկանց, թունավորում հարաբերությունը միջազգային: Այդպիսի չարիքներ են մեր օրերին, մանավանդ ազգամիջյան ատելությունները, ընկերային անարդարությունները, ազգայնական եսամոլություններն ու ցեղապաշտական խտրականությունները, անսանձ սպառազինություններն ու ոմանց՝ արյուն թափելու հիվանդագին հոգեվիճակը, որ երբեմն անհավատալի չափերով զարգանում է աշխարհի տարբեր շրջաններում, անմեղ մարդկանց կյանքը խլող անաբեկչական անմարդկային արարքներով: Կարելի չէ այլևս հաշտվել նման չարիքների, նման ողբերգությունների հետ: Տեր Աստված ամենակարող, օգնության հասիր մեր աշխարհին, ավելի լույս տուր մարդկանց մտքերին և ավելի խաղաղություն նրանց հոգիներին, բոլորին անիստիր: Եվ թող աշխարհի բոլոր մարդասեր ու հառաջդիմատենչ մարդիկ ու ժողովուրդներ, մեկտեղեն իրենց գաղափարական-բարոյական բոլոր զենքերը, բոլոր հնարավորությունները, և անխորտակելի պատնեշ կանգնեցնեն՝ ի պաշտպանություն արդարության, ազատության և խաղաղության սկզբունքների, սկզբունքներ, որոնք մեզ քրիստոնյաներիս համար հանդիսանում են կրոնական հավատքի և ավետարանական սիրո պատգամից ճառագայթող՝ ապրելու և գործելու հրամայականներ:

Կանգնած այսօր, նոր տարվա սեմին, Մեր գոհությունն ենք վերառաքում երկինք, որ մեր օրերի խռովահույզ աշխարհում, մեր մայր երկիրը հաստատ ու աներեր կամքով գտնվում է ժողովուրդների խաղաղ գոյակցության գաղափարի պաշտպանության դիրքերի վրա, բազմազգ ազգությունների եղբայրական մի մեծ ընտանիքում, աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների՝ լայն զանգվածների կողքին:

Հայ ժողովրդի անցյալ դարերի պատմության ողբերգական փորձը առավել հրամայական է դարձնում մեզ համար ազգությունների բարեկամության և համերաշխության սկզբունքները: Ինչպե՞ս կարող ենք մոռացության տալ անլուր ողբերգությունները, որոնք բարեպաշտ, աշխատասեր հայ ժողովրդի կյանքի բաժինը եղան դարեր շարունակ և մանավանդ 1915-ի և 1916-ի սև տարիներին՝ իբրև հետևանք կայսերապաշտական եսամոլ շահերի և անխիղճ բռնակալների քաղաքականության: Մեր անցյալի ահարկու փորձություններից հետո, ինչքա՞ն մխիթարական է մայր երկրի բոլոր հայերիս և արտասահմանի Մեր զավակների համար, որ թեև աշխարհում կան այսօր էլ հրդեհված շրջաններ, կան տառապող ազգեր, սակայն մեր հայրենաբնակ ժողովուրդն իր վերածնած հայրենիքում ապրում է ու աշխատում խաղաղ ու անվտանգ պայմանների մեջ՝ ազատորեն զարգացնելով ու ամ-

բացնելով իր քաղաքական, տնտեսական և ազգային մշակութային կյանքի հիմքերը, տիրապես վստահ ու լավատես դեպի իր վաղվա օրը, դեպի իր Է՛լ ավելի լուսավոր ապագան:

Մենք և մեր եկեղեցու բոլոր նվիրյալ սպասավորները Մեր սեպուհ պարտքն ենք նկատում միշտ կողքին մնալ մեր ժողովրդին և միշտ նեցուկ՝ մեր երկրի մնայուն ու տևական շահերին, և միշտ աղոթող ու անձանձրույթ գործող՝ ի խնդիր խաղաղության ու ազգությունների համերաշխության դատի վերջնական հաղթանակին, որը հանդիսանալու է նաև հաղթանակը մարդացյալ Աստուծո սուրբ Ավետարանին, հաղթանակը մեր քրիստոնեական հավատքին:

Սիրեցյալ հոգևոր զավակներ Մեր,

Կանգնած այսօր, նոր տարվա սեմին, շնորհավորում ենք ձեզ բոլորիդ և մաղթում, որ լույս շնորհներովը Քրիստոսի սուրբ Ծննդյան, լուսով լցվի ձեր կյանքն ու հոգին ամբողջ, և դուք դառնաք լուսո որդիներ, միշտ պատրաստ նվիրվելու շինարար աշխատանքի, բարի գործի, եկեղեցաշեն ու հայրենանվեր առաքելության: Դուք բոլորդ, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ողջ մնացեք ու քաջառողջ, միշտ զորացյալ սուրբ Հոգվով, միշտ ամուր կանգնած ձեր նախնյաց հավատքի վեմին վրա և հավետ օրհնյալ ի Տյառնե. ամեն:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:



## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՀԵՐ

Պատմության գիրկն անցավ ի մասնավորի մեր եկեղեցու և ժողովրդի համար նախ 1915 թվականի ողբերգական և ապա հաջորդ տարիների հերոսական ու պատմական իրադարձություններով հարուստ Ի դարի երեք քառորդը:

Նոր տարի է, 1976 թվականը:

Ի՜նչ գեղեցիկ ու սրտառուչ է Նոր տարվա լուսաբացին հայրենի հողի վրա, քո ժողովրդի ծոցում, հարազատներով շրջապատված, հոգիդ սիրով, թևավոր երազանքներով, գեղեցիկ նպատակների իրագործման վսեմ զգացումով լի, բարի լույսով բացված տեսնել պայծառ ու խաղաղ երկինքը հայոց:

Արդարև, իմաստալից է Ամանորը, որպես նոր ժամանակի տոն իր խոհերով, իր խորհրդով և իր լիառատ սեղաններով:

Քրիստոնեական մտածողության համար երբեք էլ պատահական չէ Ամանորի և սուրբ Ծննդյան տոների այս հաջորդականությունը, **ժամանակի** և **կյանքի** խորհուրդների այս ներքին աղերսը:

Քրիստոսի ծնունդը համայն մարդկության երջանկության, եղբայրության համընդհանուր ներդաշնակությունն է, **կյանքի** հաղթական մի պահը, հավերժական ու անփոփոխ **ժամանակի** մեջ ապրված մի ակընթարթ, աստեղային մի ժամ, Ավետարանի պատգամների լույսի ներքո:

Ամանորն ու սուրբ Ծնունդը միաժամանակ մարդկությանը հասցեագրված սրբազան մի կոչ է, նորոգված, պայծառակերպված, ավելի բարձր ու «առավել» կյանքով ապրելու և աշխատելու համար:

Լուսե գալիքի նկատմամբ հույսերի, երազանքների, հավատի մեջ աշխարհն է՛լ ավելի է գեղեցկանում, իսկ մարդը, իր հուզական, զգացական և իմացական աշխարհով, է՛լ ավելի է արիանում, գեղեցկանում և բյուրեղանում:

**«Եվ ինչքա՜ն խորհրդանշական է և իմաստալից,**—նշում է Հայոց Հայրապետը սույն թվականի հունվարի 6-ին Ծննդյան Իր գեղեցիկ քարոզում,—**որ Քրիստոսի Ծնունդն ու Աստվածահայտնությունը ավետվում են աշխարհին համայն, նոր տարվա սեմին, ժամանակի մի նոր լուսաբացին երբ իրար են հանդիպում անցյալն ու գալիքը: Անցյալը իր հետ բերած բոլոր իրագործումներով, նվաճումներով ու զարգացումներով, բայց սվաղ նաև՝ իր դառնություններով, հուսախաբություններով ու մեղանչումներով»:**

Հավատում ենք, որ կգա լույսի և մութի համընդհանուր թագավորությունը, եղբայրությունը տիեզերական, Վեհափառ Հայրապետի քարոզի պատկերավոր խոսքերով ասած՝ **«Ճշմարիտ աղբյուրը բարյաց, ճշմարիտ ճանապարհը սիրո և խաղաղության, ճշմարիտ գրավականը մարդկանց և ազգությունների երջանիկ համագործակցության, որը սկիզբ է առնում այն գերագույն գիտակցությունից, թե բոլոր մարդիկ անխտիր եղբայրներ են հարազատ, իբրև զավակները միևնույն Արարիչ Հորն Աստուծո»:**

Անցնող երկու հազար տարիների մարդկության կյանքի և քաղաքակրթության փորձը ցույց է տվել, որ Ավետարանի ճշմարտությունները միայն կարող են լուսավորել մարդկանց սրտերը, ազնվացնել ու խաղաղեցնել նրանց խռովահույզ հոգիները:

**«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»:**

Այս խոսքերով և այս սրբազան սպասումներով հայ ժողովուրդը և՛ մայր հայրենիքում, և՛ սփյուռքի տարածքի վրա, գիտակից և լուրջ պատասխանատվության զգացումով, սրտառուչ լավատեսությամբ ու անկոտրում հավատով, բացում է ահա մի անգամ ևս **նո՛ր ժամանակների** և **նո՛ր կյանքի** սպիտակ մատյանը, որը լցվելու է հայրենանվեր, մարդասիրական, ազնիվ ու ստեղծագործ աշխատանքներով:

1975 թվականը հայ եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և մեր վերածնված Հայոց աշխարհի համար ա՛յդ իմաստով եղավ աշխատանքով, ստեղծագործություններով հարուստ, պատմական մի տարի:

1975 թվականը եկեղեցական-ազգային տեսակետից հանդիսացավ հիշատակության արժանի բեղմնավոր մի տարի նրանով, որ հայ եկեղեցին, իր նվիրապետական Աթոռներով, թեմական կազմակերպություններով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությամբ, շարունակեց իր նախահնամական հոգևոր, եկեղեցական ու հայրենասիրական առաքելությունը մեր ժողովրդի կյանքում:

Պատմական նշանակություն ունեցան 1975 թվականի մայիս-հուլիս ամիսներին Հայոց Հայրապետի հովվապետական այցելությունները Ռումինիա, Բուլղարիա, Լոնդոն, Փարիզ, Ամման և Երուսաղեմ: Սույն այցելությունով է՛լ ավելի ամրապնդվեցին նաև Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունները, էկումենիկ ոգով, քույր եկեղեցիների հետ:

Մայր Աթոռի օրհնությամբ սփյուռքում հայ եկեղեցին է հիմնական ու համազգային կենտրոնը, որին վստահված է նաև ազգային գոյատևումին հսկելու և նորահաս մեր նոր սերնդին քրիստոնեական ու հայրենասիրական դաստիարակություն ջամբելու պատասխանատու և պատվավոր առաքելությունը, մեր ժողովրդի գերագույն նպատակների, ազգային իդեալների իրականացման ճանապարհի վրա:

Սփյուռքի հայությունը հեռու է իր հայրենիքից, կորցրել է իր ոտքերի տակ հայրենի հողի կենսունակությունը և կառչած է **հոգեկան ուժերին՝ եկեղեցի, դպրոց, մամուլ, մշակույթ,** հայ մնալու համար: Սփյուռքը հերոսական ջանքեր է ի գործ դնում այս բնագավառում:

Սփյուռքում այս տարի էլ ամեն տեղ տոնական ու անխափան հնչեցին հայ եկեղեցու զանգերը և բաց ու պայծառ մնացին մեր աղոթքի տաճարները, որպես հաղթանակները մեր ժողովրդի ոգեկան նվիրումի, հրաշագործ զորության և անկոտրում հավատքի: Բաց ու պայծառ մնացին նաև մեր կրթական օջախների դռները հայ մանուկների առաջ:

Հայ ժողովուրդն իր մայր հայրենիքում, իր հարազատ պետականության ապահով ու խաղաղ պայմաններում նոր տարին դիմավորում է արդար հպարտության, շինարար և ստեղծագործ աշխատանքի պայմաններում՝ հրաշքի համազոր սիրագործություններ, նվաճումներ արձանագրելով իր հոգևոր նոր կյանքի կերտման բոլոր բնագավառներում:

1975 թվականը մայր հայրենիքի համար եղավ արդարորեն հաղթանակների, կառուցումների, խիզախումների հարուստ տարի: Բազում երազանքներ իրականություն դարձան հերոսական աշխատանքներով: Ծարք մտան մշակույթի ու գիտության նոր օջախներ, արդյունաբերական հսկաներ, գործարաններ, էլեկտրակայաններ: Առատացավ հայրենական, համայնական դաշտերի բերքատվությունը: Ամբարվեց հազար բերք ու բարիք: Այսպիսով մեր հայրենիքի հոգևոր, տնտեսական վերածնընդյան խոստումնալից տարեգրության մեջ արձանագրվեց մի նոր ու փառավոր էջ:

Երջանիկ ու բախտավոր է այն ժողովուրդը, որը հավատքով, վստահությամբ և թևավոր երազանքներով է նայում նոր տարուն:

Ու մեր ժողովուրդը նոր տարվա սեմին լի է հզոր եռանդով՝ բացելով նոր հնարավորությունների գեղեցիկ ու խոստումնալից հեռանկարների դռները՝ հայրենասիրական ոգևորությամբ շարունակելու իր հաղթական երթը՝ ի բարօրություն հայրենյաց, հասնելու համար ստեղծագործական իր բոլոր ուժերի նոր վերելքին, հանուն իր հայրենիքի ապագա հզորության, խաղաղության ու բարօրության:

Անցնող տարվա ընթացքում հայ ժողովուրդը հայրենի հողի վրա, համաժողովրդական կազմակերպվածությամբ ու արժանավայել լրջությամբ նշեց **հայ տառապանքի ու մեր հավաքական նահատակության 60-ամյակը** և իր գլուխը խոնարհեց Ապրիլյան նահատակների անմոռաց հիշատակի առաջ:

Անցնող տարում հայ ժողովուրդը երախ-

տագիտության և հպարտության զգացումով նշեց նաև իր **ազգային վերածնդյան 55-ամյակը՝** Հայաստանում սովետական կարգերի հաստատման պանծալի տարեդարձը, ինչպես նաև **Հայրենական պատերազմում տարած Մեծ հաղթանակի 30-ամյակը:**

1975 թվականի դեկտեմբերի 19-ին քաղաքամայր Երևանի ճարտարապետական կերպարը գեղեցկացնող ու հարստացնող **քաջն Վարդան Մամիկոնյան** զորավարի մոնումենտալ, պղնձակոփ հուշարձանը և **Գառնիի** 2000 տարվա հեթանոսական տաճարի վերականգնումը խորհրդանշեցին «մեր վերածնած ժողովրդի ապրելու կորովն ու հաստատակամությունը»:

Անցնող տարին եղավ նաև խաղաղության տարի, խստումնալից ու հուսադրիչ հեռանկարներ բացվեցին աշխարհի խաղաղության, Եվրոպայի անվտանգության և համագործակցությանը նվիրված խորհրդակցությամբ, ինչպես նաև Հելսինկիում Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցությունում ընդունված եզրափակիչ պատմական ակտով, ակտ, որը ոչ միայն Եվրոպայի մայրցամաքի ժողովուրդների խաղաղության, անվտանգության և լարվածության թուլացման ամուր ու հուսալի հիմքերն էր դնում, այլ նաև հանդիսանում էր կարևոր մի ավանդ՝ ընդհանուր խաղաղության ամրապնդման գործում ողջ աշխարհում:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Հայոց աշխարհը և հայ ժողովուրդը 1976 թվականը դիմավորում են ստեղծագործական նոր եռանդով լեցուն, հայրենասիրական բարձր տրամադրությամբ և ավելի քան երբեք հզոր, միասնական հավատով լի ու կենսունակ կանգնել են լուսե գալիքի նկատմամբ պայծառ և խանդավառ հեռանկարների առաջ:

1976 թվականը մեր եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի համար կնշանավորվի հոբելյանական, համազգային հանդիսություններով և իրադարձություններով:

**1976-ի սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը,** Վարագա ս. Խաչի տոնին, կկատարվի Մայր տաճարում, ավանդական շքեղ հանդիսությամբ, **սրբալույս մեռոնի օրհնություն:**

**Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը,** Վեհարանում, համազգային շուքով կկայանա **հանդիսավոր նիստ՝** նվիրված **Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակին,** հանդիսություններ, որոնց ներկա կլինեն մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պատգամավորներ, բազում ուխտավորներ և քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Մայր Աթոռում կազմվել է այս առթիվ հոբելյանական կենտրոնական հանձնաժողով:

«Ուրախ լեր, ս. Էջմիածին», «Քեզ պարծի այսօր», ո՛վ Հայրապետ Հայոց, «Եկեղեցին Հայաստանեայց»:

Գալդ բարի, Նոր տարի:

1976 թվականը թող լինի, հավերժական ս. Էջմիածնի օրհնության ներքո, հայ եկեղեցու համար հոգևոր, եկեղեցական նոր վերազարթոնքի, ազգային միասնության և համերաշխության տարի:

Այս զգացումներով և խոհերով, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է բովանդակ հայության Ամենորն ու ս. Ծնունդը: Թող **«լույս շնորհներով Քրիստոսի սուրբ Ծննդյան, լույսով լցվեն ձեր կյանքն ու հոգին ամբողջ և դուք դառնաք լուսո որդիներ, միշտ պատրաստ նվիրվելու շինարար աշխատանքի, բարի գործի, եկեղեցաշեն ու հայրենանվեր առաքելության»,** բարեմաղթում է Հայոց Հայրապետը:

Ամեն: Եղիցի, եղիցի և եղիցի:

Ա. Հ.

# Բոլոր Եկեղեցիներ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն**
**ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ** (Հռոմ),

**Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ** (Ստամբուլ),

**Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ՊԻՄԵՆԻՆ** (Մոսկվա),

**Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ** (Ալեքսանդրիա),

**Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ** (Երուսաղեմ),

**Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ** (Ալեքսանդրիա),

**Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ** (Դամասկոս),

**Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ** (Ադիս-Աբեբա),

**Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆ Ա-ԻՆ** (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի և համայն Արևելքի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն
կարդինալ ՊՈԼ ՄԵՈՒՇԻԻՆ (Բեյրութ),

Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),

Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),

Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ (Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),

Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),

Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),

Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),

Մարսելի արքեպիսկոպոս, գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄՈՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ (Նյու-Յորք),

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Նոր տարվո այս լուսաբացին մեր սուրբ Աթոռից ուրախ ենք Ձեզ ողջունելու ավետիսով սուրբ Ծննդյան Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի, որ իջավ երկիր և ծնավ որպես մարդ ի Մարիամա սրբո Կուսեն, բերելու համար աշխարհին և մարդկության համայն՝ փրկագործ պատգամները խաղաղության և մարդասիրության:

Մեծ խորհուրդը հրաշալի այս Ծննդյան, այսօր էլ մեր հուսացյալ հոգիներին բերում է՝ մխիթարություն, ներշնչանք ու երանության տեսիլք, մեր օրերին մանավանդ, երբ մարդկային աշխարհը տակավին հեռու է վերջնական ու տևական խաղաղ մի կյանքի նավահանգստից: Սակայն հաստատ լավատեսությամբ Մենք մնում ենք Ձեզ հետ միասնաբար մշտարթուն աղոթող ու գործող, վասն խաղաղ գոյակցության աշխարհի բոլոր ազգությունների և պետությունների:

Ջերմապես աղօթում ենք որ Փրկչի հրաշալի Ծննդյան շնորհները առատապես բաշխվեն Ձեր պատմական սուրբ եկեղեցու հոգևոր սպասավորների և հավատացյալ ժողովուրդի զավակներին, ի հոգվո շինություն նրանց կյանքի ու աշխատանքի:

Այս երջանիկ առիթով հաճեցեք ընդունել նաև Մեր ամենաբարի մաղթանքները որ երկար տարիներ տակավին փառքով պսակեք Ձեր սուրբ առաքելությունը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:**

**Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս,**

**Նոր տարվո այս լուսաբացին, երջանիկ ենք Ձեզի բերելու ավետիսը սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության Տյառն մերոյ Հիսուսի Քրիստոսի, որ իջավ երկիր ու ծնավ որպես մարդ ի Մարիամա սրբո Կուսեն, բերելու համար աշխարհին և մարդկության համայն՝ փրկագործ պատգամները խաղաղության և մարդասիրության:**

**Մեծ խորհուրդը հրաշալի այս Ծննդյան, այսօր ալ մեր հուսացյալ հոգիներուն կբերե մխիթարություն, ներշնչանք ու երանության տեսիլք, մեր օրերուն մանավանդ, երբ մարդկային աշխարհը տակավին հեռու է վերջնական ու տևական խաղաղ կյանքի մը նավահանգիստեն: Սակայն հաստատ լավատեսությամբ Մենք կմնանք մշտարթուն աղոթող ու գործող՝ վասն խաղաղ գոյակցության աշխարհի բոլոր ազգություններու և պետություններու:**

**Սիրո և խաղաղության ոգին թող իշխե նաև մեր եկեղեցական համայնքներեն ներս և մեր ժողովուրդի զավակները թող համերաշխ գործակցությամբ**

ապրին ու ձեռք-ձեռքի տված զարգացնեն իրենց հոգևոր ու մշակութային կյանքը, հետզհետե առավել բարի ու շինարար արդյունքներով:

Ջերմապես կաղոթենք Միածնաէջ Մայր տաճարիս սուրբ Սեղանի առաջ, որ մեր Փրկչի հրաշալի Ծննդյան շնորհները առատապես բաշխվին տիրախնամ Աթոռիդ միաբանության և համայն հայ հավատացյալ ժողովուրդին, ի հոգվո մխիթարություն բոլորին և ի հաջողություն անոնց քրիստոսասեր ու եկեղեցաշեն գործոց:

Սուրբ Ծննդյան ուրախությամբ կմաղթենք Ձեզի, սիրեցյալ եղբայր, մշտատև քաջառողջություն և միշտ պտղառատ ու շինարար արդյունքներ Ձեր նվիրական առաքելության ճանապարհի վրա:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

**ՎԱՉԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





## ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ Բ. ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Հանուն Հայաստանյայց եկեղեցու և հավատացյալ ժողովրդի սրտանց շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և մաղթում Ձեզ քաջառողջություն և հայրենանվեր գործունեության երկար արդյունավետ տարիներ:

Մաղթում ենք, որ նոր տարին լինի խաղաղության տարի աշխարհի բոլոր ազգերի համար, նաև նորանոր շինարար նվաճումների տարի մեր վերածնված մայր հայրենիքի համար՝ սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում:

Խորին հարգանք՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
**Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս**
**Ամենայն Հայոց**

Մայր Աթոռ ս. Էջմիածին

*
* *

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Նոր տարվա սեմին երջանիկ ենք Ձեզ շնորհավորելու և հանուն հայ եկեղեցու ու հավատացյալ ժողովրդի Ձեզ մաղթելու արևշատ ու քաջառողջ տարիներ և միշտ հաջողություններ Ձեր հայրենանվեր աշխատանքի ճանապարհին:

Նոր տարին թող լինի կառուցման ու հառաջդիմության տարի մեր մայր երկրի ու ժողովրդի համար:

Նոր տարին թող լինի բարի կամեցողության և խաղաղ գործակցության տարի հանձն աշխարհի համար:

**ՎԱԶԳԵՆ Ա**
**Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս**
**Ամենայն Հայոց**

Մայր Աթոռ ս. Էջմիածին

*
* *

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Խորապես շնորհակալ եմ Նոր տարվա առթիվ ինձ հղած շնորհավորանքների և բարեմաղթությունների համար: Իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեր Նոր տարին: Կամենում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն և երջանկություն՝ մաղթելով, որ նոր տարին լինի սովետական հայրենիքի և ժողովրդի հետագա բարգավաճման, ժողովուրդների խաղաղության, բարեկամության և խաղաղ համագործակցության տարի:

**Բ. ՍԱՐԿԻՍՈՎ**
**Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության**
**նախագահ**

Երևան

*
* *

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքները և անկեղծ բարեմաղթությունները: Սրտանց կամենում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն և նոր հաջողություններ Ձեր ազգային-հայրենասիրական գործունեության մեջ: Թող նոր տարին լինի մեր հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղության տարի, բոլոր ժողովուրդների բարեկամության ու խաղաղ համագործակցության տարի:

Խորին հարգանքով՝

**Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր**
**հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ**

Երևան





# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

**Հունվարի 6-ին, երեքշաբթի.—Տօն Ծնընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Առավոտյան Մայր տաճարում, ողջ միաբանության և ուսանողության մասնակցությամբ, պաշտվում է ս. Ծննդյան ժամերգությունը:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը մատուցելու:

Ս. Սեղանին սպասարկում են տ. Տիրան, տ. Թորգոմ և տ. Մոմիկ աբեղաները, Մայր Աթոռի սարկավագաց ողջ դասը:

Հակառակ ձյունախառն եղանակին, Մայր տաճարը լիքն է ուխտավոր և հավատացյալ բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ Հայոց Հայրապետը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» բնաբանով (Հայոց Հայրապետի՝ Ծննդյան գեղեցիկ և բովանդակալից քարոզը տպվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Կիրակի օրը, երեկոյան ժամը 23-ին, Վեհափառ Հայրապետի՝ Ծննդյան սույն քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Ս. պատարագի ավարտին ավանդական հանդիսությամբ կատարվում է Զրօրհնյաց կարգը՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի մկրտության՝ ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Այնուհետև Վեհարանի ընդունարանում Հայոց Հայրապետն ընդունում է միաբանության, Մայր Աթոռի պաշտոնեության, Մայր տաճարի երգչախմբի, ուխտավորների և հավատացյալների սրտագին շնորհավորանքներն ու բարեմաղթությունները ս. Ծննդյան տոնի առիթով և վերջում տալիս Իր օրհնությունը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեզ և մեզ մեծ աւետիս»:





## ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Նոր տարվա դիմավորումը Ղազարապատի վանական սեղանատանը**

Այս տարի էլ Ամանորի և ս. Ծննդյան տոներին նվիրված հանդիսությունները Մայր Աթոռում կատարվեցին ավանդական շուքով, սրտագին մթնոլորտում և անխառն ուրախությամբ:

Ղազարապատի վանական սեղանատանը, ամանորյա զվարթ սեղանների շուրջ, համախմբված էին Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռի միաբանության ու Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի ղեկավար պաշտոնեությունը, Մայր Աթոռում իրենց պարտքը կատարած աշխատանքի մարդկանց արդար խղճով և գոհունակությամբ, Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությամբ ճանապարհելու անցնող տարին, որն իրապես եղավ հոգևոր, եկեղեցական, մշակութային ու շինարարական իրադարձություններով հարուստ տարի, և վառ հույսերով, անկոտրում հավատով ու լավատեսությամբ, գալիքի նկատմամբ պայծառ երազանքներով ողջունելու նոր տարին, որը բացվում է բոլորի առաջ որպես նոր կյանքի և աշխատանքային սխրանքների սպիտակ մատյան:

**Դեկտեմբերի 31-ին, չորեքշաբթի.**

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը մուտք է գործում վանական սեղանատուն, որը զարդարվել է Նոր տարվա հատուկ պայծառ լույսերով, տոնածառով և երփներանգ թղթե ծաղիկներով:

Հայոց Հայրապետի մուտքը ողջունվում է բոլոր ներկաների սրտագին ծափողջույններով և երախտագետ ժպիտներով:

Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն Ամանորի սեղանն օրհնում է Հայոց Հայրապետը:

Սեղանների շուրջ ստեղծվում է Ամանորի խոհերով, մտորումներով օծուն վանական ջերմիկ մթնոլորտ:

Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների Նոր տարին շնորհավորում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը.

«Ամանոր է: Խնդության, հրճվանքի օր, մտորելու, տխրելու, ուրախանալու, մի նոր եռանդով կյանքի հորձանքն ի վեր մաքառելու ուխտով գոտեպնդվելու օր:

Մի քանի ժամ ևս, ու պատմության գիրկը է անցնելու մեզանից յուրաքանչյուրի կյանքից մի տարի ևս: Այս պահին ուրախանում է և՛ ծերունին, և՛ երիտասարդը, և՛ մանուկը՝ վերանորոգվող կյանքի խորհրդին ի տես: Նրանք այսօր ի մի են բերում երազանքների իրականացման ճանապարհին իրենց ձեռք բերած հաջողությունները

և դառնություն ապրում՝ ծրագրերի և իրականացած արդյունքների մեջ տեսնելով բաց կողմերը:

Կամոքն Աստուծո, այս տարի ևս մեր ժողովուրդը հայրենի երկրում և սփյուռքի տարածքի վրա խաղաղությամբ անցկացրեց հոգևոր-եկեղեցական, մշակութային, տնտեսական արդյունավետ մի տարի:

Վեհափառ Տեր, քանի որ Նոր տարին հաշվեհարդարի օր է, մեր նվաճումներով ոգևորվելու, ուրախանալու, մեր վրիպումներով տխրելու օր, այս առիթով Ձերդ Սրբությանը կարող ենք վստահեցնել, որ Մայր Աթոռ ս. Էջմիածնի և մեր հավատացյալ ժողովրդի սիրտը հանդիսացող Էջմիածնի հոգևոր ճեմարանը, պայմանների ընձեռած չափով, տեսչությունը, դասախոսական կազմը Ձերդ Սրբության գլխավորությամբ անմնացորդ նվիրումով կարելին արեցին՝ անցյալ տարին ավելի արդյունավետ ուսումնական տարի դարձնելու համար:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն իր մանկավարժական փորձն ի սպաս է դրել մեր խնամքին հանձնված աշակերտներից կերտելու մեր եկեղեցուն պիտանի ապագա սպասավորներ:

Մի քանի օր առաջ, դեկտեմբերի 25-ին, ս. Ստեփանոս նախավկայի տոնի օրը, Բ լսարանի մեր ուսանողներից յոթ հոգի սարկավագ ձեռնադրվեցին, իսկ դրանից մեկ օր առաջ այլ դասարանների ուսանողներից երկուսը ուրարակրի և ութը դպրության աստիճաններ ստացան:

Հավատում ենք, որ նրանցից շատերն ապագայում ընդգրկվելու են եկեղեցու սպասավորների շարքերը՝ ուրախացնելով Ամենայն Հայոց Հայրապետին և մեր ժողովրդին:

Թող նոր տարին մարդկությանը բերի լույսի, հույսի շողեր, խաղաղություն՝ խռովահույզ երկրների ժողովուրդներին:

Այսօր, Վեհափառ Տեր, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար Ձեր շուրջը համախմբվելու ու մեր ուխտերը վերանորոգելու առիթ է:

Թող Աստված Ձեզ երկա՜ր ու երկա՜ր կյանք պարգևի՝ ավելի արդյունավորելու համար Ձեր հայրապետական կյանքի շրջանը:

Այս զգացումներով և մտածումներով թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչության անունից շնորհավորել Ձեր Նոր տարին:

Կեցցե Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Կեցցե ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Կեցցե մեր բոլորիս սիրելի Ամենայն Հայոց Հայրապետը»:

Բոլոր ներկաները հոտնկայս և միասիրտ ու միախոհ երգում են «Էջ Միածինն ի Հօրէ» Մայր Աթոռի հիմնը:

Ի դիմաց միաբանության, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին և առաջարկում բաժակ բարձրացնել Նորին Սրբության կենացը, Նրա եկեղեցաշեն, հայրենանվեր ու խաղաղասիրական գործունեության հաջողության համար:

Ճեմարանի սաները երգում են Հայրապետական մաղթերգը:

Նոր տարվա ողջույնի և շնորհավորական խոսք է ասում, ի դիմաց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, Սամվել Անթոսյանը:

Հանուն ճեմարանի ուսանողության, Հայոց Հայրապետին ուղղյալ շնորհավորանքների և որդիական երախտագիտության հետևյալ ողերձն է կարդում Բ լսարանի ուսանող Արծրուն սրկ. Ավետիսյանը:

«Մարդկանց համար անհասանելի ու անպարփակելի ժամանակը սանձահարելու և տիրելու համար մարդը ստիպված է եղել նրան բաժանել, որպեսզի տիրի: Եվ այդ բաժանումներից ամենախորհրդավորն ու գեղեցիկը տարիների բաժանումն է:

Այս աստվածադիր ավանդության նախօրյակին բոլոր մարդիկ իրենց մտքում հանրագումարի են բերում այն ամենը, որ տեղի է ունեցել իրենց հետ ընթացիկ տարում:

Կյանքում ամեն մարդ ունի նպատակ և ձգտում, որ այն իրականանա: Բայց հասնել երազած նպատակին, նշանակում է՝ անցնել երկար ու ձիգ մի ճանապարհ, որի վրա սփռված են բազմաթիվ դժվարանց խոչընդոտներ: Բայց ինչպես քրիստոնեական գերագույն ճշմարտությունն է ասում, պետք է ունենալ հույս, հավատ և սեր: Այս երեքը հաջողության հասնելու այն նախապայմաններն են, որոնցով սկսվում է նպատակի իրագործումը: Եվ մենք հույսով ենք, որ կարդարացնենք մեզ վրա դրված հույսերը:

Մենք՝ ուսանողներս, նույնպես ուրախ ենք, որ հանձնել ենք մեր կիսամյա քննությունները և այժմ պատրաստ ենք զգում մեզ՝ մտնելու նոր տարվա դռնից ներս, նոր երազներով ու ձգտումներով:

Մենք այժմ շնորհավորում ենք Ձեր Նոր տարին, Վեհափառ Տեր, և ցանկանում Ձեզ արևշատություն և Ձեր սանձահարած ա-

կրնթարթին՝ հավիտենական ժամանակի մեջ փայլ ու պայծառություն:

Վեհափառ Տեր, թույլ տվեք ճեմարանի ուսանողության անունից համբուրել Ձեր հայրապետական սուրբ Աջը՝ բերելով մեր խոնարհ աղոթքները Ձերդ Վեհափառությանը՝ ստանալու համար Ձեր հայրապետական օրհնությունները»:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական կոկիկ մի հայտագիր՝ խինդով ու ծիծաղով լցնելով բոլոր ներկաների հոգիները: Հայտագրի հաջող համարներից մեկն էր նաև սրամիտ, երգիծական «կաղանդչեքեր»-ը, որ գրել էր Բ լսարանի ուսանող Լևոն սրկ. Բաղդասարյանը:

Հանդիսության ավարտին խոսք է առնում Հայոց Հայրապետը՝ շեշտելով, որ Ինքը սիրով և գոհունակությամբ եկավ Ամանորին նվիրված սույն հանդիսությանը՝ բերելու Իր հայրական ողջույնն ու օրհնությունը բոլորին և Իր գնահատանքը՝ օրվա առիթով գործադրված գեղարվեստական բաժնի ծրագրին:

Այնուհետև Հայոց Հայրապետը հայտարարում է, որ լավատեսությամբ ու պայծառ հավատքով բացենք նոր տարվա դռները: Մեր հաջողության, գոհունակության առաջին գրավականը մեր մայր հայրենիքն է: Գոհ ենք 1975 թվականի արդյունքներից և ավելի գոհ լինելու հիմքեր ունենք 1976-ից: Մեր հայրենիքը, շեշտում է Հայոց Հայրապետը, ապրում և ստեղծագործում է խաղաղության պայմաններում: Նորին Սրբությունը մաղթում է, որ մեր հայրենիքի այդ խաղաղությունը լինի ամուր, տևական, եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, ընտանիք, որը հուսալի պատվար է խաղաղության պաշտպանության:

Նորին Սուրբ Օծությունը խոսում է նաև այն մասին, որ այս նոր տարվա սեմին Ամանորի մեր ուրախությունների մեջ կա նաև տխրություն, որովհետև աշխարհի որոշ մասերում կրակ է ժայթքում, ողբերգություններ են կատարվում: Հայոց Հայրապետը սրտագին ցանկություն է հայտնում, որ խաղաղության աղավնին իջնի մանավանդ Լիբանանի օրհնյալ երկրի և ժողովուրդների վրա, որոնց ծոցում ապրում են նաև մեծ թվով հայեր:

Մեր հաջողության, գոհունակության երկրորդ գրավականը, հաստատում է Հայոց Հայրապետը, Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, որը հայ ժողովրդի և հայոց վերածնված հայրենիքի հանդեպ իր պարտքը, իր պատմական առաքելությունը կատարում է հավատքով ու սրբությամբ:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի ուսանողության ողջույնով բովանդակալից ու սրտառուչ խրատականով Հայոց Հայրապետն ավարտում է ամանորյա Իր խոսքը և պատգամը:

Ամանորի հանդիսությունն ավարտվում է ժամը 23-ին, միասիրտ երգված Տերունական աղոթքով:

Ժամը 24-ն է: Հնչում են Մայր տաճարի զանգերը, հնչում 365 անգամ: Պատմության գիրկն է անցնում Մայր Աթոռի կյանքում իրադարձություններով հարուստ ևս մեկ տարի:

Մայր տաճարում, խորին լռության մեջ, նոր տարվա առաջին իսկ րոպեին, Մայր Աթոռի միաբաններն ու ճեմարանի ուսանողությունն իրենց անդրանիկ աղոթքն են մրմնջում, որպեսզի 1976 թվականը լինի ս. Էջմիածնի առավել պայծառության, հայրենիքի խաղաղության, առատության, բարօրության և ողջ աշխարհում մնայուն ու կայուն խաղաղության տարի:

**Ս. պատարագ Նոր տարվա առիթով**

**Հունվարի 1-ին, հինգշաբթի օրը,** առավոտյան ժամը 10.30-ին, Մայր տաճարում տ. Թորգոմ աբղ. Մուշեղյանը ս. պատարագ է մատուցում Նոր տարվա առիթով և քարոզում «Ո՜ տայր ինձ զծուխն ծխանի և զառաւօտն Նաւասարդի» բնաբանով՝ շնորհավորելով Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի միաբանության Նոր տարին:

Հավարտ ս. պատարագի Իշման ս. սեղանի շուրջ հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը մի անգամ ևս շնորհավորում է, ջերմ սիրով և երախտագիտությամբ, Վեհափառ Հայրապետի Նոր տարին՝ քաջառողջության սրտագին բարեմաղթություններով:

Հայոց Հայրապետը խորապես զգացված Նոր տարվա առթիվ միաբանության կողմից արտասանված որդիական բարեմաղթություններից, շնորհավորում է միաբանության Նոր տարին և տալիս Իր օրհնությունն ու պատգամը:

Մայր Աթոռի միաբաններն աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետից 1976 թվականի ս. Էջմիածնի օրացույցներ:

**Ծրագալույցի սուրբ պատարագ Մայր տաճարում**

**Հունվարի 5-ին, երկուշաբթի.—Ծրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Օրվա տոնի առիթով երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում պաշտվում է Ծրագալույցի հանդիսավոր ժամերգություն՝ աստվածաշնչական ընթերցումներով և համապատասխան շարականների երգակցությամբ:

Եկեղեցական թափորով Մայր տաճար է առաջնորդվում Հայոց Հայրապետը:

Ս. պատարագից առաջ Մայր Աթոռի սարկավագներն ու հոգևոր ճեմարանի ուսանողներն Ավագ սեղանից ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ծրագալույցի հանդիսավոր ս. պատարագը մատուցում է տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է ս. Ծննդյան նախատոնակը: Մայր տաճարում վեհ ու տպավորիչ հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի»-ն:

Երեկոյան ժամը 20.30-ին Ղազարապատի միաբանական սեղանատանն օրհնվում են Մայր Աթոռի բարիքները, աղն ու հացը և ապա ողջ միաբանությունն ու ճեմարանի ուսանողությունը մասնակցում են ս. Ծննդյան ուրախ սեղանին:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ա. Հ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԻՆԺԵՆԵՐ-ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ. ՎԵՀԱՐԱՆ, 1976 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 3

# ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ Ի ՊԱՏԻՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին իսկ օրերից, ինչպես հայտնի է, Նրա հրավերով Մայր Աթոռին առընթեր կազմվում է անվանի հայ ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբուխ նվիրումով և հայ մարդուն հատուկ սիրով իր վրա է վերցնում Մայր Աթոռի և Հայաստանի պատմական վանքերի ու եկեղեցիների վերանորոգչական և շինարարական կարևոր աշխատանքների վերահսկողությունը՝ մարմին տալու շինարար և կառուցող Հայոց Հայրապետի ծրագրերին:

Անցնող քսան տարիների ընթացքում ճարտարապետների սույն հանձնաժողովը ամենայն կանոնավորությամբ Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, նիստեր է գումարում և այնտեղ ընդունված որոշումների համաձայն ծավալում շատ պատասխանատու և իրեն պատիվ բերող վերանորոգչական-շինարարական աշխատանքներ թե՛ Մայր Աթոռում և թե՛ վերոհիշյալ պատմական վանքերում ու եկեղեցիներում:

Մայր Աթոռում վաղուց ավանդույթ է դարձել՝ ամեն տարի հունվարի 2-ը և կամ 3-ը համարել ճարտարապետական հանձնաժողովին նվիրված օր: Այս տարի էլ, հունվարի 3-ին, շաբաթ օրը, Նոր տարվա ուրախ առիթով, Վեհարանի սեղանատունը կազմակերպվում է ընդունելություն՝ ի պատիվ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի:

Ընդունելությանը ներկա էին ճարտարապետների հանձնաժողովի անդամներ դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը՝ հանձնաժողովի նախագահ, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը, ինժեներ-կոնստրուկտոր Կոստանդին Ալթունյանը, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, ինչպես նաև Մայր Աթոռի ինժեներ-շինարարներ Միքայել Հովհաննիսյանը, Գրիգոր Զաթալյանը և Հակոբ Բաբախանյանը:

Ընդունելությանը հրավիրված էին նաև տ. Կոմիտաս և տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ դոկտ.-պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, դոցենտ Հովհաննես Թոփուզյանը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Եփրեմ Ալեքսանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը, Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, տնտեսական բաժնի վարիչ Անդրանիկ Ուրթուջյանը, Մայր Աթոռի փոխադրական միջոցների բաժնի վարիչ Լևոն Խոջամիրյանը և արվեստագետ-ոսկերիչ Ժիրայր Զուլոյանը:

Սեղանն օրհնում է Հայոց Հայրապետը: Հանուն բոլոր ներկաների տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը ջերմ խոսքերով շնորհավորում է Հայոց Հայրապետի Նոր տարին՝ մաղթելով, որ 1976 թվականին էլ իրագործվեն Նորին Սրբության շինարարական ծրագրերը:

Այնուհետև, խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը շնորհավորում է բոլոր ներկաների Նոր տարին՝ շեշտելով այս առթիվ մանավանդ Իր կողքին, Իր գահակալության քսան տարիների ընթացքում, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի կատարած շինարարական-վերանորոգչական աշխատանքները, և, դրանք արժանացնելով հայրապետական Իր բարձր ուշադրությանը և գնահատությանը, մաղթում, որ մեր ճարտարապետներն այսուհետև էլ Իր կողքին լինեն՝ մարմին տալու համար Մայր Աթոռի շինարարական ծրագրերին՝ ի վայելումն ազգիս հայոց:

Հանուն Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի, նրա նախագահ դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք է ուղղում Հայոց Հայրապետին և խոստանում՝ եռանդով ու պատասխանատվության բարձր զգացումներով, ինչպես անցնող տարիների ընթացքում, այսուհետև էլ շարունակել իրենց վստահված շինարարական աշխատանքները և արդարացնել Հայոց Հայրապետի մեծ վստահությունը:

Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի շնորհաշատ և համակրելի անդամ է նաև ճարտարապետ-արվեստագետ Բաղդիկ Արզումանյանը՝ «Երևաննախագիծ» ինստիտուտի հատակագծման արվեստանոցի վարիչը:

Ճարտարապետ Բ. Արզումանյանը մեծ ու շնորհակալ վաստակ ունի նաև հայրապետական մի շարք պատմական, հոբելյանական կոնդակների, եկեղեցական արվեստի գործերի նախագծման աշխատանքներում, Մայր Աթոռի հրատարակությունների, «Էջմիածին» ամսագրի նկարազարդումների գեղարվեստական ձևավորման բնագավառում:

1976 թվականի հունվարի 1-ին լրացավ ճարտարապետ Բ. Արզումանյանի ծննդյան 60-ամյակը:

Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի 60-ամյակը և նրա շնորհալի գեղագիտական վաստակը Մայր Աթոռում Իր մասնավոր ուշադրությանն ու գնահատությանն է արժանացնում Հայոց Հայրապետը. հունվարի 3-ի ընդունելության ժամանակ և, շնորհավորելով հոբելյարին, մաղթում նրան նորանոր հաջողություններ իր ապագա գործում՝ հուրախություն Իր սրտի և ի փառս հայ եկեղեցական արվեստի:

Հարգելի հոբելյարին այս ուրախ առիթով շնորհավորում են նաև դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը և ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

«Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, խոսք առնելով, շեշտում է Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի կատարած օգտակար աշխատանքները, որոնք Հայոց Հայրապետի տեսիլքներն ու վեհ ապրումները հավերժացրին մի անգամ ևս ս. Էջմիածնի հազարամյա քարերի վրա, որպեսզի **երազը անգամ մը ևս իրականություն դառնա,** ինչպես հաստատում է Վեհափառ Հայրապետը: Արդարև, քսան տարիների ընթացքում Հայոց Հայրապետը **սկսած է շինել, ինչ որ անցյալի մեջ չար ձեռքեր քանդեցին, դարեր ու դարեր,** և Մայր Աթոռում դրված յուրաքանչյուր մի նոր քար դարձավ վկայությունը հայ ժողովրդի կառուցողական, ստեղծագործ ոգու:

Իր խոսքի ավարտին Ա. Հատիտյանը նույնպես շնորհավորեց շնորհալի ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի ծննդյան 60-ամյակը:

Վերջում, ի մասնավորի Հայոց Հայրապետին, և ապա բոլոր ներկաներին ուղղված շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց ճարտարապետ Բ. Արզումանյանը:

Ընդունելությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:

Ա. Հ.




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 4-ին, կիրակի.—Զ օր Ծնընդեան պահոց.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ աբդ. Սարգսյանը:

*
* *

**Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Բ օր Ծնընդեան. Յիշատակ մեռելոց.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

**Հունվարի 9-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Երևանի հայրապետական վիլլայում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվում է աղետի հետևանքով Վենետիկի հայոց ս. Ղազար վանքի կրած նյութական մեծ կորստի հարցը:

*
* *

**Հունվարի 11-ին, կիրակի.—Զ օր Ծնընդեան.**

Այսօր Մայր տաճարում պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

*
* *

**Հունվարի 12-ին, երկուշաբթի.**—Ամանորի և ս. Ծննդյան տոների արձակուրդներից հետո հոգևոր ճեմարանում վերսկսվում են դասավանդությունները:

*
* *

**Հունվարի 13-ին, երեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը:

*
* *

**Նույն օրը.** Մոսկվայում, ռուս պրավոսլավ եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի կենտրոնում, գումարվում է Մոսկվայի Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողով նախապատրաստող կոմիտեի խորհրդակցական ժողովը, որին, հանուն Մայր Աթոռի և հայ եկեղեցու, մասնակցում էր դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ որպես կոմիտեի

տասը հոգուց բաղկացած անդամներից մեկը:

Սույն խորհրդակցությունում որոշվել է մարտի 29—31-ը Մոսկվայի մոտ, ռուսական Զագորսկ վանքում, հրավիրել Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողով նախապատրաստող կոմիտեի ընդլայնված նիստը, միջազգային մակարդակով:

Մոսկվայի Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողովը հրավիրվելու է Մոսկվայում, 1977 թվականի սկզբներին:

Տ. Արսեն եպս. Բերբերյանը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 20-ին:

* * *

**Նույն օրը,** Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ, Վեհափառ Հայրապետն այցելում է Երևան, Արարատյան թեմի առաջնորդարան, ուր Նրան ջերմորեն դիմավորում են Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և թեմականի պատվարժան անդամները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Քեհյայանը:

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ընդունելություն:

Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, հանուն թեմի, ողջունում է Վեհափառ Հայրապետի ներկայությունը և զեկուցում թեմում կատարված եկեղեցական-վանական նորոգչական աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետի ներկայությունը ողջունում են նաև տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը, թեմականի ատենապետ Մուշեղ Սերոբյանը, Զավեն Աղասյանը, Գուրգեն Մուրադյանը, ապա Ա. Հատիտյանը և Գ. Քեհյայանը:

Վերջում օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում բոլորի Նոր տարին և ս. Ծնունդը ու ցանկություն հայտնում, որ մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսն ավարտվեն ս. Սարգիս եկեղեցու վերանորոգչական աշխատանքները, որպեսզի սեպտեմբերի հանդիսությունների ժամանակ կատարվի վերանորոգված եկեղեցու հանդիսավոր բացումը:

* * *

**Հունվարի 17-ին, շաբաթ.**—Հին տոմարով Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ, պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ հավատացյալների մխիթարության համար, Կիրովաբադ է մեկնում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ Միսաք սրկ. Մարգարյանի, Ախալքալաք՝ տ. Մոմիկ աբղ. Սարգսյանը, Արմավիր՝ տ. Հովսեփ քհն. Հակոբյանը, իսկ Թբիլիսի՝ Կիրակոս սրկ. Հովհաննիսյանը:

* * *

**Հունվարի 18-ին, կիրակի.—Ա կիրակի զկնի Ծննդեան.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Հովհ. Գ 5) բնաբանով:

* * *

**Հունվարի 25-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Ծննդեան.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և քարոզում «Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա» (Ելք Ի 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

**Հունվարի 26-ին, երկուշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհուրդը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ է նշանակում Մայր Աթոռի միաբան տ. Տիրան աբեղա Կյուրեղյանին:

* * *

**Հունվարի 29-ին, հինգշաբթի.**—Այսօր, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը հանգրստանալու մեկնեց Կիսլովոդսկ, «Կրասնի կամեն» առողջարան:

Նորին Սրբությանն ուղեկցում էր տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը:



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

# ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ» ՇԱՐԱԿԱՆԸ

Կոմիտաս կաթողիկոսի կյանքի և գործունեության մասին որոշ տեղեկություններ է հաղորդում Սեբեոս պատմիչը: Ապրել ու գործել է 7-րդ դարում: Եղել է Տարոնի Գլակա վանքի առաջնորդը: Այս շրջանում նա աչքի է ընկնում դավանաբանական վեճերին ակտիվ մասնակցությամբ ու մեծ հմտությամբ: Սեբեոս պատմիչը հաղորդում է, որ 618 թվականին Կոմիտաս կաթողիկոսը քանդում է Վաղարշապատում կառուցված ս. Հռիփսիմեի հին, փոքր մատուռը՝ վերանորոգելու համար, «զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի հայոց կաթողիկոսի որդոց սրբոյն Ներսեսի»[1]: Ապա պատմիչն այդ մասին հաղորդում է հետևյալը. «Արդ մինչդեռ քակէին զորմն մատրանն, երևեցաւ յանկարծակի լուսաւոր և չքնաղագիւտ արքունական մարգարիտն՝ այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմեի: Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա յաւշել ի միմեանց. և երանելի, սրբոյն Գրիգորի կնքեալ մատուանեաւ իրով և մատանեաւ երանելւոյն Սահակայ հայոց կաթողիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իրով ևս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ՝ երից հաւատարմաց երրորդ մատանեաւք»[2]: Ահա այս դեպքն է պատճառ դառնում գրելու «Անձինք նուիրեալք» սքանչելի շարականը: Սեբեոսին ծանոթ է եղել «Անձինք»-ը: Ս. Հռիփսիմեի և Կոմիտաս կաթողիկոսի մասին նա հիացմունքով բացականչում է. «Ո՜վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ, և սնեալ ի գիրկս սրբութեան և նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք, և խանդակաթ էր ի սէր քոյ երանելին Կոմիտաս»[3]:

«Անձինք»-ի նյութը հեղինակը վերցրել է Ագաթանգեղոսից և գեղարվեստորեն մշակել: Սա ըստ էության մի ներբող-փառաբանություն է՝ նվիրված ս. Հռիփսիմյանց կույսերին, և մեր շարականների մեջ հոգևոր առաջին չափածո գործն է, որ գրված է այբուբենի կարգով: Դրանից հետո է, որ մեր չափածո հոգևոր և աշխարհիկ գործերում, հետևելով Կոմիտասին, գրում են այդ ձևով: Այս պոեմը մեր շարականների մեջ աչքի է ընկնում իր վեհ գաղափարներով, գեղարվեստական բազմազան

[1] Սեբեոս եպիսկ., Պատմ., Թիֆլիս, 1913 թ., էջ 141:

[2] Սեբեոս, նշվ. աշխ., էջ 141:

[3] Անդ, էջ 141:

ու նոր ձևերով և, որ գլխավորն է, ջերմ քնարականությամբ ու երկյուղած բարեպաշտությամբ: Պոեմում բանաստեղծը հետապնդել է երկու հիմնական նպատակ՝ ցույց տալ ս. Հռիփսիմյանց նվիրվածությունը իրենց հավատին ու համոզմունքներին, նրանց հոգեկան կորովը, աշխարհիկ, բռնակալ ուժի պարտությունը: Հոգեկան գեղեցկության հաղթանակը մարմնականի վրա՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հորինել մի արժանավայել ներբող Հռիփսիմյանց կույսերի տոնին նվիրված: Պոեմում մի քանի տեղ է հիշվում այդ մասին.

«Ցնծութեամբ տօնեսցուք, զյիշատակըս նոցունց,
Զի և նոցին հաղորդեսցուք փրկութեան,
Խնդրելով յԱրարչէն զպարգևս երկնաւորս,
Եւ զդասիլն ընդ նոսին ի յարկսն լուսեղէն»[4]:

Այս անզուգական երկի հորինելու և կույսերի տոնին նվիրելու նպատակը երևում է «Անձինք»-ի հենց սկզբի տողերից.

«Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
Երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք,
Ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
Մայր սիոնն դստերօքն իւրովք»[5]:

Իսկ ո՞րն է շարականի հիմնական գաղափարը, և այն գեղարվեստական ինչպիսի՞ նոր ձևերով ու պատկերներով է դրսևորվել: Բանաստեղծը ցույց է տալիս, որ անձնուրաց, Քրիստոսի սիրուն նվիրված կույսերը եկել են Հայաստան աշխարհ՝ քրիստոնեություն տարածելու: Քրիստոնյա կույսի՝ Հռիփսիմեի մարմնական գեղեցկությամբ տարվում է հեթանոս, բռնակալ թագավորը: Վերջինս ուզում է տիրանալ գեղեցկուհի Հռիփսիմեին: Սակայն Հռիփսիմեն անհողդողդ, աննվաճելի է: Սկսվում է հոգեկան և մարմնական պայքարը հզոր թագավորի և տկար կույսի միջև: Հաղթում է Հռիփսիմեն: Ահա սա է այս մեծ ներբողի հիմնական գաղափարը, որի շուրջը պտտվում են շարականում եղած բոլոր մտքերն ու պատկերացումները, այլաբանություններն ու խոսքի գեղարվեստական բոլոր ձևերը: Իսկ ինչպե՞ս է այդ ամենը ներկայացվել և ինչպիսի՞ հաջորդականությամբ ու զարգացմամբ: Ամենից առաջ երևան է գալիս հոգեկան և մարմնական գեղեցկության վերաբերյալ բանաստեղծի նորորակ, ինքնատիպ ըմբռնումը: Բախվում են հոգեկան և մարմնական գեղեցկությունները: «Անձինք»-ի մեջ հոգեկան գեղեցկության կողքին միաժամանակ փառաբանվում է նաև մարմնական գեղեցկությունը:

«Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ
Յիմարեցոյց զթագաւորն և պակեաւ հեթանոսք,
Ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն
Տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին»[6]:

Այստեղ ս. կույսերի երկրային գեղեցկությամբ մահկանացու մարդկանց հետ հիացած են նաև երկնային «զուարթունքն», այսինքն հրեշտակները: Աշխարհիկ գեղեցկության մեծարումն ու նման փառաբանումը, այն էլ հոգևոր երգերում, 7-րդ դարի համար ոչ միայն նորություն ու առաջադիմական մտայնություն էր, այլև մեծ համարձակություն: Այդ մարմնական գեղեցկության հանդեպ անզորանում և հիմարանում են աշխարհի թագավորները, նրանց հետ և հեթանոսները: Հռիփսիմեին տիրանալու համար տենչում է ոչ միայն հայոց թագավորը, այլև ուրիշ թագավորներ, և մի ներքին խնդությամբ ուզում էին տիրանալ այդ մարմնավոր «մարգարտին»:

«Ի վերայ միոյ պատուական մարգարտի,
Խաղացին ցընծալով ամենայն հեթանոսք...
Լուան թագաւորք և լցան խնդութեամբ»[7]:

Ու սկսվում է մի պայքար գեղեցիկ կույսերի և գրավիչ գեղեցկությամբ հարբած հեթանոս թագավորի միջև: Եթե կույսերի մարմնական գեղեցկությամբ մարդկանց հետ հիացել էին նաև հրեշտակները, ապա այժմ, երբ սկսված է ճակատումը կույսերի և թագավորի միջև, այդ տեսարանով հետաքրքրվում է նաև ամենակարող Արարիչը, որը երկնքի բարձունքներից խոնարհվում և դիտում է այդ ճակատամարտը.

«...Քանզի էնն Աստուած ամենազօր զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր զհանդէս կուսանացն»...[8]

---

[4] Շարական հոգևոր երգոց, Երուսաղեմ, 1936 թ., էջ 581—582:

[5] Անդ, էջ 573:

[6] Անդ, էջ 573—574:

[7] Անդ, էջ 575—576:

[8] Անդ, էջ 574—575:

Այդ պատերազմում անհողդողդ ու անսասան էին կույսերը, որոնք հոգեպես սերտ կապված էին իրար հետ: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես մարմնով այդ թույլ արարածները հոգով կորովի են և արիաբար ճակատամարտի մեջ են մտնում՝ հույսը իրենց հավատի ու հաղթանակի վրա դրած՝

«Միաբան ընթացեալք ի տեղի ճակատու,
Զինեցան հաւատով և կացին յանդիման»[9]:

Պատկերավոր է տրված նաև այդ անհավասար, հոգեկան և մարմնական պատերազմի ելքը՝ վախճանը: Չնայած Տրդատը ունի հզոր ուժ, զենքի զանազան տեսակներ, սակայն այդ ամենը նսեմանում, անզորանում են հզոր հոգի ու հավատ ունեցող կույսերի հանդեպ, ու մարտից հաղթանակով դուրս են գալիս մարմնով տկար կույսերը, իսկ թագավորը ոչ միայն պարտվում, այլև ամոթահար է լինում:

«Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք,
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր»[10]:

Ըստ բանաստեղծի կույսերը ոչ միայն քրիստոնեական նոր հավատն էին քարոզում, այլև պայքար էին մղում սնոտիապաշտության, տգիտության ու խավարի դեմ: Այստեղ հեղինակը ցույց է տալիս քրիստոնեության աշխարհայացքի վեհությունը հեթանոսական կրոնների համեմատությամբ.

Ա. Բառնալով զխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէ...
Բ. Բաշխեն զբժշկութիւն հոգւոց և մարմնոց...
Գ. Փարատեցին զխաւար դիւապաշտ մոլութեանցն...
Դ. Եւ եղեն փրկանք անծանօթ աշխարհին...
Ե. Պայծառացեալք լուսովն որ ի Հօրէ ծագեցաւ...
Զ. Ոահս յոլովս առաքինութեան յայտնեցին...

Եվ, վերջապես, կույսերն իրենց նահատակությամբ դարձան «զոհք փրկութեան...»՝ նոր հավատ և լուսավորություն տարածելու համար ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Եվ կույսերն անձնուրաց կերպով, տանելով գաղափարական հաղթանակ, հասնում են իրենց նպատակին: Նրանց ցանած հավատի սերմը աճում է շատ ազգերի մեջ, և որոնք լուսավորվում ու հոգով զարգանում են կույսերի քարոզած գաղափարներով.

«Ծնան կուսանք ազգս բազումս»,

ազգեր, որոնք

«Անեցին հաւատով զարդարեալք ի Քրիստոս»[11]:

Կույսերի տարած հաղթանակը, նոր գաղափարների տարածումը Հայաստանում և ուրիշ երկրներում բանաստեղծի հոգին լցնում է բերկրությամբ: Այստեղ նա ավելի ոգևորված և ավելի քնարականությամբ ներբողում է կույսերին՝ գեղեցիկ պատկերներով, այլաբանություններով ու համեմատություններով, որտեղ միաժամանակ դրրսեվորվել է նաև իր՝ բանաստեղծի վերաբերմունքն իր պոեմի հերոսների նկատմամբ: Նրանք «երկնային բարբառներով» լցրել են երկիրը, որպես «բանաւոր ողջակէզք» իրենց անուշ հոտով բուրել են «ի Քրիստոս». ողջակիզվելու համար նրանք ընտրվել են Աստուծո կողմից որպես «որոջք անարատ»: Վերոհիշյալ բոլոր պատկերների մեջ հորդում են բանաստեղծի ոգևորությունն ու սերը, երախտագիտական զգացումները և փառաբանական մոտիվները: Հայոց հոգևոր երգի մեջ, մինչև Կոմիտասի «Անձինք»-ը, որպես կին ինչպես և ամբողջ քրիստոնյա աշխարհում փառաբանվել ու ոգևորության առարկա է եղել Տիրամայրը՝ Մարիամ Աստվածածինը: Կոմիտասի երգի հերոսները կանայք են: Այս հանգամանքը նորություն էր մեր հոգևոր երգի մեջ թե՛ իր թեմայով և թե՛ իր ձևով ու բովանդակությամբ: Տիրամորը նվիրված ջերմաշունչ բազմաթիվ «Մեծացուցեներ»-ի մեջ. բանաստեղծները նկատի են ունեցել ոչ թե կինը, Մարիամի «...մարմնաւոր գեղեցկութեան պայծառութիւնը», այլ միայն այն, որ նա Աստվածածին է՝ լցված երկնային զորությամբ և շնորհներով, որովհետև նա Փրկչի մայրն է: Այստեղ փառաբանվում են Աստվածածնի աստվածային, գերմարդկային, ոչ աշխարհիկ կողմերը: Այդպես չէ, սակայն, ոչ պակաս փառաբանական մոտիվներ ունեցող Կոմիտասի «Անձինք» բանաստեղծությունը: Այստեղ ներբողվում են մարդկային, երկրային գծերով օժտված մի խումբ կանայք, որոնք եկել էին, ըստ ավանդության, արևմուտքի երկրներից՝ Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում նոր կրոն և լուսավորություն

[9] Անդ, էջ 375:
[10] Անդ, էջ 575:
[11] Անդ, էջ 576:

տարածելու համար: Միշտ է, այստեղ էլ հեղինակը կույսերին օժտել է գերմարդկային, երկնային գծերով: Կույսերը, «խաչակից լինելով կուսածին Արարչին», ունեցել են «արարչագործ զօրութիւն», սակայն, ըստ էության, կույսերը երկրային ու մարդկային են:

«Փառաց ի փառս բարձրացեալ պարծին,
Ի պատիւ և ի փառս երեսուն և եօթեանքն.
Քանզի այս է թիւ երանեալ կուսանացն,
Որք անթառամ պսակեցան յանվախճան
յաւիտեանն»:

Կույսերին նվիրված Կոմիտասի այս հոգեվոր երգը «հագեցված է կյանքով ու ջերմությամբ»[12], հետևաբար ոչ զուրկ աշխարհիկ երանգներից: Սակայն Կոմիտաս կաթողիկոսը կույսերի գեղեցկության «մարմնական պայծառութիւնն» ու աշխարհիկ կողմերը չանտեսելով հանդերձ, առաջնությունը տալիս է հոգեկան գեղեցկության ուժին, քանի որ կույսերը պայքարում են ոչ թե մարմնական, ժամանակավոր, այլ հոգեկան, հավիտենական կյանքի գեղեցկությունների համար.

«Մերժեցին զկարիս մարմնական
կենցաղոյս,
Զի ծանեան եթէ երազ է և սուտ
պանուանք,
Ոչ հեշտացան ի գրկանս փափկութեան,
Իմացան եթէ սնոտի է անցաւոր
մեծութիւնս»[13]:

Բանաստեղծը համոզված է, որ Հռիփսիմյանք այնպիսի հերոսություն ու անձնազոհություն են ցույց տվել աշխարհին, որ կարող են իրենց նահատակությամբ բաղձալի օրինակ ծառայել բոլորի համար.

«Զեզ նմանիլ կարոտին ամենայն հոգիք»[14]:

Ահա այս խնդիրներն են կազմում Կոմիտասի «Անձինք» շարականի գաղափարական և փառաբանական բովանդակությունը, նրա հիմքն ու էությունը:

Այժմ փորձենք տեսնել, թե վերոհիշյալ գաղափարները գեղարվեստորեն ինչպե՞ս են մարմնավորվել և ինչպիսի՞ ձևերով են դրսևորվել «Անձինք նուիրեալք»-ում:

Քրիստոսի հավատի համար մարտնչող մարտիրոսներին ու նահատակներին նվիրված շարականներում ներբողական և փառաբանական մոտիվները նորություն չէին և՛ մեր, և՛ քրիստոնյա եկեղեցու հոգևոր երգերում: Սակայն այդ մոտիվները նոր ձևերով, թարմ պատկերներով, ջերմ զգացմունքներով և խոր քնարականությամբ են արտահայտվել Կոմիտասի մոտ: Թեպետ «Անձինք»-ը ծավալով համարվում է մեր մեծագույն շարականներից, գրված է այբուբենի կարգով, ու ամեն տան մեջ մենք հանդիպում ենք ներբողի ու փառաբանության, սակայն չեն երևում այն կրկնությունները, ինչպես այդ կարգի մեր մյուս շարականներում: Այստեղ ամեն մի այլաբանությունը, համեմատությունն ու հակադրությունն ունի իր ուրույն երանգն ու տեղը, թարմությունն ու նորությունը: Շարականի հեղինակը ոչ միայն օժտված է բանաստեղծական մեծ տաղանդով, ունի նուրբ ճաշակ, դիտողական ձիրք, այլև մտավոր մեծ պաշար, որը հնարավորություն է տալիս հեղինակին իր մտքերն արտահայտելու բազմատեսակ ձևերով ու եղանակներով: Նա քաջ ծանոթ է անտիկ աշխարհի արվեստին ու գրականությանը և հոգևոր երգին: Բանաստեղծը գեղարվեստորեն է օգտագործել նույնիսկ Հռիփսիմե հատուկ անվան իմաստը:

Հռիփսիմե հունարեն «նշանակէ՝ ընկեցեալ... բայց ոմանք համարին կրնատութեամբ առեալ ի յունականէն **էֆրօսինի**, իբրև թէ բարեխորհուրդ, քաջախորհուրդ, և թերևս յայս հայեցեալ յօրինող շարականիս ասաց մեծ խորհուրդ»[15]: Ահա Հռիփսիմեի անվան հունարեն իմաստը նկատի ունենալով, բանաստեղծը «Հ» տառով հորինել է հետևյալ գեղեցիկ տունը.

«Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն
ցանկալի,
Ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ
հրեշտակս,
Եղեր օրինակ սրբութեան կուսանաց,
Վարդապետութիւն արանց արդարոց»[16]:

Ո՞րն է այդ «մեծ խորհուրդը», որը հեղինակը այլաբանորեն կապում է Հռիփսիմեի անվան հունական իմաստի հետ: Բացի այն, որ այդ իմաստուն կույսերը նոր վարդապետություն են տարածում, բանաստեղծը դրանց ղեկավարի՝ Հռիփսիմեի անվան հետ է կապում մի ուրիշ մեծ խոր-

[12] **Մ. Մկրյան**, Գր. Նարեկացի, Երևան, 1955 թ., էջ 32:

[13] Շարակ., էջ 578:

[14] Անդ, էջ 577:

[15] **Հ. Գ. Ավետիքյան**, Բացատրութիւն շարականոց, Վենետիկ, 1814, էջ 440:

[16] Շար., էջ 577:

հուրդ, որը հասնում է մինչև նախամարդը՝ Ադամն ու Եվան: Եվայի կատարած մեղքի պատճառով դատապարտվել է ամբողջ մարդկությունը: Ահա Տիրամորից հետո Հռիփսիմեն է, որ իր կյանքի գնով մարդկությանն ազատում է նախամոր հավիտենական մեղքից:

«Երկունք մահաբերք անիծիցն լուծան,
Եւ Ադամ վերստին աստուածակերպ
նոխանայ,
Փոխանակ Եւայի դատերըք նորա,
Մարտիրոսք և կուսանք ընծայեալք
Աստուծոյ»[17]:

Հռիփսիմեն պատկերվում է որպես դրախտ. եդեմի այն պարտեզը, որտեղից վտարվել էր Եվան: Հռիփսիմեն օժտված է երկնային զորությամբ, նա զարդարում է մարդու համար Աստծո կողմից ստեղծված պարտեզը՝ այնտեղ տնկելով նոր, կենաց ծառ:

«Դարձեալ վերստին արարչագործ
զօրութիւն,
Եւ դարձեալ եդեմ աստուածատունկ
զարդարի.
Քանզի ծառն կենաց տնկեցաւ ի դրախտին,
Բերելով մեզ պտուղ զերանելին
Հռիփսիմէ»[18]:

Գեղեցիկ հակադրություններ են բռնակալ զորեղ թագավորի և նվիրված գաղափարական տկար կույսերի, հոգեկանի և աշխարհիկ վայելքների պայքարի հաղթանակի և պարտության տեսարանները: Թագավորը կորովի է և ունի հաստաձիգ աղեղներ, իսկ կույսերը ոչ միայն անզեն են, այլև թույլ ու տկար: Թագավորը հոխորտում է իր պերճությամբ ու փառքով, բայց հաղթում են կանայք՝ իրենց հոգու և հավատի զորությամբ:

Կույսերի և թագավորի պայքարի տեսարանն այնքան զարմանալի է եղել և ուշագրավ, որ ոչ միայն աշխարհիկ հեթանոս բազմությունն է հավաքվել՝ այդ անհավասար պատերազմը դիտելու, ոչ միայն հրեշտակներն էին տարվել կույսերի գեղեցկությամբ, այլև Աստված ինքը երկնքի բարձունքներից խոնարհվել և նայում էր այդ պայքարի տեսարանին:

«Քանզի էնն Աստուած ամենազօր
զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր զհանդէս
կուսանացն»[19]:

Պոեմի մեջ բազմատեսակ ու նոր ձևերով է պատկերվում Հռիփսիմեն: Այնքան պայծառ ու կատարյալ է դառնում նրա կերպարը: Հռիփսիմեն նման է մի «պատվական մարգարտի», որին տիրանալ են ձգտում հեթանոսները, բայց այդ չի հաջողվում: Այդ մարգարիտը եկել է Հայաստան իր ընկերներով՝ ազգերը լուսավորելու և նոր գաղափարների «չքնաղ տեսությունը քարոզելու»: Եվ այդ նրանց հաջողվում է նահատակության գնով: Այլաբանորեն և վառ համեմատություններով է պատկերված նաև այդ նահատակությունը:

Բանաստեղծը հռիփսիմյանց գործունեությունը և նահատակությունը համարում է այն լուսավոր ճանապարհները, որով հնարավորություն ստեղծեցին «ելանել ամենայն մարդոյ առ Աստուած»:

Կոմիտաս կաթողիկոսն իր շարականի հերոսների կերպարներն ավելի պայծառ ու ամբողջական դարձնելու համար չի սահմանափակվում միայն այլաբանություններով, հակադրություններով, համեմատություններով, իրական և կրոնական կյանքից վերցրած պատկերներով: Իր խոսքն ավելի ազդու, կույսերի, առանձնապես Հռիփսիմեի կերպարն ավելի վառ կերտելու նպատակով նա դիմում է խոսքի նաև ճարտասանական ձևերին ու եղանակներին: Կույսերի հոգեկան հարստությամբ, կորովով ու հաղթությամբ հիացած, բացականչում է.

«Ո՜վ զգաստութեան իմաստուն
կուսանացն,
Որոց ոչ յաղթեաց հեղգութիւն և քուն»[20].

Կամ կույսերի փառաբանության կապակցությամբ, պոեմի վերջում, խոսքն ուղղելով Քրիստոսին, ասում է.

«Քեզ, որ ցնծութիւնդ ես Քրիստոս
Աստուած.
Եւ ուրախութիւն ամենայն արդարոց,
Քաղցրասցին վասն մեր աղաչանք սրբոցն,
Շնորհելով զթողութիւն մեր բազում
յանցանաց»[21]:

Հռիփսիմյանք պատկերված են որպես հոգևոր հերոսուհիներ, որոնք իրենց նա-

---

[17] Անդ, էջ 574:
[18] Անդ, էջ 574;
[19] Անդ, էջ 574—575:
[20] Անդ, էջ 579:
[21] Անդ, էջ 582;

հատակությամբ մարդկության համար դարձան՝

«Շինուածք երկնաւորք ի յերկրի
հաստատեալք,
Եւ արձանք լուսեղէնք ի յերկինս
կանգնեալք»...[22]

Պոեմի վեհ տրամադրությունները, ջերմությունն ու անմիջականությունը, վճիտ պարզությունը, ճոխ, բազմատեսակ համեմատությունները, գեղեցիկ պատկերների շղթան, սահուն ու աշխույժ ոճը, ճաշակավոր չափը,—այս բոլորն «Անձինք նուիրեալք»-ը դարձնում են գեղարվեստական մի գոհար և մեր հարուստ Շարականոցի պսակն ու պարծանքը:

«Անձինք»-ը որպես կատարյալ մի մեծ հոգևոր երգ հանկարծակի չծնվեց և պատահական երևույթ չէր: Կոմիտասից երկու դար առաջ սկզբնավորվելով, մեր հոգևոր երգը մի հարյուրամյակի ընթացքում ունեցավ բուռն զարգացում և նախադրյալ հանդիսացավ հետագա դարերի ոչ միայն հոգևոր երգերի, այլև աշխարհիկ բնույթի բանաստեղծության զարգացման համար: Սահակ Պարթևի գրած շարականների լեզվի պարզությունը, մտքերի ու գաղափարների վեհությունը, Մաշտոցի հուզաթաթախ ու պատկերավոր ապաշխարության մոտիվները, բազմազան դարձերով ու երաժշտական ոսկեղենիկ լեզվով, Մ. Խորենացու՝ Ծննդյան և Տիրամորը նվիրված բազմաթիվ «Մեծացուցեներ»-ն իրենց վեհությամբ, քնարականությամբ ու փառաբանական մոտիվներով, Հովհան Մանդակունու աղոթքներն ու «քարոզներն» իրենց գաղափարական, հայրենասիրական մոտիվներով և դարձյալ պարզությամբ ու ազգային հերոսների մեծարանքով և փառաբանությամբ,—այս ամենը որպես ժառանգություն ու հայրենական ավանդ հասան Կոմիտասին, դարձան հիմք և ատաղձ, կատարելագործվեցին, զարգացան այս տաղանդավոր բանաստեղծ կաթողիկոսի ձեռքով, ու ծնվեց հայոց հոգևոր երգի փառքն ու պսակը՝ «Անձինք նուիրեալք» սքանչելի շարականը:

Բնականաբար, բարձր վարպետությամբ ստեղծագործված այսպիսի մի կատարյալ հոգևոր բանաստեղծությունը պիտի իր զորեղ ազդեցությունն ունենար ժամանակակից և հետագա դարերի հոգևոր երգերի և բանաստեղծությունների վրա՝ թե՛ ձևի, թե՛ ոճի և թե՛ բովանդակության կողմերով: Կոմիտաս կաթողիկոսն առաջինն էր, որ, շրջանցելով հոգևոր երգեր ստեղծելու ժամանակի գրական հին ավանդները, դուրս եկավ շարականների երեք տնանոց ծավալի անձուկ շրջանակներից, ոչ միայն լայնացրեց մեր հոգևոր երգի սահմանները, այլև գրեց հայոց այբուբենի տառերի կարգով, այնպիսի մի մեծ գործ, որպիսին նրա երեսունվեց տներից բաղկացած «Անձինք նուիրեալք» պոեմն է: Հետագայում մեր շարականագիրներից շատերը, Կոմիտասի օրինակով, այբուբենի կարգով շարականներ գրեցին, ինչպես Ներսես Շնորհալու «Այսօր անճառ», «Արարչական», «Առալօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Աստուած ահեղ» հոգևոր երգերը, Հովհաննես Մկրտչին նվիրված, Հովհաննես Երզնկացու «Արեգական արդարության» շարականը, Աստվածածնի Վերափոխման տոնին նվիրված Կիրակոս Երզնկացու «Արևելք գերարփին» և այլն: Մեր «Մեծացուցեն» Ծննդյան ու Վերափոխման շարականների վրա ավելի զորեղ է «Անձինք»-ի բովանդակության և արվեստի ազդեցությունը:

Վերևում բերված փաստերը և համեմատությունները ցույց են տալիս, որ Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը ոչ միայն մեր հոգևոր երգերի գլուխ-գործոցներից է իր բարձր արվեստով, նոր ձևով ու նոր բովանդակությամբ, այլև այն հիմք հանդիսացավ բանաստեղծական մի նոր դպրոցի: Կոմիտասի «Անձինք»-ը ուսանելի օրինակ հանդիսացավ հետագա դարերի շատ բանաստեղծների, մանավանդ շարականագիրների համար:

[22] Անդ, էջ 579:

ԳՐՔԵՐԻ ՀԵՏ

# «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Վ. Ա. ՍԱՐԿԱՒԱԳԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՀԱՅՍ»

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի և Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդների որոշումով, 1975 թվականի վերջերին Երևանում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել **Գրական ժառանգություն** մատենաշարի 9-րդ հատորը՝ հետևյալ վերնագրով.

**«Մեսրոպ Թաղիադյան**
**Ուղեգրություններ, հոդվածներ նամակներ, վավերագրեր» (618 էջ)**

«Գրական ժառանգություն» մատենաշարով լույս են տեսել մինչև այժմ Ալեքսանդր Ծատուրյանի և Նար-Դոսի նամականին, Ալ. Սպենդիարովի նամակները (ռուսերեն), Գևորգ Ախվերդյանի, Դանիել Վարուժանի, հ. Ղ. Ալիշանի նամակները, Արևմտահայ գրողների նամականին, Դերենիկ Դեմիրճյանի «Անծանոթ էջեր»-ը և «Ժամանակակից գրողների հուշերը հայ դասական գրողների մասին» աշխատությունները:

«Գրական ժառանգություն» մատենաշարի վերջերս հրատարակված 9-րդ հատորը ընդգրկում է «ս. Էջմիածնի սարկավագ», հմուտ մանկավարժ և հրապարակագիր, ականավոր գրող ու թարգմանիչ, ջերմ հայրենասեր Մեսրոպ Թաղիադյանի (1803—1858) «Ճանապարհորդութիւն ի Հայս» (Ա հատոր) հայրենագիտական աշխատությունը, «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» (Բ հատոր), նրա շուրջ 40 հրապարակախոսական երկերն ու հոդվածները, օրագրերը, ավելի քան 40 նամակներն ու ճառերը և 17 վավերագրեր:

Սույն բովանդակալից հատորի բնագիրը (էջ 25—533) գիտական, բարեխիղճ ուսումնասիրություններով ու ծանոթագրություններով (էջ 537—601) հրատարակության է պատրաստել հմուտ մատենագետ Ռուզան Նանումյանը, որը և գրել է հրատարակված հատորի հետաքրքիր Հառաջաբանը (էջ 5—21): Հրատարակված սույն հատորն ունի նաև «Անձնանունների ցանկ» (էջ 603—615):

Հատորը խմբագրել է գրականագետ Պիոն Հ. Հակոբյանը:

Մեսրոպ Թաղիադյանը ԺԹ դարի 20—50-ական թվականներին մեր եկեղեցու տարեգրության և հայ մշակույթի անդաստանում ծավալել է բեղուն ու շահեկան գործունեություն, մանկավարժական, հրապարակախոսական, գրական-թարգմանական բնագավառներում:

Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է 1803 թվականի հունվարի 1-ին կամ 2-ին Երևանում և ս. Ծննդյան տոնի օրը, հունվարի 6-ին, մկրտվել Երևանի ս. Սարգիս եկեղեցում: Փոքր հասակից որբ է մնացել: Մանկությունը եղել է դառն ու ծանր: Մինչև 12 տարեկան լինելը մեծացել է տատի մոտ, որն «ապա ուխտէ զիս՝ որպէս ասի՝ ի ծառայութիւն սրբոյ Էջմիածնի»[1]:

[1] **Մեսրոպ Թաղիադեանց,** Ճանապարհորդութիւն ի Հայս, Երևան, 1975, էջ 29—30:

Մայր Աթոռում «պատկառազդու, առաքելապատիւ և մեծն» Ներսես արքեպ. Աշտարակեցու մասնաւոր կարգադրությամբ ուսումնատենչ ու խոստումնալից պատանու դաստիարակությունը հանձնվում է բագրեվանդցի «Քուրդ» կոչված Հովհաննես վարդապետին, որը ս. Էջմիածնի միաբանության «սրբագումար անդամների մէջ» աչքի էր ընկնում իր «առաքինական բնաւորութեամբ և արուեստական հմտութեամբ, սրբոտի անվեհեր արիութեամբ»[2]:

# ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## 9

## ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

*Ուղեգրություններ*
*Հոդվածներ*
*Գրառումներ*
*Յուշերագրեր*

Այնուհետև 1816 թվականից սկսած, դարձյալ Մայր Աթոռում, Մեսրոպ Թաղիադյանը, Եփրեմ Զորագեղցի կաթողիկոսի հովանավորությամբ, կատարելագործում է իր եկեղեցագիտական և հայրենագիտական մասնագիտությունը, իր իսկ վկայությամբ՝ «երանելի, աստուածառաք, մեծանուն վարդապետն առաքինութեանց» Պողոս (Ներսիսյան) Ղարադաղցու մոտ, նրա «անմահ, աստուածաշնորհ և հոգեբուղխ դաստիարակութեամբ»[3]:

Մեսրոպ Թաղիադյանը Մայր Աթոռում Պողոս վարդապետի մոտ իր հոգելից ուսումնառության տարիների մասին երախտագիտությամբ և հպարտությամբ գրում է. «Երանի՜ որոց այսպիսի վարդապետի աշակերտեցան դաստիարակութեամբ»[4]:

Մայր Աթոռում իր ուսումն ավարտելուց հետո, Մ. Թաղիադյանն իր կյանքն ու գործունեությունը ընդմիշտ կապել է Մայր Աթոռի առաքելության և պատմության հետ:

Մայր Աթոռում եղած տարիներին Թաղիադյանը վարում է «առանց իրիք տրտընջանաց ու կանոնաւոր խղճմտանօք և օրինաւոր կարգապահութեամբ զպաշտօն վարժապետութեան արուեստից ազատականաց, և զպաշտօն խորհրդական գրագրութեան կաթողիկոսի Ամենայն Հայոց և սրբազան Սիւնհոդոսի, անարատ խորհրդապահութեամբ, սրբութեամբ և անկեղծ հաւատարմութեամբ»[5]:

1821-ին Թաղիադյանը, Եփրեմ կաթողիկոսի կարգադրությամբ, սարկավագ է ձեռնադրվում և 1822-ին նրան է ընկերակցում, երբ կաթողիկոսը 2—3 տարի ժամանակով հեռանում է Մայր Աթոռից և բնակվում Հաղբատի վանքում:

Մ. Թաղիադյանը Մայր Աթոռում իր ուսումնառության և ապա իր պաշտոնավարության տարբեր ժամանակներում մոտիկից և հանգամանորեն ծանոթանում է Վաղարշապատի և նրա շրջակայքի պատմական հուշարձաններին, ուղեգրական շրջագայություններ կատարում հայրենի աշխարհում, իր անվանի ուսուցիչ Պողոս վրդ. Ղարադաղցու, ապա Մայր Աթոռի նվիրակներ Բարսեղ և Դանիել եպիսկոպոսների հետ՝ Արարատյան դաշտավայրում, Նախիջևանում, Սյունիքում, Շուշիում, Գանձակում, Հաղբատում և «մեծ հետաքրքրություն է հանդես բերում հայրենիքի պատմական անցյալի և նրա ժամանակակից քաղաքական-հասարակական իրադարձությունների հանդեպ»[6]:

Այս բոլորի արդյունքն է լինում «Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս» ուղեգրության Ա հատորի պատրաստությունը և հրատարակությունը:

«Ճանապարհորդութիւն»-ը լույս է տեսել «տետրակ առ տետրակ», նախ 1847 թվականին Կալկաթայում հրատարակած Թաղիադյանի «Ազգասէր» ամսագրում[7]:

«Գրական ժառանգություն» մատենաշարի 9 հատորում առաջին տեղը հատկացված է սահա Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն» արժեքավոր հայրենագիտական, ուղեգրական աշխատությանը, որը և ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը՝ Մայր Աթոռի այդ շրջանի տարեգրության հետ կապված իր շահեկանության համար:

Սույն աշխատության մեջ Թաղիադյանը

[2] Անդ, էջ 31:
[3] Անդ, էջ 32—33:
[4] Անդ, էջ 34:
[5] «Էջմիածին» ամսագիր, 1947, մարտ, էջ 34:
[6] «Ճանապարհորդութիւն», «Հառաջաբան», էջ 7:
[7] Անդ, էջ 537—538:

«գրի է առնում Հայաստանի մի շարք գավառներում կատարած շրջագայությունների տպավորությունները... Ականատեսի հուշերին ավելանում է հայրենիքի պատմության նրա լայն իմացությունը», որով «միացնելով պատմական և ականատեսի փաստերը, ստեղծել է 1820-ական թվականների Արևելյան Հայաստանի իրական պատկերը», որը «հնարավորություն է տալիս ճանաչելու ժամանակը բնորոշող երևույթներ, մարդկանց կերպարները բնութագրող հարաբերություններ... մարդկանց զանազան կերպարներն իրենց առօրյա հոգսերով, մտորումներով, երազանքներով»[8]:

«Ճանապարհորդութիւն»-ը բաժանված է վեց հատվածների:

**Հատուած առաջին**[9]. նվիրվել է Թաղիադյանի ընտանեկան, «առտնին անցք»-երին, «Նոր եղանակ դաստիարակութիւն մանկանց» հարցին, **Մայր Աթոռում իր ուսումնառության տարիներին և իր վարդապետ ուսուցիչների ու իր բարերարներ Եփրեմ կաթողիկոսի և Աշտարակեցու հիշատակին:**

**Հատուած երկրորդ**[10]. նկարագրությունն է Վաղարշապատի դաշտին, ապա **«տեղագրական ծանօթութիւնք սրբոյ Էջմիածնի...», «շրջապատ Էջմիածնի»,** ուր խոսում է Արարատյան դաշտի, նրա օդի, ջրի, գետերի, ձկնաբանության (ձկների տեսակների), ձկնորսության, լեռների և բլուրների, հայ բնակչության բազմածնության, նիստ ու կացի, բարքերի, սովորույթների և «գեղեցկութիւն կերպարանաց ազգի մերոյ» խնդիրների մասին:

«Առանձնապես հետաքրքիր են նրա քննական հայացքը և հնախոսական դիտողությունները հատկապես Վաղարշապատի, Դվինի, Երվանդաշատի, Արաքսի հնօրյա հունի, Մեծամորի և Ռահ գետերի, Էջմիածնի Մայր տաճարի, Զվարթնոցի և այլ կոթողների մասին («Հառաջաբան», էջ 9):

**Հատուած երրորդ**[11]. ամբողջությամբ նվիրված է Մայր Աթոռին և նրա ժամանակակից առօրյային ու միաբանության կյանքին: Հատվածի վերնագիրն է. **«Կաթողիկոս և կառավարութիւնք Էջմիածնի»:** Մայր Աթոռի գահակալին բնութագրում է մատենագիտական, պատմական ճշգրիտ տվյալներով **«Ընդհանրական Հայրապետ Ազգիս, և գլուխ Համօրէն Ազգին՝ վտուրանելոց ի հեռաւոր ծագս աշխարհի արդեամբք գոլով յաջորդ Գրիգորի Լուսաւորչին մերոյ»:**

Այնուհետև Թաղիադյանը, որպես ականատես և միաբան, հիացմունքով ու ազգային հպարտությամբ նկարագրում է «զշուք և զարտօնութիւն կաթուղիկոսին... յորժամ նա արտաքո ելանէ ի վանացն Էջմիածնի»՝ շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, ծայրագույն վարդապետներով, որոնք ձի նստած կրում են նրա առջևից «զխաչվառն և զգաւազանն հայրապետական...»:

Հայրապետի ճանապարհի վրա ժողովրդական բազմությունները խանդավառորեն դիմավորում են նրան, «վառեն ընդ առաջ նորա զհեծեալս ի քաջարշաւ պատանեկաց, որք ի զանազան խաղս ձիավարժութեան իրեանց սիրալի յօրինեն ոչ միայն զփառս Հայրապետին, այլ զհին և զքաջաբարս նախահարց իւրեանց»[12]:

Թաղիադյանն ապա նույնպիսի խանդավառությամբ նկարագրում է այն հանդիսությունները Մայր Աթոռում, երբ կաթողիկոսը կիրակի օրերին և տոներին 12 արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների ուղեկցությամբ առաջնորդվում է Մայր տաճար:

Առանձին և «մանրապատում» հանդիսավորությամբ նկարագրվում են այստեղ. հայ ժողովրդի սրտին շատ մոտ **սրբալույս մեռոնի մեծահանդես օրհնությունը,** ինչպես նաև **կաթողիկոսական** և **եպիսկոպոսական ձեռնադրությունները:**

Մ. Թաղիադյանը սույն բաժնում խոսում է նաև բացատրություններով իր ժամանակի Մայր Աթոռում գոյություն ունեցող պատասխանատու պաշտոնատարների և պաշտոնների մասին, ինչպիսիք են **տեղապահը,** խորհրդարանի կամ «հոգևորական կառավարության», այսինքն **Սինոդի անդամները, աթոռակալը, գործակալը, ձիթապանը, գինեպանը, տնտեսը, ավագ լուսարարը, գանձապետը, հյուրընկալը, գրագիրը, ծաղկարարը** (ծաղկիչ կամ նկարիչ կոնդակաց հայրապետական), **տպարանապետը, գրքապետը** (գրադարանապետը), **ժամօրհնողը, ժամասացները**[13]:

Սույն գլխում խոսվում է նաև այդ ժամանակի Մայր Աթոռում գոյություն ունեցող հոգևոր ճեմարանի, «խցի և վարժատան», ինչպես նաև «ուսման եղանակի» մասին[14]:

**Հատուած չորրորդ**[15]. «Առաջին ճանապար-

---

[8] Անդ, «Հառաջաբան», էջ 8, 9 և 10:
[9] Անդ, էջ 29—35:
[10] Անդ, էջ 35—72:
[11] Անդ, էջ 73—80;
[12] Անդ, էջ 74:
[13] Անդ, էջ 77—79:
[14] Անդ, էջ 79:
[15] Անդ, էջ 80—115;

հորդութիւն իմ ի Մասիս». այստեղ Մ. Թաղիադյանը խոսում է 1816 թվականի մայիսի 15-ին իր սիրելի ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարադաղցու հետ Էջմիածնից դեպի Մասիս իրենց ճանապարհորդության և ուղևորության ժամանակ այցելած վանքերի, գյուղերի, սրբավայրերի մասին, ինչպիսիք են ս. Հռիփսիմեն, Շողակաթը, Զվարթնոցը, Փարաքարը, Երևանը, Զորագյուղի Անապատը, Նորքը, Քանաքեռը, Գառնին, Գեղարդա վանքը, Դարաչիչակը, Սևանը, նորից Երևանը, ապա Դվինը, Խորվիրապը, Ակոռու ս. Հակոբ վանքը և աղբյուրը Մասիսի լանջին և ապա նկարագրությունը «բարձրաբերձ և երկնանման լեառն Մասիսի»:

Մ. Թաղիադյանը Ակոռի գյուղում եղած ժամանակ «երկու անգամ բարձրացել է Փոքր Մասիսի կատարը»[16]:

Այնուհետև սույն գլխում Մեսրոպ Թաղիադյանը նկարագրում է իր ուղևորությունը դարձյալ Պողոս վարդապետի հետ 1819 թ. հոկտեմբերին դեպի Արագածոտն, Եղվարդ, Օշական, Ուշի, Արկուռի, Կոշ կամ Քուշ, Խանդութի ձոր, Նպատ, Աղավնատուն, Ագռավուց քար, ապա Նախիջևան, Մայր Անդ, Զարվանդ[17]:

**Հատուած հինգերորդ**[18]. «Ճանապարհորդութիւն իմ դէպ յոտն Արագածոյ». այստեղ Մ. Թաղիադյանը պատմում է իր ճանապարհորդությունը դեպի Մուղնու ս. Գեվորգ եկեղեցի, Հովհաննավանք, Սաղմոսավանք, նկարագրում այդ վանքերում կատարված ժողովրդական ուխտագնացությունները, ապա իր այցելությունների մասին Օշական, Աշտարակ, Կարբի, Փարպի, Ապարան, Բյուրական, Տեղեր, Անբերդ: Այստեղ ցանկացել է «ելանել ի բարձրագոյն գագաթն Արագածոյ լերին, ուր է լիճ իմն ջուրց, մայր անհամար վտակաց և աղբերակաց նորուն»[19]: Վերադարձին այցելել է Ագարակ և «Կօշայ սուրբ Սարգիս եկեղեցին»:

**Հատուած վեցերորդ**[20]. «Ճանապարհորդութիւն իմ ի Սիւնիս, 1819». Մ. Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության վերջին գլխի ընդարձակագույն մասը նվիրվել է ոչ թե 1819, այլ 1821 թվականի գարնանը նրա ուղևորությանը դեպի Սյունիք՝ թելադրությամբ Եփրեմ կաթողիկոսի, որպես ուղեկիցը Մայր Աթոռի նվիրակ և լուսարարապետ Դանիել եպիսկոպոսի՝ «Էջմիածնի պարտքերը մարելու նպատակով»[21] նվիրակություն կատարելու:

Այս ուղևորության ժամանակ Մ. Թաղիադյանը այցելում է ճանապարհի մի շարք գյուղեր, ապա Աստաբադ, Ագուլիս, Ցղնա, Դաշտ, Օրդուբադ, Մեղրի, Շուշի, ապա Տաթև, Բռնակոթ, Ջահուկ, Երնջակ:

Մ. Թաղիադյանը վերադարձի ճանապարհին, 1821-ի նոյեմբերին, հանդիպում է Եփրեմ կաթողիկոսին Նախիջևանում, երբ կաթողիկոսը Երևանի պարսիկ խանի «հարկապահանջություն»-ից փախչում էր դեպի Տաթև: Թաղիադյանն այստեղ միանում է հայրապետական շքախմբին, նկարագրում Երևանի խանի հետապնդումներից ազատվելու և ռուսական սահմանն անցնելու համար երեկոյան ժամերգության կատարումը ձիերի վրա նստած, «շարժական եկեղեցի»-ում[22], և ապա իրենց ապահով ժամանումը Շուշի, ձմռան եղանակին, ուր ցարական կառավարությունը սակայն արգելում է կաթողիկոսին՝ շարունակելու ճանապարհն իր սահմաններում, խուսափելու համար պարսկական կառավարության հետ հարաբերությունները վատացնելուց:

Այնուհետև նկարագրվում է Ներսես Աշտարակեցու ռուս կառավարության մոտ ազդու բողոքների վրա, Եփրեմ կաթողիկոսի բազում դժվարություններից հետո, 1822 թվականի սեպտեմբերի 22-ին ժամանումը Հաղբատի վանք[23]:

Եփրեմ կաթողիկոսի թելադրությամբ Թաղիադյանը Հաղբատից Մայր Աթոռ է վերադառնում 1822 թվականի հոկտեմբերին: Ապա նորից Հաղբատ է վերադառնում նոյեմբերի վերջերին, ուր մնում է մինչև 1823 թվականի ապրիլ ամիսը: Մայիսին Մ. Թաղիադյանը, դարձյալ Եփրեմ կաթողիկոսի հրահանգով, գործուղվում է Հնդկաստան՝ Պարսկաստանի վրայով: Այստեղ էլ ավարտվում է Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» ուղեգրության առաջին հատորը, որը ազգագրական, հայրենագիտական բովանդակալից ու արժեքավոր ուսումնասիրություն է, և որպես պատմություն «ժամանակաշրջանի վկայությունն է դարաշրջանի մասին» («Էջմիածին», 1956, սեպտ., էջ 94):

«Գրական ժառանգություն» մատենաշարի 9-րդ հատորում հրատարակվել է, առաջին անգամ լինելով, «Ճանապարհորդութիւն Մ.

[16] Անդ, «Ծանոթագրություններ», էջ 548:
[17] Անդ, էջ 104—114:
[18] Անդ, էջ 115—130:
[19] Անդ, էջ 126:
[20] Անդ, էջ 130—198:
[21] Անդ, «Ծանոթագրություններ», էջ 550:
[22] Անդ, էջ 153:
[23] Անդ, «Ծանոթագրություններ», էջ 555:

Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան», հատոր Բ[21], որը համարվում է վաստակաշատ հեղինակի «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության երկրորդ մասը[22]:

Սույն ժողովածուում տեղ են գտել նաև Թաղիադյանի շուրջ 40 **հրապարակախոսական հոդվածներ,** որոնց մեծ մասը լույս է տեսել՝ Կալկաթայում նրա հրատարակած «Ազգասէր» (1845) և «Ազգասէր Արարատեան» (1848) պարբերականներում[23], նամակներ, ճառեր, դիմումներ[27] և իր կյանքի ու գործունեության վերաբերյալ վավերագրեր[28], որոնք չափազանց կարևոր, պատմական նշանակություն ունեն և՛ մշակութային, և՛ հայրենասիրական, և՛ հայագիտական առումներով:

Մ. Թաղիադյանի նամակներից պետք է հիշել մանավանդ 1828 թվականի հոկտեմբերի 8-ին Կալկաթայից Ներսես Աշտարակեցուն[29] և նույն թվականի նոյեմբերի 1-ին, դարձյալ Կալկաթայից՝ Երևանի «աստուածասէր և ազգասէր հասարակութեան հայոց» գրած նամակները[30]:

Սույն երկու նամակները բացառիկ նշանակություն ունեն:

Աշտարակեցուն գրած նամակում Թաղիադյանը նրան առաջարկում է ամբողջ «հայության ազգային լուսավորության և կուլտուրական շինարարության մի ընդարձակ ծրագիր, ուր բացահայտված են երիտասարդ լուսավորչի խորհրդածությունները ազատագրված հայրենիքի հոգևոր զարթոնքի ու վերածնության բացված նոր ուղիների մասին»[31]:

1828 թվականի նոյեմբերի 1-ին Կալկաթայից երևանցիներին գրած նամակում «Թաղիադյանը առաջինը ողջունեց Արևելահայաստանի ազատագրումը Պարսից լծից և միակցումը Ռուսաստանին»: «Փառք բարերարին Աստծոյ,—գրում է նա,—որ այսուհետև ավելի նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտիր անվանիք, ձեր ազգասիրության՝ իմաստության լուրն և արվեստից առաջադիմությունն բոլոր աշխարհ պիտիր տարածվին»:

Նույն նամակում Թաղիադյանը թելադրում էր նաև երևանցիներին, որ դպրոցներ բացեն, որպեսզի երեխաները «դատարկ քուչեքումը ման չկան», և նրանց կոչ էր անում.

«Ա՜խ, իմ լավ քաղաքացիք, ա՜խ, հոգիս հարայա է կանչում, հին խմորն թողեք, նոր ազգի լուսավորության և պայծառության հետևեցեք»[32]:

«Գրական ժառանգություն» մատենաշարի 9-րդ հատորում տեղ չեն գրավել Մ. Թաղիադյանի այլ աշխատություններ:

Մ. Թաղիադյանը եղել է նաև հայրենաշունչ վիպասան: Նրա գրչին են պատկանում «Սոս և Սոնդիպի», «Վէպ Վարդգէսի», «Վէպ Վարսենկան» հայրենասիրական չափածո վիպասանությունները:

Մայր Աթոռի միաբան և սարկավագ Մեսրոպ Դ. Թաղիադյանն իր ստեղծագործական ուժերի հասունության շրջանում, 55 տարեկան հասակում, Պարսկաստանի Շիրազ քաղաքում իր աչքերը փակեց, 1858 թվականին՝ «ծանր տառապանքներով, անհայտության և անհուսության մատնված»[33]:

Բայց երախտագետ հայ ժողովուրդը չմոռացավ երբեք իր վաստակաշատ զավակին:

1975 թվականի վերջերին Երևանում՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի և ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդների որոշումով լույս տեսած

«Մեսրոպ Թաղիադյան
Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ
վավերագրեր»

մատենաշարն արժանավոր ու անմոռաց մի **հուշարձան է մեծ մանկավարժի, ականավոր գրողի ու ջերմ հայրենասերի պայծառ կյանքին ու գործունեությանը նվիրված:**

Ա. Հ.

---

[24] Անդ, էջ 203—372:

[25] Անդ, «Ծանոթագրություններ», էջ 557: Տե՛ս նաև «Հառաջաբան», էջ 5:

[26] Անդ, էջ 295—373:

[27] Անդ, էջ 377—475:

[28] Անդ, էջ 479—532:

[29] Անդ, էջ 390—395:

[30] Անդ, էջ 410—413:

[31] «Հառաջաբան», էջ 5—6:

[32] Անդ, էջ 412:

[33] «Հառաջաբան», էջ 21:



Լ. ՀԱՋՅԱՆ

# ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԸ Ի. Ա. ԿՈՒԼՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Ս. Էջմիածնի վաստակաշատ միաբանության անդամների շարքում իր առանձին ու հաստատ տեղն ունի Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը: Ծնվել է 1812 թվականի մայիսի 12-ին Ղրիմի Թեոդոսիա քաղաքում: Հինգ տարեկանից հաճախում է Թեոդոսիայի գավառական դպրոցը: Յոթ տարի այստեղ սովորելուց հետո աշակերտում է հ. Մինաս Բժշկյանին, իսկ 1826 թվականին մեկնում է Վենետիկ, ս. Ղազար՝ Մխիթարյան միաբանության դպրոցում իր ուսումը կատարելագործելու նպատակով: Այստեղ նա աշակերտում է վաստակաշատ հայագետներ հ. Մկրտիչ Ավգերյանին, հ. Մանուել Ջախջախյանին և հ. Միքայել Չամչյանին: Բնածին ընդունակություններն ու ստացած կանոնավոր կրթությունը շուտով տալիս են դրական արդյունք: Գ. Այվազյանը մասնակցում է «Հայկազյան» և «Առձեռն» բառարանների ստեղծմանը, ինչպես նաև, բացառության կարգով, դեռ նախքան քահանայական աստիճան ստանալը, նշանակվում է ուսումնարանի՝ սկզբում եվրոպական և արևելյան լեզուների, ապա նաև՝ փիլիսոփայության և աստվածաբանության ուսուցիչ: Նա միաժամանակ վարում է միաբանության ընդհանուր քարտուղարի դժվարին պաշտոնը: Տակավին երիտասարդ Գաբրիելը 1836 թվականին գրում է «Համառոտ պատմութիւն Ռուսաց» աշխատությունը, որով իր ընթերցողներին ծանոթացնում է Ռուսաստանի պատմության Ռյուրիկ իշխանից մինչև Նիկոլայ 1-ի թագավորության հինգերորդ տարին ընկած ժամանակաշրջանին: Նրա հաջորդ՝ «Պատմութիւն Օսմանեան պետութեան» գործը ստվարածավալ աշխատություն է, որը զգալի հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ ազգագրական առումով:

Որքան էլ բազմազբաղ, այնուամենայնիվ նա հետամուտ է լինում ամսագիր հրատարակելու իր վաղեմի ձգտմանը, և ահա 1843 թվականին նրա ջանքերով հիմնվում է «Բազմավէպ»-ը: Վեց տարի շարունակ հմտորեն խմբագրելուց հետո, նա այդ գործը հանձնում է իր լավագույն աշակերտ հ. Ղևոնդ Ալիշանին, իսկ ինքն անցնում է Փարիզ՝ ղեկավարելու համար տեղի Մուրադյան վարժարանը:

Նշանակալից է եղել անվանի գիտնական ու բանաստեղծ հ. Ղ. Ալիշանի հասունացման գործում Գաբրիել վարդապետ Այվազյանի դերը: Նա Ալիշանի «...երիտասարդութեան ժամանակակից ոգին էր, իր տարօրինակ խանդավառ գործունէութեամբ ամբողջ երիտասարդութեանը դէպ ի գործ ն դէպ ի անխոնջ աշխատանք կը մղէ...»[1]:

1848 թ. Փարիզի Ունիատ ակադեմիան Այվազյանին շնորհում է դոկտորի կոչում: Մուրադյան վարժարանում ծագած «կաթոլիկ—ոչ կաթոլիկ» վեճերի հետևանքով Գ.

[1] Հ. Ս. Երեմ, Կենսագրութիւն հ. Ալիշանի, ս. Ղազար, 1902, էջ 104:



Տ. ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՑՎԱՋՑԱՆ

վարդապետ Այվազյանը թողնում է դպրոցը, միաժամանակ հրաժարվելով նաև Մխիթարյան միաբանությունից[2]: Իր երեք ընկերների հետ Փարիզում նա հիմնում է Հայկազյան վարժարանը, որին զուգահեռ հրատարակում է մի նոր պարբերական՝ «Մասեաց աղաւնի»-ն: Այս շաբաթաթերթը լույս էր ընծայվում 1855 թ. սկսած՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներով: Ֆրանսիացի ընթերցողին մատուցվում էին հիմնականում հայ ժողովրդի մշակութային հարուստ անցյալը ներկայացնող նյութերը, հայերեն տպագրվում էին պատմական, գրական, ազգագրական, ինչպես նաև քաղաքականության, արհեստներին վերաբերող տեղեկություններ:

Գաբրիել վարդապետ Այվազյանը, մղված իր նոր համոզմունքներից և ընդառաջելով իր եղբոր՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու թախանձանքին[3], դիմում է Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցուն՝ խնդրելով ընդունել իրեն Մայր եկեղեցու գիրկը: Ս. Էջմիածնի միաբանությունն ընդունում է նրան իր շարքերում: 1857-ին Գաբրիել վարդապետը վերադառնում է Ղրիմ, նշանակվում Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ: Հիմնում է Խալիպյան վարժարանը, տպարանը և շարունակում հրատարակել «Մասեաց աղաւնի»-ն, այս անգամ արդեն՝ հայերեն ու ռուսերեն:

1867 թ. Գևորգ Դ կաթողիկոսը նրան նշանակում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ, ձեռնադրում եպիսկոպոս և նշանակում ս. Էջմիածնի Սինոդի անդամ: 1875 թ. նույն կաթողիկոսի կոնդակի համաձայն նշանակվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ՝ նկատի ունենալով այն, որ նա «...դաստիարակության կենսական խնդրով և արդյանց մեջ ևս ունեցած ողջամիտ՝ բազմաւորձ հմտությունն և հաջողականությունն մեծ գրավական պիտի լինի ճեմարանի ապագայի համար, և կհուսամք որ կարևոր աջակցությամբ և օժանդակությամբք նպաստավորյալ՝ Աստուծով կհաջողի իր մեծ անվան և բազմաւորձ հմտությանցն համաձայն մեծ և փառավոր արդյամբք զարդարել և ճոխացնել զճեմարան Մայր Աթոռույս, և Վեհ. Հայրապետի՝ ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցվո և Ազգի արդար և մեծահուս ակնկալությունը պսակել, միանգամայն առավել ևս շքեղացնել և պայծառացնել իր մեծահամբավ և արժանավոր անունը և փառքը»[4]:

Նույն թվականին նրան հանձնվում է Վրաստանի և Իմերեթի թեմակալությունը՝ արքեպիսկոպոսական պատվի հետ միաժամանակ:

Իր կյանքի վերջին տարիներին նա առանձնակի ավանդ է ներդրել Ներսիսյան դպրոցի, ինչպես նաև իր առաջնորդական տարիներին հիմնված Մարիամյան դպրոցի գործունեության մեջ:

1880 թվականի ապրիլի 28-ին իր մահկանացուն է կնքում Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը՝ ապրելով 68 տարվա բովանդակալից կյանք:

*
* *

Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը թողել է հրապարակախոսական, մատենագրական, կրոնա-եկեղեցական շուրջ երեսուն աշխատություններ, որոնցից հիշենք հետևյալները.

«Համառոտ պատմութիւն Ռուսաց» (Վենետիկ, 1836), «Դասագիրք մեկնութեան խորհրդոց և արարողութեանց սրբոյ պատարագին» (Թեոդոսիա, 1870), «Խանգարմունք հայերէն լեզուի ի հնումն և ի նորումս» (Թեոդոսիա, 1869), «Հազար ու մի առակաւոր բանք» (Կ. Պոլիս, 1875), «Յանոս և կամ յաղագս անսխալութեան պապին» (ս. Էջմիածին, 1871), «Ուղղագրութիւն լեզուիս Հայոց» (Թեոդոսիա, 1869), «Վարք Քրիստոսի» (Փարիզ, 1854), «Տրուլի խորհրդածութիւնք» (Փարիզ, 1854), «Քրիստոնէական վարդապետութիւն կամ վարդապետարան» (Փարիզ, 1855), «Ծրէնք վայելուչ կենցաղավարութեան» (Փարիզ, 1854), «Հռոմէական եկեղեցին ոչ ևս է կաթողիկէ եկեղեցի, Միշոյ բահանայի Փարիզեցոյ» (թարգմ. Վաղարշապատ, 1878):

[2] Այս մասին տես. **Գաբ. եպիսկ. Այվազյան**, Պատմութիւն վերադարձի երից վարդապետացս ի ծոց Հայաստանեաց ս. եկեղեցւոյ, վերադարձ և չորրորդին տ. Խորենայ Գալֆայեան քերթող վարդապետի, Փարիզ, 1858:

[3] Գաբրիելի կրտսեր եղբայրը՝ Հովհաննես Այվազովսկին, շատ բան է արել տեսնելու համար Ղրիմն առանց կաթողիկների: Այս մասին նա հաճախ ակնարկել է իրեն այցելող ու հյուրընկալվող բարձրաստիճան անձանց շրջանում, բայց չտեսնելով շոշափելի որևէ արդյունք, 1846 թվականին մի նամակով (Մատենադարան, արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 121, վավ. 15) դիմում է Ներսես Ե կաթողիկոսին՝ շարադրելով իր, ինչպես նաև շատ-շատերի իղձը՝ հետացնել Միխիթարյաններին Տավրիկյան նահանգից, ուր նրանք պատակտում են առաջացնում հայոց մեջ:

[4] «Արարատ», Էջմիածին, 1875, էջ 230:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանին, որպես Ի. Ա. Կռիլովի առակների հմուտ թարգմանիչ:

*
* *

19-րդ դարի 30-ական թվականներից սկսած հայ գրական գործիչների շրջանում երևան է գալիս առանձնակի հետաքրքրություն ռուս առակագիրների, հատկապես Կռիլովի նկատմամբ: Ռուսական առակների թարգմանությանը ձեռնամուխ են լինում Հարություն վարդապետ Ալամդարյանը, Խաչատուր Աբովյանը, Հարություն Քյոքչյանը և ուրիշներ[5]:

Առակագրությանն իր էջերում որոշակի տեղ է հատկացնում ժամանակի մամուլը: Իր հրատարակման առաջին իսկ տարվանից «Բազմավէպ»-ում Գաբրիել վարդապետ Այվազյանն սկսում է տպագրել ինչպես հայ ժողովրդական, այնպես էլ առանձին հեղինակների առակներ:

Գիտակցելով առակի դերն ու նշանակությունը ժողովրդի մշակութային կյանքում, տիրապետելով բազմաթիվ լեզուների և ունենալով ստեղծագործելու ակնհայտ ձիրք, 40-ական թվականներից սկսած Գաբրիել վարդապետ Այվազյանը թարգմանում է Կռիլովի, ինչպես նաև Եզովպոսի, Բաբրիուսի ու Լաֆոնտենի առակները, որոնք առաջին անգամ լույս են տեսնում «Բազմավէպ»-ի էջերում: Թարգմանիչը միաժամանակ համապատասխան հոդվածով ներկայացնում է առակի մասին ունեցած իր տեսակետները:

Անդրադառնալով Կռիլովի առակների Այվազյանի կատարած թարգմանություններին, Լեոն ժամանակին գրել է. «Չի կարելի մոռանալ ռուս առակախոս Կռիլովի առակների այն թարգմանությունը, որ կատարել է Գաբրիել վարդապետ Այվազյանը: Որպիսի չքնաղ պարզություն, որքան ընդբություն՝ հեգնություն, ծաղր արտահայտելու համար: Այդ գործը կարելի է համարել մեր աշխարհաբար բանաստեղծական գրականության պարծանքներից մեկը»[6]:

Գաբրիել վարդապետ Այվազյան-մտավորականի մասին բարձր է արտահայտվել նաև Աշոտ Հովհաննիսյանը. «Այվազովսկու գրական ունակությունների մասին վկայում են Կռիլովի առակների թարգմանությունները, այլև նրա հայտնի օսմանյան պատմությունը: Նալբանդյանը դասում է նրան «գրական վարդապետների» շարքին, արժեք տալիս նրա պատմաբանական գրվածքներին և նրա ընտիր հայախոսությանը: Ավելացնենք այս ամենին նրա քարոզչական ձիրքը և նրա պատկերավոր լեզուն...»[7]:

Սկզբնական շրջանում առակները գրաբարով թարգմանելն ընդհանուր երևույթ է եղել, ինչպես երևում է մեր կազմած տախտակից: Այդպես են վարվել բոլորը, այն տարբերությամբ միայն, որ հետագայում ոմանք ընդհանրապես դադարել են թարգմանելուց, ոմանք անհրաժեշտ են համարել գրաբարը փոխարինել աշխարհաբարով:

Այդպես է վարվել նաև գրաբարի մասին մեծ համարում ունեցող Գաբրիել վարդապետ Այվազյանը, որը, Կռիլովից ընդամենը հինգ առակ գրաբար թարգմանելուց հետո, անցնում է աշխարհաբար թարգմանությանը: Ավելին, նա հետագայում քննադատում է սկզբնական շրջանում իր և իրենից առաջ ուրիշների կողմից գրաբար կատարված մի քանի թարգմանությունները[8]: Այս կապակցությամբ գրել է. «Եվ որովհետև առակին մեծ կատարելությունը պարզ և ընտանի ոճով գրված ըլլալն է, առակ գրող հեղինակներուն մեջ անոնք միայն երևելի և անվանի եղեր են ամեն ազգաց մեջ, որոնք որ ուրիշներեն ավելի պարզ ու բնական ոճ մը ունեցեր են: Ասով կիմացվի, որ հին լեզուներով առակ գրելն ու միանգամայն աս պարզությունը և բնականությունը պահելը կրկին դժվարություն ունի, ուստի մեր լեզվին մեջ ալ գրաբար գրված առակները չեն կրնար իրենց վախճանին ինչպես որ պետք է հասնիլ, որովհետև գրաբարը վսեմ ծանրություն մը ունի, որ շատ դժվարությամբ կհարմարի ընտանի բացատրությանց: Աշխարհաբարը ավելի հարմար կերևա աս տեսակ թեթև գրվածքներու...»[9]:

1865 թվականին Այվազյանը հրատարակության է ներկայացնում իր հատընտիր

---

[5] Մեր հոդվածի վերջում կարևոր համարեցինք մի առանձին աղյուսակով ներկայացնել 19-րդ դարում Կռիլովին թարգմանած հայ հեղինակների ցանկը՝ նշելով նրանց թարգմանած առակների քանակը, լեզուն, հրատարակության տարեթիվն ու վայրը:

[6] Լեո, Ռուսահայոց գրականություն, Վենետիկ, 1904, էջ 51—52:

[7] **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, էջ 261:

[8] Գրաբարով թարգմանվել են շուրջ վեց տասնյակ առակներ. Հակոբ Տեր-Զաքարյանի, Համազասպյանի, Հարություն Քյոքչյանի և Այվազյանի կողմից:

[9] «Բազմավէպ», Վենետիկ, 1846, էջ 54:

թարգմանությունների անդրանիկ գրքույկը՝ «Առակք Քռիլովի»: Այն կազմված էր հիմնականում Ռուսաստանի հայկական դպրոցներում սովորող մանուկների համար: Գրքույկում տեղ էին գտել նաև Կռիլովի այն բոլոր առակները, որոնց թարգմանությունները նախապես տպագրվել էին «Բազմավէպ» և «Մասեաց աղաւնի» պարբերականներում: Այն ընդգրկում է 91 առակ: Գրքույկն արագորեն սպառվեց: Դա խորապես ոգևորեց Այվազյանին. նա հինգ տարվա ընթացքում Կռիլովից թարգմանեց բազմաթիվ առակներ՝ ստեղծելով 197 առակից կազմված մի նոր ժողովածու, որպեսզի «ազգային արդի մատենագրության մեջ ավելնա Քռիլովի պես ընտիր հեղինակի մը առակներուն մեկ ամբողջ թարգմանությունը»[10]:

Թարգմանիչն իր ձեռքի տակ իբրև բնագիր ունեցել է դեռևս Կռիլովի կենդանության օրոք, 1840 թ., հրատարակված վերջին առակագիրքը: 1870 թ. տպագրված «Առակք Քռիլովի» ժողովածուն կազմելիս Գաբրիել եպիսկոպոս Այվազյանը պահպանել է Կռիլովի հրատարակության 9 գրքերի դասավորությունը: Այն ունի սեղմ առաջաբան, ինչպես նաև «Վարք Յովհաննու Քռիլովի» բնութագիր-կենսագրականը, որը գրել էր Կռիլովին ժամանակակից ու մտերիմ Պ. Ա. Պլետնյովը: Այդ «Վարք»-ով ընթերցողը հնարավորություն էր ստանում ծանոթանալու ոչ միայն Կռիլովի առակների ստեղծագործական մեթոդներին, այլև նրա կյանքին ու գրական գործունեությանը: Թարգմանիչը ժողովածուին կցել էր նաև արժեքավոր ծանոթագրություններ:

Անդրադառնալով Այվազյանի թարգմանչական սկզբունքներին, հարկ ենք համարում նշել, որ կռիլովյան առակները նա թարգմանել է՝ ելնելով զուտ գրական-ստեղծագործական իր հետաքրքրություններից: Այս կամ այն առակը որևէ առիթով նա տպագրել է նաև մամուլում՝ ուղղելով այն որոշակի նշանակետի: Օրինակ. 1856 թ. «Մասեաց աղաւնի» ամսագրում տպագրված «Գայլն ու գառը» առակին նախորդում է մի հոդված, ուր խոսվում է Մոլդավիայում հայկական գաղութի ստեղծման, ինչպես նաև նրան տրված շոշափելի արտոնությունների մասին. «Հայերը,—գրում է Այվազյանը,—ամեն անգամ որ Մոլդավիա եկեր են, հետերնին բերած են իրենց հարբստությունն ու ճարտարությունը և գործնական կերպով հասարակաց օգտակար բաներուն մեջ շատ օգնություն բրած են...»[11]: Նրանց տրված բազմաթիվ արտոնությունների շնորհիվ որոշ հայ իշխաններ հասնում են նույնիսկ մոլդավական իշխանական աթոռին նստելու պատվին: Ապա հոդվածագիրը միաժամանակ նշում է այն անարդար վերաբերմունքի մասին, որին հետագա դարերի ընթացքում արժանացել են հայերը: Հոդվածում այդ վիճակից դուրս գալու ելքը մատնացույց չի արված: Սակայն դրանից անմիջապես հետո տպագրված առակն ասես մի բարոյախոսական բացատրական է, որն ընթերցողի կողմից մտովի առնչվելու է հոդվածի բովանդակությանը:

«Գայլն ու գառը» առակը ամենից սիրվածներից է: Այն հաճախ թարգմանվել է նաև գրական ուրիշ գործիչների կողմից: Այդ առակի հիմնական ֆաբուլան, ինչպես նաև առակի ստեղծման մոտիվները շատ հին են և ըստ ավանդության գալիս են Եզովպոսից (6-րդ դար մ. թ. ա.):

Կռիլովի առակներում հաճախ օգտագործվող ժողովրդական այս կամ այն արտահայտությունը ճիշտ վերարտադրելու համար ամենից առաջ թարգմանչից պահանջվում էր լավատեղյակ լինել ժողովրդական բառ ու բանին: Գաբրիել վարդապետ Այվազյանի աշխատություններից երկուսը («Հազար ու մի առակավոր բանք», Կ. Պոլիս, 1874 թ., և «Խրիմու հայոց լեզվով շարադրված առակներ», Ռոստով Դ/վ., 1875) բացահայտում են նրա նման բանահավաք լինելը: Ռուսական արտահայտության համարժեքը գտնելու համար նա սովորաբար դիմել է ժողովրդի լեզվամտածողությանը, երբեմն միայն՝ իր երևակայությանը: Այսպես, օրինակ, «Обезьяны»[12] առակի «украдкою глядела» արտահայտությունն Այվազյանի թարգմանությունում դարձել է «Կը ծղկըլտար՝ աչքը տընկած կը նայեր»: **Ծկլտալ, ծկլալ** ժողովրդական ծագում ունի, որ նշանակում է սաստիկ հետաքրքրությամբ նայել, լավ տեսնելու համար ծակուծուկ տեղերից նայել[13], ինչպես նաև «գաղտուկ տեղե մը նայիլ՝ ինքը անտեսանելի մնալով»[14], և այլն:

[10] «Առակք Քռիլովի», Կ. Պոլիս, 1870, էջ 2:

[11] «Հայոց ազգին ընկերական վիճակը ի Մոլտավիա», «Մասեաց աղաւնի», 1856, էջ 53: Հոդվածը տպված է եղել Կոստանդնուպոլսի «Փրես տ'Օրիան» անունով ֆրանսերեն լրագրում, որտեղից և թարգմանված է Ս. Գրանխոյլանցի կողմից:

[12] **И. А. Крылов**, Басни, стр. 24.

[13] «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 312:

[14] Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 519:

18—19-րդ դդ. թարգմանիչները, իրենց ընթերցողին հյութն ավելի մատչելի դարձնելու նպատակով, հետևողականորեն թարգմանում էին նաև անձնանունները, երբեմն, եթե դա հնարավոր էր, նույնիսկ տեղանունները: Այս երևույթն իր արձագանքը գտավ նաև Այվազյանի թարգմանություններից մի քանիսում:

Լավագույն թարգմանության օրինակ կարող է ծառայել «Демьянова уха» առակը: Այվազյանի թարգմանությունում հայացված է հնարավոր ամեն ինչ: Գործող անձերից, օրինակ, Демьян-ը դարձել է՝ Թաթուլ, Фока-ն՝ Խեչո: Ճաշատեսակը, որ է уха, թարգմանված է «գալաճոշ»՝ այդ կապակցությամբ տալով հետևյալ բացատրությունը. «Բնագրին մեջ ուխա է, այսինքն՝ ձկնաթան կամ ձկնապուր, մեք գալաճոշ դրինք իբրև շատ հայաստանցվոց ծանոթ ապուր, որ չոր թանով, մսով, խյուսով ու սխտորով կեփվի»[15]: Հայացված է նույնիսկ հյուրասիրության ձևը՝ հյուրասիրությամբ «խեղդելու» տանտիրոջ սովորությունը:

Գաբրիել արքեպ. Այվազյանի թարգմանությունները տեղայնացման առանձնահատկություններից բացի աչքի են ընկնում բազմաթիվ արժանիքներով, ինչպես նաև ռիթմի ու տաղաչափության հարազատ զուգորդությամբ: Նրա կատարած թարգմանություններում շարժումը նկարեն է, դառնում է շարժանկար: Այս թարգմանությունները տարբեր են նրանից առաջ և հետո կատարվածներից:

Գաբրիել Այվազյանի թարգմանությունները ժամանակին ընդգրկվել են դասագրքերում ու ընտիր ժողովածուներում:

Լազարյան ճեմարանի հրատարակած «Ընտիր հատուածք»-ում տեղ են գտել նաև Այվազյանի թարգմանած 7 առակները, որոնցից երկուսը («Էշ և սոխակ» ու «Երաժիշտք») Կռիլովի, մնացած հինգը Լաֆոնտենի, Փեդրոսի և Փիներթիի առակների թարգմանություններն են՝ կատարված 1843—45 թվականների ընթացքում: Ավելի կոնկրետ. Կռիլովի առակներից «Էշ և սոխակ»-ը առաջին անգամ տպագրվել էր 1843 թ., իսկ «Երաժիշտք»-ը՝ 1844 թ., երկուսն էլ «Բազմավէպ»-ում, որտեղից և, մի քանի մանր վրիպակներով, ճեմարանցիներն արտատպել էին իրենց հիշյալ ժողովածուում: Հետագայում իրենց կազմած դասագրքերում դրանց տեղ են հատկացրել նաև Ղազարոս Աղայանն ու Հովհաննես Թումանյանը: Հայ թարգմանիչներից շատերը հետևել են Այվազյանի թարգմանական սկզբունքներին: Այսօրվա թարգմանություններում իսկ շատ են ուղղակի փոխառությունները նրա թարգմանություններից:

Այն, որ Այվազյանը թարգմանության համար ընտրեց Կռիլովի առակները, պատահական չէր: Անհատական գնահատականից ու նկատառումներից զատ թարգմանիչը հաշվի էր առնում դրանց համամարդկային արժանիքներն ու վայելած ընդունելությունը: Դրանք Ի. Ա. Կռիլովին դափնիներ բերին նրա կենդանության իսկ օրոք, մի հեղինակ, որն ականատես դարձավ իր առակագրքերի 18-րդ հրատարակությանը:

Վաղ ժամանակներից առակներին քաջածանոթ հայ ժողովուրդը նույնպես սիրով պիտի ընդուներ ռուս մեծ առակագիր Կռիլովի ստեղծագործությունը: Նա գիտակցում էր, որ, բացի զուտ գեղարվեստական արժեքից, առակը «բանաստեղծության մեկ տեսակն է, որ մարդուս միշտ սիրելի եղած է, վասնզի քիչ խոսքով շատ բան կհասկցնե, առանց նեղացնելու կիրատե, առանց սիրտ կոտրելու կհանդիմանե ու առանց ձանձրացնելու կամ հոգնեցնելու կզվարճացնե...»[16]:

Գաբրիել արքեպ. Այվազյանի թարգմանությունները բարձր գնահատելով, անվանի գրականագետ Արսեն Տերտերյանը Կռիլովի մահվան 100-ամյակի առթիվ հրատարակած իր գրքույկում թեև նշում է, որ նրա թարգմանություններում կան նաև գրաբարյան ու խիստ բարբառային կնիք կրող մի շարք տողեր, որոնք անհասկանալի են դարձնում Կռիլովի բյուրեղանման պարզ առակները, սակայն դրանք, մեր կարծիքով, ժամանակի լեզվամտածողությունը դրսևորող արտահայտչաձևեր լինելով, չեն կարող նսեմացնել նրա աշխատանքը: «...Այս բոլորը չի խանգարում ասել,—այնուհետև եզրակացնում է Տերտերյանը,—որ նրա թարգմանությունը ոչ միայն պատմական արժեք ունի, այլև այսօր էլ իր շատ էջերով մի չգերազանցված գործ է...»[17]:

Ավելորդ չենք համարում այս առիթով բերել թարգմանչի բացատրությունը. «Այսու սկզբամբ ջանացինք նաև մեր աշխատության մեջ ընդհանրապես չհեռանալ Տաճկաստանի հայոց մաքուր աշխարհաբարեն. բայց երբեմն՝ ուր որ իմաստիս ցոլք

[15] «Առակք Քռիլովի յինն գիրս», Կ. Պոլիս, 1870, էջ 213:

[16] «Բազմավէպ», 1843, էջ 47:

[17] **Ա. Տերտերյան**, Ռուս մեծ առակախոս բանաստեղծը, Երևան, 1944, էջ 81:

ու կենդանություն տալու բաղձանքեն ստիպվեցանք նաև ուրիշ աշխարհաբարներու, ևս և հասարակ տաճկերենի խոսքեր, ոճեր, մասնիկներ փոխառությամբ ի գործ դնելու, լավ համարելով զոհել երբեմն մեր անկանոն աշխարհաբարին հստակությունը առակաց ճիշտ թարգմանության, քան թե թարգմանության ճշտությունը հստակության»[18]:

Գաբրիել արքեպ. Այվազյանի աշակերտ ու կենսագիր Նիկողայոս Քարամյանցի վկայությամբ, Այվազյան-թարգմանիչը, նույնիսկ գրեթե զրկված լինելով տեսողությունից, օգնական ունենալով իր աշակերտներին, մինչև իր կյանքի վերջին օրն իսկ «զբաղված էր Կռիլովի առակների սրբագրությամբ, որոնց լեզուն փոփոխում էր և ավելի արևելյան աշխարհաբարին մոտեցնում, գավառաբարբառը սրբագրում և փոփոխում թեթևակի»[19]:

Ինչպես ասում են, բանաստեղծության թարգմանիչը բանաստեղծ պետք է լինի: Գաբրիել արքեպ. Այվազյանի թարգմանությունները մեզ ներկայացնում են ոչ միայն Կռիլովի գեղեցիկ առակները, այլև թարգմանչի գեղարվեստական բարձր ճաշակն ու հմտությունը: Որոշ առակների թարգմանություններում դրանք հասնում են կատարելության:

Գաբրիել արքեպ. Այվազյանն, ամենայն հավանականությամբ, անձամբ ծանոթ չի եղել Կռիլովի հետ: Կռիլովը մահացել է 1844 թ., երբ Այվազյանը նոր էր սկսում տպագրել նրա առակների թարգմանությունները Վենետիկում: Բայց Կռիլովը նրա կրտսեր եղբոր՝ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու արվեստի երկրպագուն էր, և մտերմական հարաբերություն կար ալեզարդ առակագրի ու երիտասարդ, խոստումնալից հայ նկարչի միջև:

1896 թ., Գաբրիել արքեպ. Այվազյանի մահից 16 տարի անց, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հրամանով, անփոփոխ վերահրատարակվում է «Առակք Քռիլովի» 9 գրքերից (բաժիններից) կազմված ժողովածուն՝ թարգմանչի ընդարձակ կենսագրությամբ:

Ըստ ամենայնի սա պերճախոս մի ապացույց է հայ իրականության մեջ Կռիլովի առակների ունեցած մեծ ընդունելության, լայն ժողովրդականության:

[18] «Առակք Քռիլովի», Կոստանդնուպոլիս, 1870, էջ Ը:

[19] «Առակք Քռիլովի», Վաղարշապատ, 1896, էջ ԾԹ:

ՑԱՆԿ Ի. Ա. ԿՌԻԼՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (19-ՐԴ ԴԱՐ)

| Թարգմանչի ազգանունը | Թվականը | քանակը | լեզուն | | Որտե՞ղ է հրատարակվել |
|---|---|---|---|---|---|
| | | | գրաբ. | աշխ. | |
| Հարությունի վրդ. Ալամդարյան | 1814—1821 | | | | Մոսկվա |
| Ա. Աբովյան | 1834—1840 | 10 | 2 | 10 | Երևան |
| Հ. Տեր-Զաքարյան | 1841—1845 | 9 | 9 | — | Ախալցխա |
| Հ. Համազասպյան | 1843 | 7 | 7 | — | Թիֆլիս |
| Գաբրիել վրդ. Այվազյան | 1843—1870 | 197 | 5 | 197 | Վենետիկ, Փարիզ, Թեոդոսիա |
| Հ. Գեորգ Հյուբմյուլ | 1844 | 1 | 1 | — | Վենետիկ |
| Հ. Բյուքչյան | 1849 | 27 | 27 | — | Մոսկվա |
| Գ. Պատկանյան | 1850 | 3 | — | 3 | Թիֆլիս |
| Ե. Խաչատրյան | 1850 | 2 | 2 | — | Թիֆլիս |
| Գ. Դոդոխյան | 1850 | 6 | — | 6 | Դորպատ Սիմֆերոպոլ |
| Ստ. Բաստամյանց | 1850 | 1 | 1 | — | Վենետիկ |
| Մ. Մոերյանց | 1852 | 2 | 2 | — | Մոսկվա |
| Ս. Մանդինյան | 1858 | 1 | — | 1 | Թիֆլիս |
| Մ. Հարությունյան | 1859 | 1 | — | 1 | Վան |
| Ս. Վարշամյանց | 1860 | 2 | — | 2 | Թիֆլիս |
| Հ. Ղուկասյան | 1860 | 1 | — | 1 | Թիֆլիս |
| Գ. Տեր-Ալեքսանդրյանց | 1863—1865 | 4 | — | 4 | Թիֆլիս |
| Ս. Խալաթյանց | 1864 | 1 | — | 1 | Թիֆլիս |
| Ն. Գ. Մ. | 1864 | 2 | — | 2 | Արմաշ |
| Տ. Լիոնյան | 1865 | 8 | — | 8 | Կ. Պոլիս |
| Ն. Լալայանց | 1868—1869 | 2 | — | 2 | Թիֆլիս |
| Բ. Բուշնելյան | 1878—1894 | 25 | 5 | 20 | Վենետիկ |
| Մ. Լիխանյան | 1885 | 1 | — | 1 | Թիֆլիս |
| Ղ. Աղայան | 1885 | 4 | — | 4 | Թիֆլիս |
| Ա. Բահաթրյանց | 1886 | 30 | — | 30 | Շուշի |
| Ա. Նալբանդյան | 1900—1904 | 8 | — | 8 | Թիֆլիս |



Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

# ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (՞) ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ՆՈՐԱՎԿԱՅԻ (+902—903 ԹԹ.) ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՎԱՐՔԸ*

6. Անա այսպիսիք էին երանուհու սխրանքները, այդ հրաշալի կնոջ առավելությունները, որոնց ունկնդիրները կամ ականատեսները ապշում էին, իսկ Աստված՝ փառավորվում: Երբ նրա երկրորդ որդին էլ վախճանվեց, նա դժբախտությունը ուրախությամբ տարավ: Շատ չանցած նա դարձյալ հղիացավ ու երկվորյակներ աշխարհ բերեց: Նրանց հետ հենց ծնվելու պահին հրաշք կատարվեց. երկվորյակներից առաջինը, որ **Վահան** կոչվեց, աջ ուսից մինչև ձախ կողը երկարող գոտու նման մի բան ուներ, իսկ նրանից հետո ծնվածը, նա Ստեփանոս կոչվեց, գլխից մինչև մեջքը երկարող գոտի: [Երեխաների] հայրն ու մայրը այդ բանի մեջ ինչ-որ իմաստ տեսան և զարմացած մտածում էին, դա ի՞նչ է արդյոք նշանակում: Մայրը նախագուշակեց, որ նրանցից մեկը զինվորական կդառնա, իսկ մյուսը՝ վանական: Հայրն ասաց, թե ինքն էլ է ուզում առաջինին զինվորության տալ, իսկ մյուսին՝ քերականի, որպեսզի լավ ուսում ստանա և ծառայության մտնի արքունիք: Երանուհին ասաց. «Ինչպես որ Աստված է կամենում, թող այդպես էլ լինի, եւ նրանց երկուսի ինչ դառնալը չեմ տեսնելու, քանզի գիտեմ, որ հեռանալու եմ [այս աշխարհից] նախքան այդ բանի իրականանալը»: Թե ինչպես նրա գուշակությունն իրականացավ և երեխաներից մեկը զինվորական դարձավ, մյուսը՝ վանական, ստորև կասվի:

7. Նա այդպես էր կենցաղավարում և այդպես փառաբանվում բոլորի կողմից, բայց նախապես Հոբին, ապա Պետրոսին փորձողը, մեզ կրնկակոխ հետևող և կյանքի ընթացքի վերջին հայողը[20], պետք եղածի պես փորձության է ենթարկում նաև երանուհուն, կամենում նրա աստվածահաճո կենցաղավարության ոտք գցել, շրջել նրա ընթացքը, խոչընդոտել նրա ուղիղ ճանապարհը: Նա կանանց մեջ ամենաբարեպաշտին այնպիսի փորձության է ենթարկում, որով նա վախճանվում է և հանդերձյալ աշխարհը գնում: Սակայն տեսեք փորձողի չարագործությունը ու ապարատելիությունը, այն բանին, թե ինչպես է նա ամենամեծ ու ամենածանր փորձության ոչ թե սկզբում, այլ վերջում ենթարկում: Նրա արվեստն ու վարպետությունն էլ հենց դրանում է կայանում, որ ամենադժնդակ ու զորեղ փորձությունները նա պահում է ամենավերջին, ամեն տեսակի մեքենայություններով դրանք առաջ քաշում, որպեսզի երբ նախապես գործի դրած սադրանքները ապարդյուն մնան, վրա բերելով ա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № ԺԲ-ից:

մենաուժելը, ընկճի ու պարտության մատնի: Անա այդպիսին է [բանարկուն] և նա երբեք չի հրաժարվի իր ենթագործությունից: Բայց Տերը զորության գիտե յուրայիններին և բնարավորություն է տալիս նրանց կոխել ի վերա ամենայն զորության թշնամու, նա [Մարիամին] ուղղեց նրանց նանապարհով, որով նրանք իր զորությամբ ուժ են ստացել: Եվ զարմանալին այն է, որ փտիկասուն կանայք անգամ հաղթում են պարծենկոտին: Այս իսկական աղավնին, որ ամբողջությամբ [սուրբ] հոգով էր ընթանում և որով նա խուսափում էր բանարկուի որոգայթներից, փորձության զոհ չդարձավ: Այդ [փորձությունը] ծանրագույն զրպարտությունն էր, որ անգամ տղամարդկանց է խեղճացնում, ըստ առակի, զրպարտություն, որին անգամ բազմաչարչար Հոբը չկարողացավ դիմանալ, թեև զրպարտությունը նմանատիպ չէր: Ովքե՞ր էին զրպարտության հորինողները: Ոչ այլ ոք, բան Մարիամի ամուսնու եղբայրները՝ Հելենե և Աղեքսիոս էր նրանց անունները, հենց նրանք են, որ զրպարտում են անբիծին իր ամուսնու առաջ (ինչպես, պատմում են, եգիպտուհին Հովսեփին)[21], իբրև թե նա դատարկում է տունը և հարաբերվում ծառա Դեմետրիոսի հետ: Ամուսինը լսեց զրպարտությունը, այն հիմնավոր համարեց և այլևս չէր ուզում հաշտվել կնոջ հետ: Նա առանձնակի կանչելով կնոջ, ասաց. «Քո մասին լսել բաներ չեմ լսում, ով կին»: Նրա հարցին, թե ի՞նչ են ասում, և ումի՞ց է նա այդ բանը լսել, նա պատասխանեց. «Եղբայրներն ասացին, և խոսքը տունը դատարկելու մասին է, և, որ ամենասարսափելին է, ծառա Դեմետրիոսի հետ քո անառակության»: Ամենահիմարը, լսելով այդ ամենահայտնակ խոսքը, խոր ու ցավագին հառաչեց, աչքերը արցունքներով լցվեցին, և նա ասաց. «Ավա՜ղ, մարդկանց մոտից վերացել է վստահությունը, եթե ինձ այսօր ներկայացված մեղադրանքների՝ իմ հերքելուն հավատ ընծայվեր, դու բանի տեղ չէիր դնի ինձ ներկայացված երկու զրպարտություններն էլ, և ինձ երկուսից էլ անմասն կհամարեիր: Ես չգիտեմ, ինչո՞ւ համար հորինվեցին այս բոլորը: Ես քեզանից բացի այլ տղամարդ չեմ ճանաչել, ո՞վ ամենաքաղցր ամուսին, որի հետ ես օրինավոր կարգով ամուսնացել եմ, որին տրվել եմ իմ մոր կողմից և որին միայն գիտեմ: Ես հանույթով կհրաժարվեի քեզնից էլ, եթե դա հնարավոր լիներ և աստվածային օրենքը թույլ տար: Բայց այժմ ես գիտեմ, որ իմ մարմնի տերը չեմ, դու ես իմ գլուխը[22]: Ես այդ կարող եմ ասել իմ պաշտպանության համար այդ զարհուրելի զրպարտությունից և վկա եմ կանչում ամենատես աչքը՝ ես չեմ խայտառակել ինձ և չեմ անպատվել քո մահիճը: Զրպարտիչների այն մեղադրանքին, թե ես ցիրուցան եմ անում տան ունեցվածքը, թող ասեն, ի՞նչն եմ վատնում, որտե՞ղ և ո՞ւմ համար: Եթե նրանք ինձ մեղադրեն, թե շույլ եմ, պճնասեր կամ էլ հիմարությունից եմ ամեն ինչ ցաքուցրիվ անում և այդ բանի վերաբերյալ հավատի ու արժանահավատ ապացույցներ ներկայացնեն, պատժի՛ր ինձ: Ես կատանամ սուրբ և իսկական փոխհատուցումը [աստեղ] դատաստանի օրը[23]: Իսկ եթե ես սրբերի պես եմ վարվում՝ սնում սովյալներին և սփոփում աղքատներին, ապա դրանով ես մեր հասարակաց՝ իմ և քո փրկության մասին եմ հոգում, քանզի մեր կյանքն էլ է հասարակաց: Արդ, դրանք ցաքուցրիվ անելով վնա՞ս եմ տալիս, թե օգուտ: Չէ՞ որ սերմը մեծ բերք կտա»:

8. Նիկեփորը պատասխանեց. «Ես չեմ արգելում կարոտյալներին օգնել: Դու գիտես, ես երբևիցէ չեմ հակառակվել քո այդ նախանձախնդրության: Բայց դեմ եմ չափից շատ շույլ ու մեծաձոգի լինելուն, քանզի ուրիշների կարիքները այդպես շույլ հոգալով մենք ինքներս ենք կատարյալ աղքատության մեջ ընկնելու»: Նա այդպես ասաց և խոսակցության վերջ տվեց, ավելի զրպարտողներին հավատ ընծայելով, քան կնոջ: Այդ օրվանից սկսած նա պահակներ կանգնեցրեց երանուհու սենյակում և սկսեց ուշադիր հետևել նրան: Նրան սպասարկող ամենամտերիմ աղախնուն նա հրամայեց իր մոտ կանչեն: Երբ նա ներկայացավ, ճակատը խոժոռեցնելով ծուռ-ծուռ նայեց նրան ու կոպիտ ձայնով, վայրենի հայացքով ու խոսքով հարց էր տալիս տիրուհու մասին, սպառնում սպանել, եթե իրեն չհայտնի նրան գայթակղեցնողի մասին: Նա թեև ճակատագրի բերմամբ աղախին էր, բայց ստրկամիտ չէր, նա ազատ հոգի ուներ, վախից չդավաճանեց ճշմարտության, սպառնալիքից չերկյուղեց և տիրուհու դեմ ստապատիր խոսքեր չասաց, այլ տիրոջ դիմեց անկեղծ ու շիտակ: Նա ասաց. «Տեր իմ, այսօր իմ կյանքն ու մահը քո ձեռքում է, և ենթակա եմ կրելու ինչ որ դու կամենաս: Ես տիրուհու վերաբերյալ ոչ մի վատ բան չգիտեմ, ոչ էլ ուրիշից եմ լսել»: [Նիկեփորը] դրա վրա զայրացած, հրամայեց գետին տապալված աղախնուն սաստիկ գանահարել և երբ նրանից այլ բան չիմացավ, թույլ տվեց նրան վերադառնալ [իր տեղը]: Այդ բոլորին ականատես եղած երանուհին իմացավ, որ սատանան է իր դեմ մոլեգնել, մարդ ուղարկեց միանձնուհիների և վանականների մոտ, որոնց նա օժանդակություն էր ցուցաբերում, և հայտնելով իր գլխին եկածի մասին, Աստծո սիրույն պաղատում էր իր համար աղոթեն, իսկ ինքը, փորձության դեմ զինվելով, արտասվալից աղոթքով ու պաղատանքով, դիմում էր փրկելու կարողություն ունեցողին. «Աստուած, յօգնել ինձ նայեա, Տէր, յընկերել ինձ փութա»[24]: Նա աղոթում էր նաև զրպարտիչների համար՝ պաղատելով ներել նրանց մեղքը: Նրա դեմ մի զրպարտիչ էլ բուսավ, Դրոսոս էր նրա անունը, որին այդ թեթևամիտ մարդը, որ դատարկ անոթների պես հեշտությամբ տարուբերվում էր, իր տան վերակացու էր նշանակել: Նա [Դրոսոսին] իր կնոջ հսկիչ նշանակեց, կարգադրելով ուշադիր հսկել նրան, նրա հետ նաև աղախիններից մեկին, որին վստահեց գանձարկղը, հրամայելով ամեն կերպ վշտացնել երանուհուն,

ինչ որ ցանկանա, ինչ որ խնդրի՝ չտալ: Այս տխուր բաների վրա մարմնական հիվանդությունն էլ բարդվեց, վրա եկավ նաև ստամոքսի ընկերոջ հիվանդությունը, որից նա շատ և անվերջ տառապում էր, ցավեր ունենում ու գարշանք զգում: Նա տանջվում էր ստամոքսի ցավերից, երբ հասավ նաև մյուս աշխարհը գնալու ժամանակը: Այդ միջոցին այսպիսի մի բան էլ պատահեց:

9. Հասավ Բարեկենդանի կիրակին, երբ քրիստոնյաներս նախապատրաստվում ենք սուրբ քառասնից [պահքին]: Բայց այդ անգութ մարդը այդ օրն անգամ չուզեց կնոջ հետ սեղան նստել, այլ կերուխում էր անում առանձնացած՝ եղբայրների և մյուս հարազատների հետ: Այդ բանը տխրեցրեց երանուհուն և նա, դիմելով ներկա եղող կանանց, ասաց. «Ահա եկան պահքի օրերը, որոնց ժամանակ ապաշխարությամբ մենք մաքրում ենք մեզ գործած մեղքերից: Արդ, ինչպե՞ս [Աստծո կողմից] ընդունելի կլինի պահքն ու աղոթքը իմ ամուսնու, որ շարունակում է այդպես անհաշտ ոխ պահել և անհիմն թշնամությունը՝ անվերաց: Վա՜յ քեզ, նենգ ու դրժան սատանա, մեր փրկության թշնամի և Աստծուն օտար: Քո՝ սրտերը կործանողիդ գործն է դա»: Այդ խոսքը հասավ մի չարախնդի ականջին, որ շտապեց Նիկեփորին պատմել, բայց ոչ իր լսածը, այլ այն, ինչ գիտեր, որ կգրգռի նրա բարկությունը և կբորբոքի այն: Նա ասաց. «Քո կինը քեզ քրիստոնյա էլ չի համարում, գտնում է, որ դու [փրկության] բարի հույսեր էլ չունես, քանզի չես հաշտվում իր հետ, նա պարզապես քեզ սատանա է անվանում՝ ի սկզբանե անտի մարդասպան և Աստծուն հակառակ»: Լսելով դա, նա թեև զայրացավ, բայց այդ օրն իրեն զսպեց, քաշվելով ներկաներից, որոնք մեղմում էին նրա զայրույթը: Բայց հաջորդ օրվա լուսաբացին, մի խարազան առնելով, նա մտավ նրա սենյակը և հայացք գցելով (Աստվածամոր պատկերի առջևի ճրագը վառած էր, նա ցրել էր սենյակի մթությունը և ներսում եղած ամեն ինչ տեսանելի էր), տեսավ երանուհուն մահճակալի վրա պառկած՝ մի մանուկ գրկին: Բռնելով նրա մազերից նա քարշ տվեց նրան ու անողորմ կերպով ծեծեց, մինչև որ մոտիկ գտնվող երեխաներից մեկը վազեց, դրսի մարդկանց հայտնեց, որոնք ներս մտնելով, հազիվ նրա ձեռքից պոկեցին նրան:

10. Ամուսնու ձեռքից պրծնելով նա շտապեց գնալ տան մի տեղ, բայց ոտքը սայթաքեց և գետին ընկնելով, գլուխը վիրավորեց: Նրա գլխին երեք փորձանք եկավ. հիվանդությունը, վիշտը և ստացած վերքը, որի պատճառով ջերմությունը սաստիկ բարձրացավ և նա իրեն անկողին նետեց: Տասը օր անց, երբ հիվանդությունը սաստկացավ, նա հայտնեց ամուսնուն. «Եթե ուզում ես ինձ՝ թշվառիս դեռ կենդանի տեսնել, տե՜ր իմ, եկ, տեսնենք իրար»: Երբ նա եկավ, ասաց. «Ահա ես հեռանում եմ [այս աշխարհից], Տերը երազում այդ բանը հայտնեց, ինձ ուղարկելով երկու երեխաներին, որպեսզի յուրաքանչյուրը [իմ] ձեռքից բռնած տանեն կանչող թագավորին»: Նա լսելով դա, սկսեց ողբալ, իսկ կինը վերստին դիմեց նրան ու ասաց. «Ահա, ինչպես որ կամեցավ, այս հիվանդությամբ եմ ես գնում, հեռանում հասարակաց Տիրոջ մոտ: Դու ինձ չէիր հավատում, բայց գեթ հիմա ընդունիր ճշմարտությամբ ասված իմ խոսքերը: Դու լավ չարեցիր հավատ ընծայելով ինձ զրպարտողներին ու ականջ կախելով պատիր խոսքերին: Վկաս Տերն է, որի ձեռքերին եմ հանձնում իմ հոգին: Ես անտեղյակ եմ այդ նենգ զրպարտության և դու ինձնից պահանջեցիր ասել այն, ինչ ես չգիտեի: Հանիր քո սրտից վատ կասկածը և ուրախ լեր ու ապրիր զավակների հետ»: Այդպես ասելով, նա իր ուսերի վրայից հանեց քղամիդը, կանչեց տնեցիներից մեկին ու կարգադրեց ծախի այն և ստացածը պարտքի դիմաց տա պարտատերերին, նշելով նրանց անուններն ու պարտքի չափը: Ամուսինն ասաց. «Քղամիդը թող երեխաներին, ինչ վերաբերում է պարտքին, ես կհատուցեմ պարտատերերին»: Եվ տեղնուտեղը նա այդ բանն արեց: Երբ նրա մոտալուտ մահվան մասին իմացան և քաղաքի երևելի կանայք, բոլորը նրա մոտ եկան: Տեսնելով նրանց, նա ողջագուրվեց և փոքրինչ խոսակցելով նրանց հետ, վերջում ասաց. «Ահա, բացվում է երկինքը, ես անճառելի լույս եմ տեսնում ու ճոճվող պսակ»: Այդ խոսքերի վրա էլ նա հեռացավ:

11. Սկսվեց մեծ լաց ու կոծ՝ ամուսնու և կանանց կողմից: Երբ ողբը դադարեց, պատրաստեցին թաղման լոգանքը, բայց նախքան երանուհուն [լողացնելը] նրա մարմնից քաղցր բուրմունք բարձրացավ ու ողողեց տեղը, այն աստիճան, որ այդտեղ հավաքված կանայք ապուշ կտրեցին ու վախճանվածին անոթ ընտրության անվանեցին[25]: Երբ լողացրին և ընդունված կարգի համաձայն թաղման հանդերձների պահանջը եկավ, ահա այստեղ է, որ ամուսինը համոզվեց իր կնոջ անհատնում ողորմածությանը: Նա իր համար վերջին շապիկն էր թողել: Ամուսնու մոտ մի աղախին եկավ, անունը Մարինա, և ասաց, որ երանուհու հետ թաղելու համար չկա ոչ մի շապիկ կամ շոր: Երբ [ամուսինը] զարմացած հարցրեց, թե ի՞նչ եղան այդքան շորերը, որտե՞ղ են դրանք գործածվել, աղախինն արտասվալից ասաց. «Զարմանո՞ւմ ես, տեր իմ, և ապշում, որ իմ տիրուհին այս շորից բացի, որը հագցրինք նրան լողացնելուց հետո, ուրիշը չունի: Այդ մարդասեր հոգին չէր կարող տեսնել որևէ մերկի և չհոգալ նրա մասին, տեսնել մի աղքատի և չօգնել նրան: Ահա նրանց վրա է նա իր բազում [հանդերձները] ծախսել: Դու, որ շոր ու շապկի մասին ես հետաքրքրվում, ինչո՞ւ չես հարցնում ավելի թանկագին բաների մասին, ոսկու, արծաթի և այլ գանձերի, որոնք ինչքան էլ փութաջան փնտրես, չես գտնի: Այդ բոլորն էլ չխուսափեցին նրա աջից, բան չկա, որ նա աղքատներին չբաժանեց»: [Ամուսինը] լսեց այդ խոսքերը,

բայց առժամանակ ոչնչով չհետաքրքրվեց, նա կարգադրեց իր շապիկը կանացիի ձևեն և երանուհու հետ թաղեն: Երբ այդ սուրբ մարմինը դրվեց Սահնակալի վրա, նրա մոտ եկավ Եվթիմիոս եպիսկոպոսը, ապա Էկոնոմ Անթիմոսը[26] և քաղաքի գրեթե ողջ բնակչությունը: Այս Անթիմոսը, որ տեղյակ էր երանուհու ամեն ինչին, քանզի սպասավորել էր նրան, սկսեց մեկ առ մեկ պատմել, թվարկել այրիներին ու որբերին և մյուս կարիքավորներին, որոնցից և ոչ մեկը [նրա մոտից] ձեռնունայն չգնաց, բոլորն էլ իրենց պետք եղածն ստացան: Պատմելով դա նա արտասվեց և ներկաներին էլ արտասվել տվեց: Համայն կղերի կողմից թաղման երգասացության կատարումից հետո, նրա սուրբ մարմինը տարան կաթողիկե եկեղեցի և սուրբ տեղում այն ամփոփեցին: Մի քանի օր հետո, երբ սուգը որոշ չափով մեղմացել էր, ամուսինն սկսեց սնդուկները բանալ, փնտրելով վախճանվածի ունեցած-չունեցածը: [Սնդուկները] դատարկ գտնելով, նա հրամայեց կանչել աղախնին և երբ նա ներկայացավ, հարց տվեց, ո՞ւր են տիրուհու զարդերը, թանկագին քարերով ու մարգարիտներով ականջօղերը, ոսկե մատանիները, մետաքսյա, գույնզգույն հանդերձները: [Աղախինը] պատասխանեց. «Դրանց մի մասով գերիներին փրկագնեց, մյուսով՝ պարտքերը մարելու կարողություն չունեցողների պարտքերը մարեց, աղքատներին սնեց, կերպասները եկեղեցիներին նվիրեց՝ նրանց մի մասով սուրբ սեղանները ծածկեց, մյուսով՝ [եկեղեցու] շենքը զարդարեց»: Ահա հիմա էր, որ նա իմանում էր իր կնոջ առաքինության մասին, պարսավում իրեն, պարսավում նրան զրպարտողներին, իրեն խարող և մեղսակից դարձնող մեղսագործներին: Նա նրանց թշվառական էր անվանում, իսկ իրեն՝ ավելի մեծ:

12. Քիչ անց, դեռ չորս ամիսն էլ չէր լրացել, մի դիվահար, անունը Ստրատեգիոս, եկեղեցի եկավ և սկսեց հանվանե կոչել Մարիամին՝ տուրմարխի[27] կնոջ: Այդ կանչի վրա ողջ քաղաքը հավաքվեց խանգարվածին տեսնելու: Երբ դևը թողեց նրան՝ անկապ-անկապ գոռացողին և Էքստազի մեջ շարժվողին, եպիսկոպոսը կանչեց և հարցրեց, ո՞վ է, ո՞րտեղից է եկել, ո՞վ է նրան սովորեցրել դիվահար ձևանալ և առանց ամաչելու այդպես է վարվում ու գոչում: [Եպիսկոպոսն] ասաց. «Մենք իմաստվանում ենք, որ [այդ] կինը լավն էր ու բարի, ականատես ենք եղել նրա առաքինի կենցաղավարության, բայց չենք հավատում, որ նա արժանացել է նման շնորհքի, քանզի հրաշագործելու [շնորհքը]: Ինչ ո՞վ խորհուրդ տվեց այդպես ձևացնել: Գուցե ննջեցյալի ամուսի՞նը, կամ [Մարիամի] որևէ ազգականը: Արդ, եթե վերջ չտաս դերասանության, ապա խարազանը քեզ խելքի և ուշքի կբերի»: Դրա վրա մարդը իր մեղքերն էր խոստովանում, որոնց պատճառով դևի ճանկն ընկավ, ասաց, որ Էքստազը կեղծիք չէր, այլ, պընդում էր, իսկական խանգարում: Նա ասում էր, թե հենց այստեղ նա բուժում կգտնի, կիրկվի իրեն տանջող դևից, և եթե նրանք չտեսնեն այդ բանը, թող իր անձի նկատմամբ անեն, ինչ ցանկանան: Բայց այդ խոսքերը չհամոզեցին եպիսկոպոսին, և այդ պատճառով սպառնալիքների տակ նրան ճամփու դրեցին: Մարիամի ամուսինը նրան բանտ նետեց, հարցաքննության ենթարկեց, չարչարեց, հարց տալով, ո՞վ է իրեն սովորեցրել այդպես անել: «Ո՞րտեղից ես իմացել և հանվանե կոչ ես անում իմ կնոջ: Կատարվածը ավելի շուտ նրա ազգականների հնարանքն է: Բայց հանդգնությունդ քո գլխին փորձանք կբերի: Եթե այստեղից անհապաղ չհեռանաս, ապա [քեզ] խորհուրդ տվողներին էլ կհասնի»: Մարդը պատասխանեց. «Ես երբևիցե չեմ տեսել քո կնոջ, նրա ազգականներին չեմ ճանաչում, որպեսզի նրանց կողմից կաշառվելով, ասածիդ պես, դիվահար ձևանամ: Կա մի վայրագ դև, որ ինձ տանում է չուզածս տեղը: Նա է ինձ հալածելով այստեղ բերել: Դու ինձ մի սպառնա, մի փոքր համբերիր և կտեսնես փառքն Աստուծո, քանզի ոչ միայն դևեր են այստեղից հալածական լինելու, այլև բազում ախտեր են դարմանվելու և ամենից առաջ ինձնով է փառավորվելու Աստված, և եթե մի փոքր անց իսկապես ակնհատես չդառնաք դրան, ինչ ես ասում եմ, ապա պատրաստ եմ կրելու ձեր վճիռը»: Նա այդպես ասաց, իսկ Նիկեփորն ապշած լռեց: Նա ոչ կարողանում էր իսկապես հավատալ նրան, ոչ էլ չհավատալ, նա տատանվում էր, սպասելով տեղի ունենալիքը: Եվ ի՞նչ պատահեց: Դիվահարը [դևի] կողմից հալածվելով, բազում օրեր գնում էր սրբուհու գերեզմանը: Մի կիրակի օր, առավոտյան սաղմոսերգության պահին, երբ գրեթե ողջ քաղաքը հավաքվել էր [եկեղեցում], դիվահարը մերձենալով երանուհու շիրիմին, փորձեց բարձրացնել շիրմաքարը, կոչ անելով մյուս մարդկանց իրեն օգնեն, քանզի իբրև թե սրբուհին ցանկանում է շիրիմը բացվի և մարդուն դևը թողնի: Երբ երանուհու ամուսնու թույլտվությամբ մարդիկ նրան օգնության հասան և շիրմաքարը բարձրացվեց, դիվահարը շիրիմի դուռը հանելով, դեռ շպրտեց, ապա խոնարհվեց երանուհու մարմնին, համբուրեց նրա աջը, այդ բանի վրա նրա փսխելն եկավ, նա փսխեց. դա արտաքնապես արյուն էր, բայց ներևույթ՝ իրեն տանջող դևն էր: Այս հրաշքի վրա բոլորն ապուշ կտրեցին, անգամ եպիսկոպոս Եվթիմիոսը: Նրանք գերեզմանի վրա խոնարհվելով, երանուհու մարմինն անապական գտան, նրանից բուրմունք էր գալիս: Ավելի ուշադիր նայելով, նրա դեմքի շուրջ արյուն տեսան: Կղերականներից մեկը, կարծելով, որ այդ [արյունը] դիվահարի փսխածն է, ուզեց սրբուհու հանդերձներով սրբել այն: Բայց իրականում [արյունը] նրա քթից էր գալիս, և դա կենսաբեր էր: [Մարդիկ] սկսեցին արտասվալից փառավորել Աստծուն՝

բաղաքին մեծ լավություն ցուցաբերողին: Այս հրաշագործությամբ մարդը չար դևից պրծած, ճանապարհ ընկավ դեպի իր տունը՝ ոչ լուռ, այլ որպես հրաշքին ականատես, երանուհու բարեգործությունը հայտարարելով: Դրա վրա սկսեց հիվանդ մարդկանց մեծ բազմություն հոսել դեպի գերեզմանը, և բուժում ստանալով տուն էին վերադառնում. կույրերը տեսնում էին, խուլերը՝ լսում, խելագարները՝ ուշքի գալիս, իսկ դիվահարները, որոնք թվով ամենից շատն էին, տանջող [դևից] պրծնում: Ամեն ինչ թվարկել հնարավոր չէ, բայց երանուհուն [Աստծո կողմից] տրված շնորհքը ցույց տալու համար ես շատից մի քանիսը կպատմեմ:

13. Դստեր պատճառով կյանքը տակնուվրա եղած մի կին, տեսնելով, թե ինչպես է նա խելագարվել, որ մինչև անգամ իր սեփական աղտեղությունները ու գարշահոտ աղբն էր հավաքում ու ճաշակում, գտնվելով անել վիճակում, ինչ որ անհրաժեշտ էր գտնում, արեց, բայց ապարդյուն: Ի վերջո, կատարյալ հուսաբեկ, բժիշկներից ձեռք քաշեց, իր դստրիկի հետ սրբուհու մոտ եկավ և սկսեց նրա գերեզմանի վրայի հրագի ձեթից քսել խելագար դստեր և փոքր անց նրան առողջացած տուն բերեց և նրա՝ արդեն գիտակից մարդու հետ սկսեց փառավորել սրբուհու Աստծուն: Նույն ձևով մի կույրի էլ ձեռքից բռնած բերեցին, որ վերադարձավ տեսողությունը գտած. նա սոսկ ձեթ քսեց: Այսուհետև ամեն տարի նա գալիս էր երանուհու գերեզմանը՝ Աստծուն և նրան գոհանամ ասելու:

14. Մի դիվահար կնոջ սրբուհու գերեզմանը բերեցին և նա այստեղ իրեն տանջող դևից փրկություն գտավ: Այն դիվահար քահանան, որին հագիվ էին շղթաներով ու ոտնակապերով պահում, այստեղ գալով իրեն նեղող դևից փրկություն ստացավ: Այնուհետև մի միանձնուհի էլ նույն բանին արժանացավ. այդ դիվահարին Բուլղարիայից բերեցին, իսկ սրբուհին նրան հափշտակած [դևից] ազատելով, ուղարկեց:

15. Հետո՞: Եթե դիվահարներն այստեղ փրկություն էին գտնում, ապա ինչ է, այլ կարիքավորներ օգուտ չէի՞ն քաղի: Շատ-շատ: Երանուհու համբավը տարածվել էր ամենուր և Կարաբիզյունից[28] մի կին գալիս է գերեզմանը և այն պատճառով, որ նրա ստինքի պտուկը քարացել էր և չէր կարողանում իր մանկան կերակրել, կաթի աղբյուր է խնդրում [սրբուհուց] և ստանալով այն, բերկրացած տուն վերադառնում: Մի այլ կին էլ նույն բանը խնդրեց ու ստացավ: Բայց ճանապարհ ընկնելով, ինչ-որ պատճառով բարկացավ, ստինքները դարձյալ չորացան ու քարացան նախկինի պես: Գերեզմանի մոտ միևնույն օրը երկու անդամալույծ բերեցին, որոնք արժանացան կատարյալ ապաքինման: Մի կույր կին էլ եկավ և աչքերին գերեզմանի հրագի սուրբ ձեթից քսելով, կատարյալ տեսողություն ստացավ: Իսկ մի այլ կին էլ՝ դիվահար ու տառապյալ, ծնկեր մանուկը գրկին, եկավ երանուհու գերեզմանը, արտասվալից, ջերմ հավատով սանկան գցեց [սրբուհու] ոտքերին և նրան ետ ստացավ չարչարող դևից մաքրված: Ամեն օր այսպիսի բյուր հրաշքներ էին կատարվում:

16. Հրաշքների համբավը հասավ նաև Արկադիուպոլիս[29]: Կախվակինե կոչվող վանքի բարեպաշտ մայրապետը ցանկություն է ունենում երանուհու գերեզմանը գալ և ականատես լինել լսածը որևէ մի բանի: Երկու աշակերտուհիներով նա ճանապարհ է ընկնում դեպի Բիզյուն: Իրեն ուղեկցում էր և մի դիվահար վանական: Կինը օթևանում է Նիկեփորի, երանուհու ամուսնու մոտ, իսկ հաջորդ օրը գալիս է գերեզմանը: Սուրբ պատարագի պահին, կարծես ազդանշանով, հինգ դիվահարներ շտապում և անկապ-անկապ գոչելով, բացում են գերեզմանը: Մեկն իր շրթները [սրբուհու] ձեռքին հպեց, մյուսը՝ ոտքին, մի ուրիշն էլ՝ պատանքներին և բոլորն իսկույն խելոքացան ու առողջացան: [Մայրապետն] ապշեց, նա խոնարհվեց հավատով լի համբուրելու սրբազան մարմինը: Տեսնելով, թե ինչպես գլխի թաշկինակը երկու այտերին է կպած, փորձում է անջատել, բայց այնտեղից արյուն կաթեց: Կինը համոզվելով հրաշքին, գոչեց. «Հիրավի, ապրում են սրբերը»: Նա մի քրջով սրբեց արյունը և այն ցույց տվեց Արկադիուպոլսի բնակիչներին, անհիրազեկ մարդկանց պատմեց հրաշքի մասին:

17. Այն ժամանակ ամուսնուն երազում երանուհին երևաց ու կարգադրեց աղոթարան կառուցել և այնտեղ վերամփոփել իր աճյունը: «Որպեսզի կարողանամ տեսնել ինձ անչափ ցանկալիին» ասելով: [Ամուսինը] դա սովորական երազ համարելով, բանի տեղ չդրեց, այդ իսկ պատճառով արդար պատիժ ստացավ. աչքերը բաց էին, բայց նա չէր տեսնում: Նա սթափվեց ու համոզվեց, որ դժբախտության պատճառը լոկ իր անգոսնումն է: Նա բազում մարդկանց հավաքեց ու հրամայեց մերձակա գիրի մոտ փորել և այնտեղից քառակուսի վիմեր բերել: Հենց սկսեցին փորել, նա էլ սկսեց աղոտ տեսնել, քանի առաջ էր գնում գործը, նա ավելի լավ էր տեսնում, իսկ երբ այն եռալ սկսեց, աչքերը կատարելապես բացվեցին[30]: Դրա վրա նա ամենայն փութաջանությամբ շինարարության ձեռք գցեց: Երբ տաճարի [կառուցումն] ավարտվեց ու արքեպիսկոպոսի կողմից սրբագործվեց, պետք էր մարմինը վերամփոփել: Նիկեփորը իր մարդկանց հետ այդ գործի համար գնում է կաթողիկե եկեղեցին, բայց կղերականները [տեղափոխման] հավանություն չտվեցին, որի վրա նրանք հարձակվեցին արքեպիսկոպոս Եվթիմիոսի վրա: Նիկեփորը տակնուվրայությունից և նրա հետևանքներից վախենալով, միառժամանակ ոչնչի չձեռնարկեց, բայց հարմար առիթ ձեռք գցելով, երբ արքեպիսկոպոսը բացակայում էր, շուրջ քառասուն հոգի վերցնելով և իրեն հակադրվելու չհանդգնած մի քանի կղերականների, գլուխ բերեց [մարմնի] վերամփոփումը:

18. Երբ աճյունն ամփոփվեց տաճարում, մի դիվահար կին, բացելով սրբուհու դամբարանը, սկսեց

հրա ոտքի մեծ մատը սեղմել, որից արյուն դուրս եկավ: Կինը մի փոքր գետնին շուռ ու մուռ գալով, առողջացած ոտքի կանգնեց և ապաքինված հանապարհ ընկավ: [Սրբուհին] Ռեդեստոսում[31] ապրող մի ճգնավոր նկարչի երազում երևաց՝ սպիտակ հանդերձներ հագած, գլխին կարմիր եմիփորոն գցած, աջ ձեռքին վառված ջահ, որի վրա գրված էր. «Գթության ջահը»: Նրա առաջով երկու սիրասուն ու գեղեցիկ տղաներ էին գնում, իսկ ետևից գալիս էր գեղադեմ մի կույս: Ճգնավորի հարցին, թե ո՞վ է և ո՞րտեղից իր մոտ եկավ, նա ուրախ ու բերկրացած ձայնով պատասխանեց. «Ես Բիզյուն քաղաքի Մարիամն եմ, որի մասին դու շատ բան ես լսել և որին ցարդ չես տեսել: Արդ, այնպես, ինչպես որ դու այժմ ինձ տեսնում ես, այդպես էլ նկարիր՝ իմ որդիներ Օրեստեսի և Վարդանի և ինձ հետևող մանկիկի՝ Ագաթեի հետ, [պատկերն] ուղարկիր Բիզյուն քաղաքը»: Ծերունին զարթնելով և իմանալով, որ դա երանուհու կամքն է, իր երազում տեսածի պես ուրախությամբ պատկերը կատարելով, Ռեդեստոսից Բիզյուն է ուղարկում՝ նրա ամուսնու կողմից կառուցված տաճարը: [Մարիամին] կենդանությանը տեսնողները, տեսնելով պատկերը, ապշեցին և խոստովանեցին, որ հիրավի հենց նրա և նրա զավակների իսկական պատկերն է:

19. Այստեղ մի քանի վանականներ, ավելի նախանձից, քան թե եռանդից դրդված, տեղի ունեցող հրաշքների առնչությամբ ասում էին. «Հնարավոր բան չէ, որ աշխարհիկ կյանք վարած, ամուսնության հաճույքին մասնակից դարձած մեկը Աստծո կողմից արժանանա հրաշագործելու շնորհքին, երբ ամեն մի հաճույքից զրկված, ամեն տեսակի չարչարանք ու տառապանք ճաշակած, գիշեր-ցերեկ աղոթքով տարված վանականները չեն արժանացել նման շնորհքի»: Նրանք այդպես էին ասում, անգիտանալով, որ իր խոստացածը կատարողը արժանի է վարձատրության, իսկ ով չի կատարել այն, զրկվում է վարձատրությունից, իր դատապարտության պատճառ դառնում, քանզի խաբել է նրան, ում խոստացել է: Երանուհի Մարիամը, հրաշքը մեր սերնդի, ինչ որ խոստացավ սուրբ մկրտության [ժամանակ], մինչև վերջ ճիշտ ու ճիշտ կատարեց: Աշխարհականների համար դա լիուլի բավական է: [Մարիամը] իր խոստումի վրա, բացի բազում տարբեր առաքինություններից, ավելացրեց նաև ողորմածությունը, որ բոլոր առաքինություններից ավելի է մարդուն վեհացնում, քանզի նա պտուղն է սիրո, որից ավելի շատ է բերկրանում Աստված և ցանկանում, որ այն սեր կոչվի: Եթե մարդ մեկ անգամ խոստանա և խոստումը չկատարի, երկրորդ անգամ էլ չկատարի, ապա նա ինչպե՞ս կարող է Աստծո մրցանակին արժանանալ: Բայց սրանց շուրջ փիլիսոփայելու ժամանակը չէ:

20. Կասկածի ցեցն ընկավ նաև Բրյուսեի եպիսկոպոս Ստեփանոսին, նա ենթադրեց, որ սրբուհուն վերագրվող հրաշքները հորինած բաներ են, հավատացած լինելով, որ նրա ամուսնացած, հարուստ լինելու հանգամանքը և աշխարհիկ վարքը սրբության բարձրության բացասող են: Արդ, ինչպե՞ս եղավ, որ մարդու կասկածները փարատվեցին: Մի դիվահար կին, անունը Զոե, յոթ տարի էր, ինչ տաճարի մոտ նստած տեսնում էր ապաքինվող մարդկանց, ինքը սակայն մնում էր անդարմանելի: Բայց նա հուսաբեկ չէր լինում և չէր հեռանում այնտեղից: Սուրբ պատարագի պահին նա շիրիմի մոտից հեռանալով, բռնեց եպիսկոպոսի [ձեռքն] ու ցույց տալով շիրիմը, աղաչում էր բացել այն, դա երանուհու հրամանն էր, որպեսզի բուժի դիվահարին: Եպիսկոպոսն ապշեց, իսկ ներկա գտնվող եկեղեցականն ու մյուս մարդիկ աղաչեցին նրան երանուհու ամուսնուց վերցնի շիրիմի բանալին: Այդպես էլ արեցին: Դիվահար կինը բաշեց շիրիմը ծածկող սավանը և այն նետեց քահանաներից մեկի վրա, ապա երբ շիրիմը բացեցին, նա համբուրեց սրբուհու աջը և փսխելով, բուժում ստացավ: Եպիսկոպոսն ասաց, թե այդ հրաշքը իր համար կատարվեց, որպեսզի հրաժարվի երկմիտ խոհերից: Նա համբուրեց սուրբ անչունը, այն գտավ անապական ու բուրող և ապուշ կտրած հեռացավ: Ապաքինված կինը, այն պատճառով, որ բուժվելուց հետո խելքի չէր եկել և իրեն տվել հաճույքների ու հարբեցողության և դրա ետևից եկող անառակության, մի տարի անց դարձյալ դիվահար է լինում և «լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն»[32]: Ախտն այլևս բուժել հնարավոր չէր:

21. Երանուհու զրպարտիչները չէին կարող խուսափել նրան պատվող Աստծո արդար դատաստանից ու անպատիժ մնալ, կամ էլ հենց նրա [Մարիամի] դատաստանից, քանզի պետք էր, որ նրա զրպարտիչները հաշիվ տային: [Մարիամը] գտնում էր, որ նրանք պետք է պատիժը կրեն, ավելի ճիշտ՝ դատապարտվեն հենց այստեղ, որպեսզի պատասխան չտան մյուս աշխարհում: Ինչպիսի՞ն էր պատիժը: Նիկեփորը իր տան հոգացողությունը թողել էր իր քրոջը՝ Հելենեին, որի մոտ էր և վերջինիս դուստր Սոֆիան: Մի անգամ երանուհին գալիս է Սոֆիայի երազում՝ կարծես վրդովված այն բանի համար, որ Հելենեն է տանտիրություն անում, ու հրամայում, որ [Հելենեն] հեռանա այդտեղից, եթե չի ուզում այդ բանն անել ակամա: Աղջիկը երազը պատմեց իր մորը, բայց նա ուշադրություն չդարձրեց: Մի քանի օր անց աղջիկը հանկարծակի ցլերի ուժեղ ցավ զգաց, այն տարածվեց նաև սրտին և այդ ցավերից նա երեք օր անց վախճանվեց: Հելենեն երկու դուստր էլ ուներ, որոնք երանուհու դեմ կատաղած լինելով և իրենց մոր նենգության մասնակից, դիվահար լինելով այդպես մնացին մինչև մահ: Իսկ Դրոսոսն էլ, որի մասին արդեն ասվեց, թե ինչպես էր զրպարտել սրբուհուն, Նիկեփորի կողմից վռնդված լինելով, նախ ծայր աստիճան թշվառության մեջ ապրեց, այն աստիճան, որ օրվա հաց չէր ճարում, և ապա վախճանվեց կշտացավությունից: Նիկեփորի եղբայր Ալեքսիոսը

ծայր աստիճան թշվառության մեջ ապրեց և չարչարանքներ մահով վախճանվեց: Հատուցումը եկավ նաև Նիկեփորին: Նա ժամանակը որորդությամբ էր անցկացնում: Երբ հանկարծ մի նապաստակ դուրս թռավ, նա շատերի հետ շտապեց նրա ետևից, բայց ձին, որի վրա էր նա նստած, ապայթաքեց և նրա հետ նա գետին տապալվեց: Աջ ուսը տեղից դուրս եկավ, որով նրա աջ ձեռքը կատարելապես անշարժության մատնվեց:

22. Ամեն տեղից բազում մարդիկ էին հոսում դեպի երանուհու արգո գերեզմանը և առատաբար ապաքինվում, դրա համար չգիտեմ ինչպե՞ս պատմեմ այդ հրաշքների մասին: Ինձ երբեք չի հաջողվի ամեն ինչի մասին համառոտակի պատմել, իսկ ոչինչ չպատմել նշանակում է վնասած լինել աստվածասեր ունկնդիրներին և իմ դեմ գրգռել Աստծո մեծ բարկությունը, քանզի հարկավոր է հրապարակել գործերն Աստծո: Դրա համար էլ շատից մի քանիսը պատմելով, կվերջացնենք: Անմաքուր ոգուց սաստիկ տառապող Սեֆրոնաս անունով մի մարդ, որ չէր կարողանում իր շարժումները կարգավորել, աչքերը շուռումուռ էր տալիս, մարմինը կծոտում, շոր հագնել չէր ուզում, երկար ժամանակ լողացած չլինելու պատճառով գլուխը ծայր աստիճան կեղտոտ, մազերն էր քաշում, մի խոսքով նա բյուր չարիքի աղբյուր էր, իր արյունակից ազգականների կողմից բռնի բերվում է երանուհու գերեզմանը և այստեղ ճակատին սուրբ ձեթ քսելով—փառք քո արարքներին, թագավոր անմահ, ինչպես դու գիտես փառավորել ջերմեռանդությամբ քեզ սպասավորողներին—մարդն ապաքինվեց ու խելոքացավ, չար ոգին այնտեղից վտարված լինելով, նա երբևիցե ոչինչ չկրեց: Սայլի վրա, սրբուհու գերեզմանը բերեցին և մի կնոջ, որ անդամալույծ էր՝ կատարյալ անշարժության մատնված, նրա մարմնի բոլոր անդամները սարսափելի ցավում էին: Սմեն մի ցավից բուժվելով, նա սեփական ոտքերով տուն վերադարձավ:

23. Ասվածի վրա պետք է ավելացնել և հետևյալը. Բուլղարիայի թագավոր Սիմեոնը, գազանաբարո մի մարդ, արշավելով հոմայեցվոց երկրի վրա, համայն Թրակիան ավարառեց, նա ավերակ դարձրեց ընդհուպ մինչև Կոստանդնուպոլիս ընկած տարածությունը, քարուքանդ արեց քաղաքների մեծ մասը: Բիզյուեի բնակիչները, չկարողանալով տոկալ մի ամբողջ հնգամյակ տևած պաշարմանը, հարմար առիթ ձեռք գցելով, քաղաքը լքեցին-գնացին, կրակի տալով բոլոր բնակարանները: Մի ռազմագերի, թշնամու ձեռքից պրծնելով, արագ վազքով երեկոյան մոտ հասավ Բիզյուե: Այն բնակիչներից ու բնակարաններից ամայացած գտնելով, ապաստանեց երանուհու տաճարը գիշերելու: Դեռ քուն չմտած, նա սրբուհու գերեզմանից դուրս եկող ողբացող ձայն լսեց. դա լաց ու կոծ էր: Նա ասում էր. «Հանուն ինչի՞ քաղաքում բնակվող քրիստոնյաները [քաղաքը] լքեցին-գնացին, երբ ես այստեղ եմ: Եթե այդպես որոշեցին անել, ապա ինչո՞ւ ինձ էլ իրենց հետ չտարան և թողեցին հեթանոսների մեջ»: Մարդը սարսափեց, գիշերն այնտեղ անցկացնելով, գնաց Մեդիա[33] և տեղի մարդկանց ամեն ինչ պատմեց: Այնտեղ էր գտնվում և քահանա Նիկետասը, մականունը Կանանակես, որ պաշարման ողջ ընթացքում գտնվում էր սրբուհու տաճարում և պաշտոն էր վարում: Գաղթականների հետ միասին նա էլ հեռացել ու եկել էր Մեդիա: Լսելով ռազմագերու պատմածը, նա վերհիշեց երանուհու հրաշագործությունները և այլևս չէր կարողանում տեղում մնալ, նա [ուզեց] Բիզյուե գնալ և երկրպագել սրբուհուն, հակառակ որ թշնամիները [քաղաքում] էին գտնվում: Հիշյալ Սիմեոնը այդ ընթացքում Բիզյուե հասնելով[34] և այն բնակիչներից դատարկված գտնելով, բնակարաններն ավերակ, հրամայեց կրակի ճարակ չդարձած պարիսպները հիմնովին տապալել, գետինը հերկել ու ցանել: Այդպես էլ եղավ, քանզի ժամանակն հարմար էր:

24. Ճիշտ չէր լինի չհիշատակել Սիմեոնին պատահածը: Մտնելով Բիզյուե, նա կրակի ճարակ չդարձած միայն տաճարները գտավ: Նա շրջում էր աչքի անցկացնելով ամեն ինչ: [Տաճարներից] ոմանք նա պահեստ էր դարձնում, ոմանք՝ բնակարան, ոմանք էլ՝ ախոռ: Հասնելով սրբուհու տաճարը և տեսնելով շիրիմը, ներկաներին հարցրեց, թե ո՞ւմն է: Նրանք հայտնեցին, ասացին շիրիմում գտնվողի հրաշագործությունների մասին: [Սիմեոնը] հրամայեց բացել այն: Բացելու պահին իսկույն մի բոց եկավ և բոլորին սարսափի մեջ գցեց: Տեսնելով դա, նա իր մարդկանց հրամայեց տաճարին ամենևին ձեռք չտալ, թույլատրեց քահանաներին ամեն օր պաշտոն մատուցել: Նա այդ քաղաքը իր մերձավորներով բնակեցրեց և նրա վրա կառավարիչ նշանակելով ոմն Բուլիասի[35], դուրս եկավ Թրակիայի մնացած քաղաքները նույն ձևով բնակեցնելու մտադրությամբ: Հիշյալ քահանա Կանանակեսը ռազմագերու խոսքերի վրա եռանդով լցված, ինչպես ասվեց, շտապեց Բիզյուե գալ: Լինելով բերդին մոտիկ, նա ձերբակալվեց բուլղարների կողմից և հարցաքննության ենթարկվեց. ո՞վ է և ինչպե՞ս համարձակվեց այստեղ գալ: Բայց նա, ճշմարտության զավակ լինելով և սովորած ճշմարտությունն ասել, խոստովանեց իր ով լինելն ու գալու պատճառը: Երբ այդ մասին իմացավ Բուլիասը, հրամայեց իր մոտ հրավիրել մարդուն: Երբ նա եկավ, նրան ճանապարհ տվեց, հայր անվանեց, պետք եղած պատիվը ցուցաբերեց ու խնդրեց պատմել սրբուհու կյանքի և հրաշքների մասին: Նա ուրախությամբ՝ արտասվալից ու անկեղծ պատմեց ամեն ինչ, թե ինչպես նա Կոստանդնուպոլսից էր ծագում, դուստրն էր ազնվական ու փառավոր ծնողների, ինչպես ամուսնացավ քաջարի մի մարդու հետ, անունը Նիկեփոր, որն ստացավ քաղաքի զորավարությունն ու տուրմարխությունը, ինչպես առաջին անգամ բերեց երկու տղա զավակ, որոնք դեռևս իր և ամուսնու կենդանության օրոք

մանացան, ինչպես նա բաջարար տարավ իր [որդիների] մահը, ինչպես այնուհետև նա երկվորյակ որդիներ ունեցավ, որոնց մարմնին նշաններ կային, ինչպես իրականացավ այն, ինչ մայրը նրանց առթիվ կանխագուշակեց: Մեծը, որ **Վահան** էր կոչվում, զինվորական ծառայության մեջ մտավ և վերջերս Սիլիվրիայում[36] բանակած զորքի հրամանատար դարձավ, իսկ նրանից հետո ծնված Ստեփանոսը, վանականների ճանապարհով ընթանալով, հաստատվեց Օլիմպոս լեռան վրա[37], ապրելով լոկ իր և Աստծո համար: Քահանան ահա այդպես երանուհու մասին մնացած ամեն ինչն էլ ճշգրտությամբ պատմեց Բուլիասին, բոլորի մասին նրա տածած անկեղծ սիրո, անչափ ողորմածության, կարեկցության, խաղաղասիրության, մեծահոգության, գթացողության, բարության, աղքատասիրության մասին, այն մասին, թե ինչպես նա ամբողջ գիշեր աղոթում էր, արտասվում ու համբերում, նրա ատրաստակամ հոգացողության մասին սուրբ տաճարների նկատմամբ, քրտնաթոր անվերջ ծնրադրությունները այդ [տաճարներում], սուրբ տաճարների բարեհեսության վրա նրա ունեցած սիրո ու հոգատարության մասին: Ապա պատմեց նաև սատանայի դրդմամբ իր դեմ հորինած ամբաստանության մասին՝ ամուսնու իրենից երեսը շուռ տալու, ստացած վերքերի, մահվան և այդ բոլորից հետո անհաշիվ հրաշքների մասին, որոնց մի մասի վերաբերյալ արդեն ասվեց, իսկ մյուսի մասին, ժամանակի սղության պատճառով խոսք չեղավ, ապա ամբաստանողների ստացած հատուցման մասին, այն մասին, թե ինչպես նրա ամուսին Նիկեփորը Բիզյուեի պաշարման ժամանակ վախճանվեց ու թաղվեց իր կողմից երանուհու համար կառուցված տաճարի ձախ կողմում: Բուլիասը, լսելով այդ մասին, ապշեց ու զարմացավ և ներկաների հետ փառավորեց Աստծուն: [Բուլիասն] ասաց [ռազմագերիին]. «Բայց, ո՞վ արգո հայր, դու ինչպե՞ս կարողացար այսպիսի բարիքը լքել, այն էլ այն ժամանակ, երբ պատերազմի բերմամբ նման փորձանքի պետք է որ հանդիպեիր: Արդ, ամեն ինչ ներված է քեզ և եթե ցանկություն ունես, քեզ թույլատրվում է պաշտոն մատուցել: Ցանկացիր մեզ մոտ բնակվել, մենք քեզ կտանք ինչ հարկավոր է»: Նա պատասխանեց. «Առայժմ բնակվել չեմ կարող, քանզի ցանկանում եմ ապրել Մեդիայում գտնվող իմ հարազատների հետ, իսկ ինչ կարող եմ անել, շատ եմ խնդրում, ինձ թույլ տրվի անել. հրամայի՛ր, որպեսզի ինձ թույլատրվի [մեկ-մեկ] գալ այստեղ և պաշտոն մատուցել սրբուհու տաճարում՝ առանց որևէ մեկի արգելքի»: [Բուլիասը] մեծ գոհունակությամբ խոստացավ, դեռ ավելին, նա խնդրեց չուշանալ և հաճախակի անել դա:

(Շարունակելի)





## ԵՂՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Ավազանի անունով՝ Սամվել: Ծնվել է 1955 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում: 1958 թվականին ընտանիքով փոխադրվել է Երևան և 1961—1967 թվականներին սովորել տեղի № 82 միջնակարգ դպրոցում:

1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1972 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր տաճարի լուսաբարձրյալ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

1973 թվականին ավարտել է հոգևոր ճեմարանը փայլուն հաջողությամբ: Ավարտական գրութեան է եղել՝ «Մովսես վրդ. Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը (ուսումնասիրություն, բնագիր, հավելված): Սույն ավարտական «Ուսումնասիրություն» բաժինը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի Թ և ԺԱ համարներում:

1973 թվականի հուլիսի 22-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

1973 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1975 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում՝ քարտուղարի պաշտոնով, և միաժամանակ հոգևոր ճեմարանում դասավան-

դել «Քրիստոնէական» և «Վարք սրբոց» առարկաները: Այդ տարիներին եղել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գավազանակիրը և այդ հանգամանքով 1975 թվականի հունիսի 5—19-ը ուղեկցել Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին հովվապետական ուղևորություններին Անգլիա և Ֆրանսիա:

1976 թվականի հունվարի 10-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի կողմից ստացել է մասնավոր վարդապետական գավազան կրելու իշխանություն: Վարդապետական ավարտաճառն է եղել՝ «Մովսես վրդ. Երզընկացու դավանաբանական գործերը» (ուսումնասիրություն և բնագրեր): Սույն աշխատությունը նույնպես տպագրվել է «Էջմիածին» ամսագրում. 1974 թ. Թ, Ժ, ԺԲ, 1975 թ. Ա և Գ համարներում:

Տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնալից միաբաններից է, որը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հունվարի 19-ին մեկնեց Աթենք՝ հետևելու տեղի համալսարանական դասընթացներին և հմտանալու հունարեն լեզվի, հայրաբանական և աստվածաբանական գիտությունների մեջ:




## ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՈՒՄ

**Հայոց Հայրապետին** ուղղած իր նոյեմբեր 24 թվակիր պաշտոնական գրության մեջ եգիպտահայոց առաջնորդական տեղապահ **տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանը** հաղորդում է վերջերս Կահիրեում և Ալեքսանդրիայում կատարված թեմական ամբողջական ընտրությունների մասին, ըստ համայնքի ներքին կանոնագրքի, և Նորին Սուրբ Օծությանն է ներկայացնում «զույգ թեմական ժողովներու և անոնցմե բխող բոլոր մարմիններուն հավատարմական և որդիական զգացումները»:

Հոկտեմբերի 26-ին կատարվել են Կահիրեի թեմական ընտրությունները՝ «համերաշխ և եղբայրական մթնոլորտի մը մեջ»:

Ընտրությանը մասնակցող բոլոր կազմակերպություններն ու շրջանակները նախապես մամուլին են հանձնել մի համաձայնագիր՝ ազնիվ ու բարի նպատակ ունենալով ընտրություններին ներկայանալ «համագործակցական ցանկով մը, կարենալ իրագործելու թեմիս եկեղեցական, կրթական, կալվածական և վարչական գործերը»:

Կողմերի սույն համաձայնագիրը ջերմորեն և խանդավառությամբ է ընդունվել «իբրև արտահայտությունը՝ ողջմիտ և գիտակից ընտրողներուն զգացումներուն ու կամքին»:

Հոկտեմբերի 26-ին ընտրվել են Կահիրեի թեմական ժողովի 24 անդամներ:

Հոկտեմբերի 31-ին նորընտիր թեմական ժողովը գումարել է իր առաջին նիստը և ընտրել իր Դիվանը.

**Պոլ Քիլիտջյան՝ ատենապետ.**

**Դոկտ. Սուրեն Բայրամյան՝ ատենադպիր:**

Ապա տեղի է ունեցել Գործադիր մարմնի կամ Քաղաքական ժողովի յոթ հոգուց բաղկացած կազմի ընտրությունը.

**Վահան Չեչենյան՝ Ա. ատենապետ.**

**Սարգիս Սարգիսյան՝ Բ. ատենապետ.**

**Նորայր Տեովլեթյան՝ ատենադպիր:**

Նոյեմբերի 9-ին տեղի են ունեցել նաև Ալեքսանդրիայի հայոց թեմական ժողովի ամբողջական ընտրությունները, դարձյալ

համերաշխ ու եղբայրական մթնոլորտում:

Այստեղ ևս ընտրվել են թեմական ժողովի 24 անդամներ:

Թեմական ժողովը նոյեմբերի 21-ին գումարել է իր առաջին նիստը և կազմել իր Դիվանը.

**Մարտիկ Զարպհանելյան՝ ատենապետ.**
**Նորայր Պենջհանյան՝ ատենադպիր:**

Ապա ընտրվել է յոթ հոգուց բաղկացած Քաղաքական ժողովի նոր կազմ.

**Վահան Այնքսանյան՝ Ա. ատենապետ.**
**Ստեփան Ստեփանյան՝ Բ. ատենապետ.**
**Նուբար Դավթյան՝ ատենադպիր:**

Թեմական ժողովների ընտրությամբ եգիպտահայոց թեմի կյանքը մտել է իր բնականոն ընթացքի մեջ:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ է տեղեկանում եգիպտահայ թեմում կատարված պատգամավորական ընտրությունների արդյունքների մասին և շնորհավորում այդ ընտրությունները՝ այն ջերմագին բարեմաղթությամբ, որ եգիպտահայ թեմի եկեղեցական, կրթական, մշակութային, ազգային գործերը շարունակվեն այսուհետև համերաշխ ու եղբայրական մթնոլորտում՝ ի ափոփանս հայրական Իր սրտի և ի միխիթարություն թեմի հայության, ի պայծառություն մեր եկեղեցիների ու կրթական հաստատությունների, եգիպտացի ազնիվ ու հյուրընկալ ժողովրդի ծոցում, ուր հայ ժողովուրդը ապրում է խաղաղ ու բարօր՝ որպես շինարար ու կարգապահ քաղաքացի մեծ Եգիպտոսի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, շնորհավորում է եգիպտահայության թեմական ընտրություններում հանդես եկած համերաշխության ոգին՝ բարեմաղթելով, որ համագործակցության շինարար ու ազգօգուտ այդ նոր ոգին դառնա ամուր հիմքը թեմի եկեղեցական, կրթական, ազգային բեղուն գործունեության բոլոր բնագավառներում և ապացույցը՝ եգիպտահայ թեմի կենսունակության ու բարօրության՝ ի փառս մեր սուրբ եկեղեցու և ի միխիթարություն մեր ժողովրդի:





# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1975 թ. նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 10-ը Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգերորդ համաժողովը, որը գումարվում է յոթ տարին մեկ անգամ: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին ԵՀԽ-ի անդամ 270 եկեղեցիների հոգևորական և աշխարհական պատգամավորներ՝ ժամանած աշխարհի հինգ ցամաքամասերի բազմաթիվ երկրներից, ԵՀԽ-ի վարչական անձնակազմը և նրա աշխատակիցները՝ Ժնևից: Համաժողովին հրավիրվել էին նաև ԵՀԽ-ի ոչ անդամ եկեղեցիներից բազմաթիվ դիտորդներ, խորհրդականներ, միջազգային զանազան կազմակերպությունների, քրիստոնեական խորհուրդների, այլ կրոնների ներկայացուցիչներ, հյուրեր, ինչպես նաև ռադիոյի և հեռուստատեսության աշխատակիցներ, միջազգային մամուլի թղթակիցներ՝ թվով ընդամենը շուրջ 2500 հոգի:

Ամենայն Հայոց կաթողիկոսի որոշումով, իբրև Հայաստանյայց եկեղեցու ներկայացուցիչներ, համաժողովի աշխատանքներին իրենց մասնակցությունը բերեցին Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքության դիվանապետ տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, Անգլիայի հայոց Հայրապետական պատվիրակ և հոգևոր տեսուչ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը, Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանն ու նույն բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Տանն Կիլիկիո Աթոռի կողմից համաժողովին մասնակցում էին տ. Գարեգին արքեպիսկոպոս Սարգսյանը, տ. Արամ վարդապետ Քեշիշյանը և օրհորդ Թենի Սիմոնյանը:

ԵՀԽ-ն սույն համաժողովի համար նշանաբան էր ընտրել «Հիսուս Քրիստոսն ազատագրում է և միացնում»:

Համաժողովի աշխատանքներն սկսվեցին

նոյեմբերի 24-ի առավոտյան՝ ԵՀԽ-ի նախկին գլխավոր քարտուղար դոկտ. Վիսերթ Հուֆթի նախագահությամբ: Տեղական մի շարք եկեղեցիների ներկայացուցիչների կողմից բարիգալստյան և ողջույնի ուղերձների ընթերցումից հետո ժողովում հաշվետու ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի նախագահ դոկտ. Մ. Թոմասը:

Համաժողովն ուշադրությամբ լսեց նաև ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի բովանդակալից զեկուցումը:

Հետագա օրերի ընթացքում առանձին զեկուցումներով լիագումար նիստերում հաջորդաբար հանդես եկան մի շարք պատգամավորներ, որոնց զեկուցումները նվիրված էին հետևյալ թեմաներին. «Ո՞վ է այդ Հիսուս Քրիստոսը, որն ազատագրում է և միացնում», «Որպեսզի բոլորը լինեն մեկ», «... Որպեսզի աշխարհը հավատա», «Գերիշխանության և ճնշման շղթաներից դուրս», «Ստեղծագործություն, տեխնոլոգիա և մարդու վերապրումը», «Կանայք հեղաշրջման ընթացքի մեջ գտնվող աշխարհում»: Վերոհիշյալ բոլոր զեկուցումներն էլ, որոնց շուրջ գրավոր առանձին մեկնաբանություններով և լրացուցիչ հարակից զեկուցումներով հանդես եկան տասնյակ հոետորներ, բազմակողմանիորեն քննարկվեցին համաժողովի կողմից:

Դոկտ. Մ. Թոմասի հաշվետու զեկուցման մեջ կենտրոնական տեղ էր հատկացված ավետարանչությանը: Այդ կապակցությամբ զեկուցողն առաջ քաշեց մի շարք այժմեական հարցեր, ինչպիսիք են, օրինակ, Քրիստոսի գործի կարևորությունը եկեղեցուց դուրս, այն կապը, որ գոյություն ունի դիալոգի և ավետարանչության միջև մի կողմից ու ավետարանչության և ընկերային պարտավորության միջև՝ մյուս կողմից՝ դրանք հանձնելով համաժողովի ուշադրությանը: «ԵՀԽ-ի քրիստոսակենտրոն հանգամանքը,—շեշտեց նա,—ստիպում է նրան աշխարհը դնել իր աստվածաբանական տեսիլքի կենտրոնում: Աստվածաբանությունը կենդանի կմնա միայն այն դեպքում, եթե այն դրվի եկեղեցու և աշխարհի հանդիպման կետում»:

Այնուհետև դոկտ. Թոմասը, իր զեկուցման մեջ ընդհանուր գծերով ներկայացնելով էկումենիկ շարժման զարգացման ու առաջընթացի պատկերը, նշեց. «Նյու Դելհիի և Ուփսալայի համաժողովներից հետո Էկումենիզմը ստացավ երկու կարևոր մեծ մղումներ, որոնք, աստվածաբանորեն արտահայտվելով, զգալիորեն տարբերեցին նրան նախորդ ժամանակաշրջանից: Առաջինն այն աստվածաբանական բախումն էր, որն առաջ եկավ քրիստոնեական երեք մեծ շարժումների՝ «Հավատո և կարգի», «Գործնական քրիստոնեության» և «Առաքելությունների միջազգային խորհրդի» միաձուլումից: Միմյանցից անկախ այս երեք մեծ շարժումները միացան իրար՝ կազմելու համար մի հզոր հոսանք, որ, աստվածաբանական և հոգևոր մակարդակի վրա, իսկույն առաջնորդեց էկումենիկ երեք մեծ մտահոգությունների համատեղ կենսագործմանը. դրանք են՝ միություն, առաքելություն և ծառայություն:

Այդ մղումներից երկրորդը օրավուր աճող գիտակցումն էր ժամանակակից աշխարհի իրականությունների և նրա աստվածաբանական անդրադարձումը էկումենիզմի վրա: Եվ այդ զգացվեց երեք ձևով. Արևելյան Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի բազմաթիվ եկեղեցիներ իրենց հետ բերեցին ու ԵՀԽ-ին հաղորդեցին իրենց ժողովուրդների, ազգերի և ցեղերի հույսերը, տենչանքներն ու պայքարները: Էկումենիզմի պատմության մեջ, առաջին անգամ լինելով, այդ եկեղեցիները դադարեցին այլևս արևմտյան եկեղեցիների քննությանը հանձնված ինչ-որ արտաքին առարկաներ լինելուց՝ դառնալու համար ապրող, կենդանի իրականություններ, որոնք բաղկացուցիչ մասն են կազմում ԵՀԽ-ի քրիստոնեական համայնքի: ԵՀԽ-ն սկսեց լսել նաև աղքատներին, լուսանցքի վրա գտնվողներին, բոլոր ճնշվածներին և իրավազրկվածներին քրիստոնեական մի նոր ընկալումով: Բացի այդ, վերջին տարիներին, աշխարհի տարբեր երկրների զանազան աշխարհական մասնագետներ սոցիալական մի շարք այժմեական հարցեր քննարկելու նպատակով ԵՀԽ-ի հետ ունեցան հանդիպումներ, որոնցից ամենակարևորը «Եկեղեցի և հասարակություն» համաշխարհային կոնֆերանսի ժամանակ տեղի ունեցած հանդիպումն էր 1966 թվականին: Բոլորովին վերջերս քաղաքական և սոցիալական գիտությունների հայտնի մասնագետներ հավաքվեցին եկեղեցու մի շարք աստվածաբանների հետ՝ միասնաբար ուսումնասիրելու, թե ի՛նչ է իրենց քրիստոնեական կոչումը և թե ի՛նչ պիտի լինի եկեղեցու առաքելությունը այսօրվա աշխարհում՝ մարդկության առաջընթացի, սոցիալական և ցեղային արդարության համար մղվող պայքարի ոլորտում»:

Իր զեկուցման ավարտին դոկտ. Թոմասը, անդրադառնալով ժամանակակից մարդկության առջև ծառացած բազմաթիվ խնդ-

դիրների լուծման ճանապարհին ԵՀԽ-ին վերապահված առաքելությանը, եզրակացրեց. «Չի կարող լինել վավերական աստվածաբանություն՝ ժամանակակից աշխարհի և նրա առաջադրած խնդիրների առջև պատասխանատու մի կեցվածք հանդես բերելուց դուրս: Եվ դա՝ հանուն մարդկային արժանապատվության...: Աշխարհի հարցերը ԵՀԽ-ի այսօրվա գործունեության մեջ պետք է հանդիսանան նրա առավել լուրջ մտահոգությունը... Հին Կտակարանում Աստուծո արդարությունը հայտնվեց ճնշողների նկատմամբ վճռական մի դիրքորոշման մեջ՝ ի նպաստ անպաշտպանների, աղքատների և անարդարության զոհերի ազատագրության: Քրիստոսն ինքը ևս Աստուծո արդարությունը հայտնեց՝ աղքատների և անպաշտպանների կողմը բռնելով: Եկեղեցին կարո՞ղ է լինել իսկապես Քրիստոսի եկեղեցի, եթե նա չեղբայրանա աղքատների և իրավազրկվածների հետ: Եկեղեցին իրավունք ունի՞ նույնիսկ օգնելու աղքատներին, եթե նա ճնշողի դաշնակիցն է...»:

ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերն իր զեկուցման մեջ համակողմանի լայն վերլուծության ենթարկեց աշխարհի ներկա կացությունը և այն դժվարությունները, որոնց բախվում է այսօրվա մարդկությունը՝ անելով նաև մի շարք խորհրդածություններ ԵՀԽ-ի բնույթի և նրա գործունեության շուրջ: Նա նշեց, որ ԵՀԽ-ն առանձնապես զգայուն վերաբերմունք է հանդես բերել այն խռովահույզ իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել անցած յոթ տարիների ընթացքում աշխարհի տարբեր մասերում, մասնավորապես Վիետնամում և Մերձավոր Արևելքում, և որոնց հետևանքներն առավել կամ նվազ չափով զգալի են դարձել աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների վրա:

Անդրադառնալով աշխարհի այսօրվա կացությանը՝ գլխավոր քարտուղարը համագումարի ուշադրությանը հանձնեց այն պարագան, որ ներկայումս մարդկության գլխին կախված ամենալուրջ սպառնալիքը հետզհետե լայնացող այն անդունդն է, որը գոյություն ունի հարուստների և աղքատների միջև ինչպես ազգերի ներսում, այնպես էլ նրանց միջև և որը ուղղակի հետևանքն է հարուստների և հզորների շահի վրա հիմնված համաշխարհային մի անարդար տնտեսակարգի: «Եթե պատերազմական ամենասահարկու զենքերի գերաճը, քաղցը, թերասնումն ու սովը, շրջապատող միջավայրի կեղտոտումը, աշխարհի բարիքների անհավասար բաշխումը, հարուստների և աղքատների, զարգացած և թույլ զարգացած երկրների միջև ստեղծված անդունդը լուրջ սպառնալիքներ են և ծանրանում են մարդկության ճակատագրի վրա,—նշեց դոկտ. Փոթերը,—մյուս կողմից՝ միտիթարական է հաստատել այն շարժումը, որ տեղի է ունենում հակառակ ուղղությամբ: Այսօր ամենուրեք պետությունների և ժողովուրդների մեջ դրսևորվում է հետզհետե աճող առողջ մի գիտակցություն, որի արդյունքն են պետությունների միջև կնքված ռազմական, տնտեսական և առևտրական բնույթի բազմաթիվ համաձայնագրերը: Վերջերս, երկարատև բազում ջանքերից հետո, կնքվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Ժողովուրդներն այսօր ձգտում են իրենք որոշել իրենց ազգային ճակատագիրը: Նրանք հաստատում են իրենց իրավունքը՝ տնօրինելու իրենց բնական հարստությունները: Եթե մեր ժամանակի հարցերն ունեն համաշխարհային բնույթ և, հետևաբար, պահանջում են համաշխարհային չափանիշով գործունեություն, անհրաժեշտ է և հրամայական՝ շարժման մեջ դնել ամբողջ աշխարհի քրիստոնյաների ուժերը, որպեսզի նրանք աշխատեն ու գործեն այդ հարցերի լուծման համար: Եվ հենց այդ է, որ ջանաց անել Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը անցած յոթ տարիների ընթացքում... Ի քրիստոս մեր ունեցած հավատը մեզ դարձնում է նոր տղամարդիկ և նոր կանայք, որոնք կոչված են միանալու Աստուծո գործին՝ ստեղծելու համար մարդկային մի նոր կարգ, որտեղ պիտի հաղթանակեն ճշմարտությունն ու արդարությունը: Այս իմաստով ըմբռնված հավատը թմրադեղ չէ, այլ մեր մեջ գործող առաջնորդիչ մի մեծ ուժ, որ, Աստուծո ծրագրի համաձայն, ձգտում է կերպարանափոխել նրա ստեղծած աշխարհը սիրո, ուրախության և խաղաղության թագավորության... Սրանում է մեր կոչումը որպես եկեղեցիներ և քրիստոնյաներ: Սրանում է մեր հանդիպման խոր իմաստը սույն համաժողովում որպես հավատի, հույսի և սիրո եղբայրական համայնք»:

Շոշափելով եկեղեցիների միության հարցը, գլխավոր քարտուղարն իր զեկուցման վերջում նշեց, որ վերջին համաժողովից ի վեր մեծ ջանքեր են գործադրվել ԵՀԽ-ի կողմից՝ հասնելու համար միության վերաբերյալ փոխադարձ լավագույն մի հասկացողության, և որ անհրաժեշտություն է զգացվում վերասահմանելու եկեղեցու միությունը այն բարդ իրադրության շրջանակի մեջ, ուր ապրում են եկեղեցիներն այսօր

ՆԱՅՐՈԲԻԻ՝ ԵՀԽ-Ի Ե ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ՌՈՒՍ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՀԻՐԵԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ

թե՛ միմյանց միջև և թե՛ իրենց ու մարդկային հասարակության միջև գոյություն ունեցող հարաբերությունների պայմաններում: «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ստեղծվել է,—շեշտեց նա,—օգնելու համար եկեղեցիներին՝ առաջ գնալու քրիստոնեական տիեզերական մի հասարակության իրականացման ուղղությամբ, հասարակություն, որին մաս կազմեն բոլոր եկեղեցիներն անխտիր ամեն տեղ: Այս համաժողովում մեր պարտականությունն է բացահայտել, թե ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով ԵՀԽ-ն կարող է դառնալ Աստուծո առանձնաշնորհյալ գործիքը՝ հասնելու համար այդ նպատակին գալիք տարիների ընթացքում: Համաժողովն իր առաջադրանքի մեջ ձախողված կլինի, եթե մենք չկարողանանք առաջ շարժվել նոր տիպի հավաքական մի հարաբերություն ստեղծելու համար անդամ եկեղեցիների և ԵՀԽ-ի միջև՝ իրենց կյանքի ու գործունեության բոլոր մակարդակներում... Դա, անտարակույս, չափազանց դժվար գործ է, թանկ արժող մի էկումենիզմ, որովհետև հարցականի տակ է դնում մեր բոլոր գաղափարներն ու ավանդական դիրքերը: Բայց դա միակ ճանապարհն է, որը թույլ կտա մեզ ազատագրվելու ի Քրիստոս՝ ի խնդիր ճշմարտապես եղբայրական, ճշմարտապես քրիստոնեական մի հասարակության իրականացման»:

Շուրջ երեք շաբաթ տևած համաժողովի աշխատանքներն ընթացան բավականին բարդ կառուցվածք ունեցող ժողովական համակարգով: Համաժողովին մասնակցող անդամ եկեղեցիների բոլոր ներկայացուցիչները, ըստ իրենց նախընտրության, բաժանվեցին վեց մասնախմբերի, որոնք, նախօրոք պատրաստված ծրագրի համաձայն, մանրամասնորեն ուսումնասիրեցին համաժողովին առաջարկված վեց մեծ հարցեր.

ա. Խոստովանել Քրիստոսին այսօր:

բ. Ի՞նչ է պահանջում միությունը:

գ. Որոնում եղբայրական հասարակության (տարբեր հավատալիքների, մշակույթների և գաղափարախոսությունների տեր մարդկանց համատեղ որոնումը):

դ. Դաստիարակություն ի խնդիր ազատագրության և հասարակության:

ե. Անարդար կառուցվածքներ և այլայքար ազատագրության համար:

զ. Մարդու զարգացումը (իշխանության, տեխնոլոգիայի և կյանքի որակի երկդիմի բնույթը):

Այս վեց մասնախմբերից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվեց երեք կամ չորս առանձին ենթախմբերի, որոնցում քննության առնվեցին վերոհիշյալ վեց գլխավոր թեմաներից բխող կրոնական, ընկերային, քաղաքական մի շարք այժմեական հարցեր, ինչպես, օրինակ, ծեսի նշանակությունը, ավետարանչություն, տեսանելի միության որոնում, կանանց ազատագրություն և իրավահավասարություն, զինաթափում, պայքար ցեղային խտրականության դեմ, մարդկային իրավունքներ, ճնշված ժողովուրդների ազատագրություն և այլն:

Այս մասնախմբերի աշխատանքներին զուգընթաց եկեղեցիների ներկայացուցիչները բաժանվեցին 15—20 հոգուց բաղկացած ութսուն «աշխատանքային խմբերի», որոնք ութ հիստերի ընթացքում քննարկեցին համաժողովի գլխավոր թեման իր բոլոր կողմերով, միաժամանակ ուսումնասիրության առարկա դարձրին աստվածաշնչական որոշ ընթերցվածներ՝ հարուցված հարցերի լույսի տակ: Այս խմբերից շատերը հետագայում իրենց եզրակացությունները ներկայացրին հատուկ մի հանձնաժողովի, որի պարտականությունն էր՝ համաժողովի անունից պատրաստել մի փաստաթուղթ և այն ներկայացնել ընդհանուր ժողովին՝ ի հաստատումն, որպեսզի այնուհետև հրապարակվի մամուլում:

Բացի վերոհիշյալ մասնախմբերից և աշխատանքային խմբերից, ժողովը բաժանվեց նաև չորս մեծ միավորների, որոնք իրենց հերթին ստորաբաժանվեցին սահմանափակ թվով մասնակիցներ ընդգրկող խմբակների, որոնց կողմից և լայն քննարկման ենթարկվեցին Ուփսալայի համաժողովից մինչև Նայրոբիի համաժողովն ընկած ժամանակաշրջանում ԵՀԽ-ի կատարած աշխատանքները:

Այս չորս միավորները, որոնք մի տեսակ հրապարակային վիճաբանությունների բնույթ ունեցող հավաքույթներ էին, ուսումնասիրության առարկա դարձրին հետևյալ նյութերը.

ա. ԵՀԽ-ի **ընդհանուր քարտուղարության** և ուղղակիորեն նրանից կախված մյուս բաժինների քարտուղարությունների գործունեությունը՝ իր բոլոր երեսներով:

բ. **Հավատո և կարգի** միավորի գործունեությունը, որի ձգտումն է ժամանակակից մարդկության մեջ զարգացնել հավատը, տարածել քրիստոնեությունը, ուղիներ որոնել եկեղեցիների միությունն իրականացնելու և այդ ճանապարհով նաև նպաստելու համար ամ-

բողջ մարդկային հասարակության միությանը:

գ. **Արդարություն և ծառայություն** միավորի գործունեությունը, որի նպատակն է նպաստել արդարության և կայուն խաղաղության հաստատմանն այսօրվա աշխարհում: Այս խմբում քննարկվեցին գլխավորապես ժամանակակից միջազգային քաղաքական դրությունը, մարդկային իրավունքների հարցը և քաղաքական ու ռազմական կոնֆլիկտների մեջ ներգրավված շրջանների կացությունը:

դ. **Դաստիարակություն և հավատի վերանորոգում** միավորի գործունեությունը: Այստեղ քննության առնվեցին ընդհանրապես դաստիարակության և մասնավորապես քրիստոնեական դաստիարակության հետ կապված զանազան հարցեր:

Վիճաբանական այս չորս միավորների առաջադրանքն էր հանձնարարություններ և առաջարկություններ ներկայացնել ԵՀԽ-ի ապագա գործունեության ծրագրի մշակման կապակցությամբ:

Վերոհիշյալ բոլոր խմբերում կատարված աշխատանքների արդյունքները, որպես զեկուցագիր, հանձնարարություն, առաջարկություն կամ հայտարարություն, հետագայում բերվեցին ընդհանուր ժողովին, լայն քննարկման ենթարկվեցին լիագումար նիստերում և մասնակի փոփոխություններով ու քվեարկությամբ հաստատվեցին համաժողովի կողմից որպես կարևոր փաստաթղթեր:

Հայաստանյայց եկեղեցու ներկայացուցիչները տեղաբաշխվել էին տարբեր աշխատանքային խմբերում: Նրանցից յուրաքանչյուրն իր գործուն մասնակցությունը բերեց որոշ մի մարզի աշխատանքներին՝ լինի ընդհանուր նյութերի ուսումնասիրման, լինի գործնական աշխատանքը կազմակերպող զանազան մարմինների աշխատանքների կապակցությամբ: Համաժողովի ամբողջ տևողության ընթացքում հայ եկեղեցու պատգամավորները շեշտեցին Հայաստանյայց և արևելյան մյուս եկեղեցիների ավանդություններից բխող գաղափարներ ու տեսակետներ, որոնք կարևոր մի նպաստ հանդիսացան մյուս եկեղեցիներից եկած և մյուս եկեղեցիներից տարբերվող տեսակետների առաջացման մեջ:

Համաժողովում քննարկված հարցերի մեջ կենտրոնական տեղ գրավեց եկեղեցիների միության հարցը: Այդ կապակցությամբ ցայտուն կերպով դրսևորվեցին երկու հակադիր տեսակետներ: Համաժողովի մասնակիցներից ոմանք մեղադրում էին ԵՀԽ-ին այն բանում, որ նա իր մտահոգությունների առանցքն է դարձրել այսօրվա ընկերային-քաղաքական հարցերը՝ անհրաժեշտ չափով ուշադրություն չդարձնելով եկեղեցիների միության հարցին, մինչդեռ ԵՀԽ-ի գործունեությունը պետք է կենտրոնանձգված լինի ամենից առաջ այդ հարցի վրա՝ հեռանկար ունենալով մարդու փրկության վերջնական նպատակը, որ է՝ հավիտենական կյանքն ի Տեր: Սրան հակառակ, ուրիշներ այն համոզումն էին արտահայտում, որ եկեղեցիների առաջնահերթ պարտականությունը պետք է լինի պայքարել ընկերային արդարության, ճնշվածների ազատագրության համար, և որ միությունը կարող է իրականանալ միայն այդ առաքելության ճանապարհին եկեղեցիների ստանձնած հասարակաց պարտավորության շուրջ: Եվ դա կլինի շատ ավելի կենդանի մի միություն, քան աստվածաբանական բանավեճերից, ավանդական տեսակետների բաղդատություններից և դիալոգներից առաջացած միությունը:

Համաժողովում ԵՀԽ-ի ապագա գործունեության համար մշակված ծրագրի մեջ այս հարցի կապակցությամբ շեշտը դրվեց ընկերային, քաղաքական և մարդկային պայքարի մեջ քրիստոնեական եկեղեցիների ունենալիք մասնակցության վրա՝ եկեղեցին մեր օրերի աշխարհում մարմնացնելու մտահոգությամբ:

Համաժողովը առանձին կարևորությամբ քննարկեց կանանց ազատագրության, իրավահավասարության, եկեղեցիների ընդհանուր աշխատանքների ու մանավանդ մարդասիրական գործերի մեջ նրանց ունենալիք ավելի լայն մասնակցության հարցը: Այդ առնչությամբ համաժողովի կողմից ընդունված փաստաթղթում նշվում է, որ անդամ եկեղեցիները պետք է նյութական հատուկ միջոցներ նախատեսեն, որպեսզի կանայք ևս հնարավորություն ունենան աստվածաբանական մասնագիտություն ձեռք բերելու և մասնավորապես ստանալու բարձրագույն կրթություն: Բացի այդ, եկեղեցիները պետք է աշխատեն ապահովել կանանց գործուն ներկայությունը որոշումներ ընդունող եկեղեցական մարմինների մեջ: Անդամ եկեղեցիներն իրենց բոլոր միջոցներով պետք է ճնշում գործադրեն կառավարությունների և ազգային ու հասարակական այն կազմակերպությունների վրա, որոնք կանանց նկատմամբ վարում են ճնշման քաղաքականություն, և պաշտպան կանգնեն այն բոլոր կազմակերպություններին, որոնք աշխատում են վե-

բացնել կանանց հանդեպ գործադրվող խտրականությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական և եկեղեցական ասպարեզներում:

Համաժողովի աշխատանքների մեջ պատշաճ ուշադրություն նվիրվեց մարդկային իրավունքների պաշտպանության հարցին: Համաժողովը ԵՀԽ-ին պարտավորեցրեց՝

ա. Իր հնարավորությունների սահմաններում հավաքել և տարածել ստույգ ինֆորմացիաներ, որոնք վերաբերում են մարդկային իրավունքների ոտնահարման դեպքերին:

բ. Օգնել եկեղեցու ղեկավարներին և քրիստոնյաներին՝ ամենայն բարեխղճությամբ կատարելու իրենց դժվարին պարտականությունը իշխանության չարաշահման և այլ կարգի անմարդկային արարքների դեմ, եթե այդպիսիք նկատվեն իրենց եկեղեցիներում, իրենց համայնքներում կամ երկրներում:

գ. Անհրաժեշտության դեպքում, տեղեկություններ ձեռք բերելու և օգնելու նպատակով, հատուկ խմբեր ուղարկել այնտեղ, որտեղ քրիստոնյաներ և այլ անձինք կարիք ունեն օգնության ու քաջալերանքի՝ հանուն մարդկային իրավունքների պաշտպանության իրենց մղած պայքարում:

դ. Հրապարակել հայտարարություններ ազգերի, խմբավորումների կամ անհատ մարդկանց հիմնական իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ՝ ըստ էության լուսաբանելով խնդրո առարկա հարցերը՝ դրանով իսկ նպաստելու համար այդ խախտումների պատճառների վերացմանը:

ե. Նյութական և այլ միջոցներով օգնել բոլոր այն մարդկանց և խմբերին, որոնք, իրենց քրիստոնեական հավատից մղված, իրենց երկրներում պայքարում են մարդու իրավունքների պաշտպանության և արդարության համար ու այդ պատճառով ենթարկվում մշտական ճնշման, չարչարանքների, բանտարկության և հալածանքի:

Ցեղային խտրականության հարցի կապակցությամբ համաժողովն ընդունեց հատուկ բանաձև: Այդ բանաձևում նշվում է, որ ցեղային խտրականությունն այսօր դարձել է համաշխարհային հարց և, հետևաբար, պարտավորեցնում է ԵՀԽ-ին իր ապագա գործունեության ծրագրի մեջ հատուկ տեղ հատկացնել այդ հարցին: Հարավային Աֆրիկան, ուր ցեղային խտրականությունը դրսևորվում է իր ամենաալարագ ձևի մեջ, պետք է ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների առաջնահերթ ուշադրության առարկա դառնա: Ապարտեիդի քաղաքականությունը, ընդգծվում է բանաձևում, այդ երկրում հնարավոր չի լինի, եթե չվայելի տեղի մեծ թվով քրիստոնյաների աջակցությունը: Եկեղեցիներն իրենց բոլոր միջոցներով պետք է աշխատեն կասեցնել զենքերի առաքումը Հարավային Աֆրիկա, պետք է պայքարեն, որպեսզի անհապաղ դադարեցվի Հարավ-աֆրիկյան պետության ֆինանսավորումը որոշ կառավարությունների և միջազգային արդյունաբերական խոշոր ընկերությունների կողմից, որոնք մասնակցում են ջերմամիջուկային գործարանների կառուցմանը այդ երկրում: Եկեղեցիներն իրենց ուշադրության առարկա պետք է դարձնեն նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկաների սևամորթ բնակչության, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի տեղաբնիկների, ինչպես նաև եվրոպական երկրներում աշխատող գաղթականների նկատմամբ գործադրվող ցեղային խտրականության մասնավոր դեպքերը: Մյուս կողմից՝ ամբողջ աշխարհի եկեղեցիները պետք է հսկեն, որ հեռավոր երկրներում ցեղային խտրականության վերացման համար իրենց գործադրած ջանքերի մեջ մոռացության չտան իրենց սեփական երկրներում դրսևորվող ցեղային խտրականության երևույթները հաղթահարելու անհրաժեշտությունը:

Համաժողովն իր աշխատանքների մեջ լայն տեղ հատկացրեց զինաթափման հարցին: Այդ հարցի վերաբերյալ ընդունված հայտարարության մեջ նշվում է, որ համաշխարհային երկրորդ պատերազմից երեսուն տարի հետո սպառազինությունը հասել է աննախընթաց մակարդակի: Վերջին տարիներին սպառազինությունների մրցավազքը սահմանափակելու ուղղությամբ պետությունների կողմից գործադրված ջանքերը հանգեցին այդ բնագավառում մի շարք համաձայնագրերի ստորագրման: Այդ համաձայնագրերն անշուշտ որոշ չափով նպաստեցին քաղաքական կլիմայի առողջացմանը: Այդ տեսակետից առանձնապես նշանակալից եղավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության վերաբերյալ Հելսինկիի պայմանագիրը, որ եկեղեցիները դիտում են որպես հուսո նշան այսօրվա պառակտված աշխարհում: Եկեղեցիները պետք է համարձակորեն բարձրացնեն իրենց ձայնը հանուն արդյունավետ զինաթափման և ի նպաստ այն բանի, որ ժողովուրդները ցանկանում են և կարող են ապրել առանց այդ զենքերի պաշտպանության:

Համաժողովը հանձնարարեց ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեին անհրաժեշտ մի-

ջոցներ ձեռք առնել՝ կազմակերպելու մի խորհրդակցություն, որի նպատակը լինի արգելք հանդիսանալ ռազմական ծախսերի աճին և միաժամանակ նախապատրաստել, ՄԱԿ-ի հովանավորության ներքո, համաշխարհային մակարդակով մի կոնֆերանս զինաթափման վերաբերյալ:

Մերձավոր Արևելքի դրության վերաբերյալ համաժողովն իր ընդունած փաստաթղթերում լուրջ մտահոգություն էր հայտնում այդ շրջանում օրավուր զարգացող ռազմական իրադարձությունների նկատմամբ՝ դրանք համարելով ծանր սպառնալիք համաշխարհային խաղաղությանը: Փաստաթուղթը պաշտպանում էր մերձավորարևելյան տագնապի խաղաղ կարգավորման նպատակին ուղղված Անվտանգության խորհրդի հայտնի բանաձևի գործադրման անհրաժեշտությունը որպես հուսալի երաշխիք այդ շրջանում կայուն խաղաղության ապահովմանը: «Խաղաղությունը Մերձավոր Արևելքում,—նշված էր փաստաթղթում,—պետք է հիմնված լինի արդարության և շահագրգռված բոլոր կողմերի անվտանգության վրա: Նրանցից յուրաքանչյուրի բարօրությունը կախված է բոլորի բարօրությունից»:

Անդրադառնալով Երուսաղեմի հարցին, համաժողովն անհրաժեշտ համարեց շեշտել, որ աշխարհի միլիոնավոր քրիստոնյաների և միաստվածյան մյուս քույր երկու մեծ կրոնների՝ մահմեդականության և հուդայականության հետևորդների համար Երուսաղեմը միշտ մնում է որպես ներշնչման և կրոնական խոր ապրումների աղբյուր, և հետևաբար նրանց է վերապահված ստեղծումը այնպիսի պայմանների, որոնք թույլ տային վերոհիշյալ երեք կրոններից յուրաքանչյուրի հետևորդների համար Երուսաղեմը դարձնել մի՛ բաց քաղաք, որտեղ նրանք կարողանային հանդիպել միմյանց և ապրել միասին: Մյուս կողմից՝ համաժողովն ընդգծեց, որ Երուսաղեմում և նրա շրջակայքում գտնվող քրիստոնեական սուրբ վայրերը մեծ մասամբ պատկանում են ԵՀԽ-ի անդամ եկեղեցիներին: Համաձայն սուրբ վայրերի վերաբերյալ հաստատված **ստատուկվոյի**, ոչ մի եկեղեցու իշխանություն, ինչպիսի դավանության էլ այն պատկանի, չի կարող հալակնել, որ ինքն է միայն ներկայացնում քրիստոնեական տեսակետը, և ոչ էլ այն արտահայտել բոլոր քրիստոնյաների անունից: Բացի այդ, համաժողովի կողմից ընդունված փաստաթղթում ասվում է. «Երուսաղեմի հարցը չի սահմանափակվում միայն սուրբ վայրերի պաշտպանությամբ: Այն օրգանապես կապված է մեր ժամանակի հավատալիքների և սուրբ քաղաքում ապրող համայնքների կյանքի հետ... Երուսաղեմի ապագա ստատուսի հաստատման հարցը պետք է քննվի Մերձավոր Արևելքի տագնապի կարգավորման շրջանակի մեջ՝ ամբողջությամբ վերցրած»:

Համաժողովը հանձնարարեց, որ Երուսաղեմի վերաբերյալ բոլոր հարցերը խորապես ուսումնասիրվեն այդ հարցով ուղղակիորեն շահագրգռված անդամ եկեղեցիների կողմից՝ հռոմեական կաթոլիկ եկեղեցու և մահմեդական ու հրեա կրոնական կազմակերպությունների հետ միասին:

ԵՀԽ-ի գործադիր կոմիտեի հանձնարարությամբ համաժողովի կողմից ԵՀԽ-ի անդամ ընտրվեցին ութ եկեղեցիներ, իսկ յոթ այլ եկեղեցիներ դարձան ԵՀԽ-ի գործակից անդամներ:

Համաժողովի քննարկմանը ներկայացվեց նաև ԵՀԽ-ի ապագա գործունեության ծրագիրը մշակող կոմիտեի պատրաստած զեկուցագիրը, որն իր մեջ ընդգրկում էր երեք հիմնական ուղեգծեր, որոնց պետք է հետևեր Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր առաջիկա գործունեության ընթացքում: Համաժողովը հաստատեց նմանապես ԵՀԽ-ի բարեփոխված կանոնադրության նախագիծը, որ կազմվել էր կանոնադրությունը քննարկող կոմիտեի կողմից և ներկայացվել ընդհանուր ժողովի հավանությանը:

Համաժողովի աշխատանքներին զուգընթաց հայ եկեղեցու ներկայացուցիչներն ունեցան առանձին տեսակցություններ, խորհրդակցություններ համաժողովին մասնակցող մի շարք եկեղեցիների պատվիրակությունների հետ: Դրանցից կարևորագույնը արևելյան ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ նրանց ունեցած հանդիպումն էր: Հանդիպման ընթացքում քննարկվեց արևելյան քույր եկեղեցիների ներկայացուցիչների միջև առաջիկայում ոչ պաշտոնական մի խորհրդակցություն գումարելու կարելիությունը, խորհրդակցություն, որի նպատակը լիներ ուսումնասիրել վերոհիշյալ եկեղեցիները հուզող եկեղեցական, կանոնական, միջեկեղեցական բնույթի մի շարք հարցեր և, միաժամանակ, նախապատրաստել հետագայում արևելյան ուղղափառ եկեղեցիների պետերի հանդիպումը: Պատվիրակությունների անդամների միջև գոյացավ սկզբունքային համաձայնություն, որ նույն խորհրդակցությունը տեղի ունենա Մայր Աթոռ ս. Էջմիածնում՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով:

Համաժողովի վերջին օրերին տեղի ունեցան ԵՀԽ-ի ղեկավար մարմինների ընտրությունները: Առաջին հերթին ընտրվեց ԵՀԽ-ի նոր նախագահության կազմը: Ըստ ԵՀԽ-ի սահմանադրության, նախագահության անդամների պաշտոնավարության շրջանը տևում է համաժողովից համաժողով, առանց վերընտրության իրավունքի: Վեց հոգուց բաղկացած նոր նախագահության անդամներ ընտրվեցին՝ Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմը՝ ռուս պրավոսլավ եկեղեցուց, Սինթիա Ուեդելը՝ Ամերիկայի եպիսկոպոսական եկեղեցուց, արքեպիսկոպոս Օ. Սընոդբին՝ Շվեդիայի լութերական եկեղեցուց, Ժ. Միգեզ-Բոնինոն՝ Արգենտինայի մեթոդական եկեղեցուց, գեներալ Տ. Բ. Սիմատուպանգը՝ Ինդոնեզիայի վերակազմյալ ավետարանական եկեղեցուց, և Անն Ջիաջեն՝ Գանայի վերակազմյալ ավետարանական եկեղեցուց:

Համաժողովը միաձայնությամբ ԵՀԽ-ի պատվո նախագահ վերընտրեց էկումենիկ շարժման բազմամյա գործիչ, ԵՀԽ-ի նախկին գլխավոր քարտուղար դոկտ. Վիսերտ Հուֆթին:

Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ նաև ԵՀԽ-ի ապագա գործունեությունը ղեկավարող գլխավոր մարմնի՝ կենտրոնական կոմիտեի ընտրությունը: 128 հոգուց բաղկացած նոր կենտրոնական կոմիտեի կազմում Մայր Աթոռն ունեցավ երկու ներկայացուցիչներ՝ հանձինս տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանի և տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանի:

Համաժողովի օրերին պատվիրակությունների անդամները առիթ ունեցան ներկա լինելու եկեղեցական արարողությունների, տեղական եկեղեցիներում կազմակերպված էկումենիկ աղոթքների, իրենց պատվին տրված զանազան պաշտոնական ընդունելությունների, ինչպես նաև այցելելու քաղաքի տեսարժան վայրերը: Հիշատակության արժանի է Քենիայի Հանրապետության նախագահ Ջոմո Քենիաթայի տված բացօթյա ընդունելությունը նախագահական պալատի ընդարձակ հրապարակում: Քենիայի զանազան ցեղախմբերի պատկանող երկսեռ պարախմբեր, իրենց ավանդական գույնզգույն տարազներով և աֆրիկյան զարդարանքներով, ավելի քան մեկ ժամ տողանցեցին և առանձնահատուկ ժողովրդական պարեղանակներով ու կշռութավոր շարժումներով ներկաներին ցույց տվեցին իրենց ցեղային պարերը: Համաժողովի նախագահի և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի ողջույնի ելույթներից հետո Քենիայի Հանրապետության նախագահը բոլոր պատգամավորներին ողջունեց բարիգալստյան սրտագին ու ջերմ մի ողերգ՝ նախ տեղական սուահիլի լեզվով, ապա անգլերենով:

Դեկտեմբերի 10-ի երեկոյան համաժողովն ավարտեց իր աշխատանքները:

Հետևյալ օրը տեղի ունեցավ նորընտիր կենտրոնական կոմիտեի առաջին ժողովը, որը գումարեց երկու նիստ: Երկրորդ նիստի ընթացքում կենտրոնական կոմիտեի կազմից ընտրվեց ԵՀԽ-ի նոր գործադիր մարմինը: Կենտրոնական կոմիտեի նախագահ ընտրվեց Կանադայի անգլիկան եկեղեցու արքեպիսկոպոս Էդուարդ Սքոթը:

Այսպիսով, երեք շաբաթվա լարված աշխատանքից հետո, փակվեց քրիստոնեության պատմության մեծագույն դեպքերից մեկը լինելու կոչված սույն համաժողովը:

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Մայր Աթոռի պատվիրակները Նայրոբիից հայրենիք վերադարձի ճանապարհին, համաժողովին մասնակցած այլ քույր եկեղեցիների պատվիրակությունների հետ, Եգիպտոսում մի քանի օրով հյուրը եղան ղպտական եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Շենուդա Գ Պատրիարքի:

Հայ եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին տ. Շահե, տ. Արսեն սրբազանները և Պարգև Շահբազյանը, Կահիրե ժամանեցին դեկտեմբերի 12-ին և դիմավորվեցին Կահիրեի ազգային-եկեղեցական իշխանությունների ներկայացուցիչների կողմից:

Դեկտեմբերի 13-ին, շաբաթ օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը, ընկերակցությամբ Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծայրագույն վարդապետ Բապուճյանի և Կահիրեի հայոց թեմական խորհրդի անդամ պր. Հովհաննես Քեհյայանի, պաշտոնական այցելություն տվեց Կահիրեի ղպտիների պատրիարքարան՝ Նորին Ամենապատվություն Շենուդա Գ-ին, որը ջերմորեն ողջագուրվեց հայ եկեղեցու ներկայացուցիչների հետ:

Սույն այցելության առիթով տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանն Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական սրտագին ողջույնները հաղորդեց Նորին Ամենապատվությանը, որը, իր հերթին, հուզումով հիշեց իր այցելությունը Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ Հայոց Հայրապետին, և խնդրեց փոխադարձաբար իր եղբայրական սիրո զգացումները հաղորդել Նորին Սրբությանը:

Այնուհետև երկու քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում Նորին Ամենապատվությունը կարևորությամբ անդրադարձավ երկու քույր եկեղեցիների հարաբերությունների վրա՝ ցանկություն հայտնելով, որ այդ հարաբերությունը մեր օրերում է՛լ ավելի սերտանան էկումենիկ ոգով, աստվածաբանական, վարդապետական դիալոգների միջոցով, ինչպես այդ պատահել էր այս տարի, սեպտեմբերին, ս. Էջմիածնում կայացած միջեկեղեցական ժողովի առիթով:

ղեցիների համաշխարհային խորհրդի՝ Նայրոբիում գումարված հինգերորդ համաժողովի արդյունքների և այդ համաժողովում հայ եկեղեցու մասնակցության մասին՝ շեշտելով համաժողովի կարևոր նշանակությունը մեր օրերի քրիստոնեական եկեղեցիների պատմության մեջ, հօգուտ եկեղեցիների ապագա ցանկալի միության և աշխարհի խաղաղության:

Նույն օրերին Կահիրեում էր գտնվում նաև, որպես հյուրը Ծենուդա Գ Սրբազան Պատրիարքի, ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Լե-

Ձեռնադրությունից մի պահ

Դեկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Կահիրեի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ս. պատարագ մատուցեց տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը և կատարեց երեք սարկավագների ձեռնադրությունը՝ իր խրատական քարոզի մեջ վեր հանելով այդ արարողության հոգևոր, ազգային նշանակությունը թեմի եկեղեցական կյանքի համար:

«Տէր, ողորմեա»-ից առաջ քարոզեց նաև տ. Շահե արքեպ. Ամենյանը, որը նախ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունը հաղորդեց եգիպտահայությանը, ապա հանգամանորեն խոսեց Եկե-

նինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմ արքեպիսկոպոսի:

Դեկտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Կահիրեի հայոց ազգային-եկեղեցական իշխանությանց սրտագին հրավերով, հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի այցելեց ռուս եկեղեցու պատվիրակությունը, որը հանդիսավորապես դիմավորվեց տ. Շահե, տ. Զավեն, տ. Արսեն սրբազանների, տ. Ներսեհ ծայր. վարդապետի, եկեղեցու քահանա հայրերի, թեմական և քաղաքական ժողովների անդամների, երեսփոխանների, եկեղեցու տիկնանց հանձնախմբի ու հայ մամուլի ներկայացուցիչների կողմից, և ապա տաճարի

զանգերի ղողանջների ներքո «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր տեղի ունեցավ էկումենիկ աղոթք: Արարողության ավարտին, հանուն եգիպտահայ համայնքի, առաջնորդական տեղապահ հայր ուրբը ֆրանսերեն մի ուղերձով ողջունեց ներկայությունը տ. Նիկոդիմ միտրոպոլիտի և ռուս եկեղեցու պատվիրակության մյուս անդամների՝ շեշտելով հայ և ռուս եկեղեցիների դարավոր բարեկամության կարևորությունը նաև մեր օրերին՝ էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում, բարեկամություն, որն Է՛լ ավելի է ամրապնդվում Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի գահակալության օրերին՝ հօգուտ քրիստոնեական եկեղեցիների սերտ համագործակցության, ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության:

Տ. Նիկոդիմ միտրոպոլիտն իր հերթին ռուսերեն մի ուղերձով շնորհակալությամբ և երախտագիտությամբ պատասխանեց տ. Ներսեհ ծայրագույն վարդապետի ողջույնի խոսքին, ջերմ գոհունակություն հայտնեց իր և ռուս եկեղեցու պատվիրակության հանդեպ Կահիրեի հայ համայնքի կողմից ցույց տրված եղբայրական այս սիրալիր վերաբերմունքի համար՝ վեր հանելով մանավանդ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի օրհնության ներքո և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հովվապետության օրով հայ եկեղեցու կատարած քրիստոնեական, մշակութային, հայրենասիրական ու խաղաղասիրական առաքելությունը հայ ժողովրդի ծոցում: Տ. Նիկոդիմ արքեպիսկոպոսը նույնքան կարևորությամբ անդրադարձավ մեր օրերին, հանուն ժողովուրդների եղբայրության և աշխարհի խաղաղության, ռուս և հայ եկեղեցիների համագործակցության և նրանց միջև քրիստոնեական կապերի ամրապնդման անհրաժեշտությանը:

Այնուհետև ռուս եկեղեցու պատվիրակությունն առաջնորդվեց տեղի հայոց առաջնորդարանի ընդունելությանց դահլիճ, ուր տեղի ունեցավ ջերմ ընդունելություն և հյուրասիրություն՝ ի պատիվ հյուրերի:

Այստեղ ևս տ. Նիկոդիմ միտրոպոլիտն ու տ. Շահե արքեպիսկոպոսը ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր փոխանակեցին ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, որոնք կրկին անգամ արտահայտում էին հայ և ռուս եղբայրական ժողովուրդների, ինչպես նաև երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող անքակտելի բարեկամությունը, մանավանդ մեր ազգային հայրենական վերածննդի այս օրերին:

Դեկտեմբերի 16-ին, երեքշաբթի օրը, տ. Շահե արքեպիսկոպոսը վերադարձավ Երուսաղեմ, իսկ տ. Արսեն եպիսկոպոսը և Պարգև Շահբազյանը, տ. Զավեն եպիսկոպոսի ուղեկցությամբ, մի քանի օրով այցելության մեկնեցին Ալեքսանդրիա:

Դեկտեմբերի 20-ին հայ եկեղեցու պատվիրակները վերադարձան Կահիրե:

Հետևյալ օրը, դեկտեմբերի 21-ին, տ. Արսեն եպիսկոպոսը պատարագեց և քարոզեց Կահիրեի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Կահիրեում և Ալեքսանդրիայում գտնվելու օրերին հայ եկեղեցու պատվիրակները հանգամանորեն հետաքրքրվեցին թեմի եկեղեցական, ազգային, մշակութային կյանքով, այցելեցին տեղի հայ մշակութային կենտրոնները, ջերմ մթնոլորտում հանդիպումներ և զրույցներ ունեցան եգիպտահայ համայնքի ազգային իշխանությանց ներկայացուցիչների ու ժողովրդի հետ և իրենց դասախոսություններով խանդավառեցին եգիպտահայությանը:

Դեկտեմբերի 21-ին Մայր Աթոռի պատվիրակները հրաժեշտ տվեցին տ. Զավեն եպիսկոպոսին, Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վարդապետին, ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներին և լավագույն տպավորություններով վերադարձան Մայր Աթոռ այն համոզումով, որ այսօր էլ եգիպտահայ տիրախնամ թեմը գտնվում է եկեղեցական, ազգային, մշակութային իր կենսունակության մեջ:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում . . . . . 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ա. Հ.—Ամանորի և սուրբ Ծննդյան խոհեր . . . . . 6

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . 9

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու ընդհանրական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին . . . . . 12

Նոր տարվա առթիվ փոխանակված հեռագրեր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև . . . . . 14

Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ . . . . . 16

Ա. Հ.—Ամանորյա և սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում . . . 17

Ա. Հ.—Ընդունելություն Վեհարանում՝ ի պատիվ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի . . . . . 21

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . 23

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ—Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը . . . . . 25

ԳՐՔԵՐԻ ՀԵՏ—Ա. Հ.—«Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս» . . . . . 31

Լ. ՀԱՋՅԱՆ—Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը Ի. Ա. Կոիլովի առակների թարգմանիչ . . . . . 36

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ—Մամիկոնյան (՞) սուրբ Մարիամ Նորավկայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը . . . . . 42

Եզնիկ վարդապետ Պետրոսյան . . . . . 50

Թևմական պատգամավորական ընտրություններ եգիպտահայ տիրախնամ թեմում 52

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱՋՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հինգերորդ համաժողովը . . . . . 54



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 4/I 1976 թ.: Ստորագրված է տպագրության 13/II 1976 թ.:
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 4

**Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1976 թ.**